

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(SCIENTIFIC JOURNAL)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

1 (24)



ՄԵՍՐՈԲ ԱՐԳ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆ ԱՇԱՐ
234

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
234

ԵՐԵՎԱՆ
2022

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Ա.Բ. Շահնազարյան (գլխավոր խմբագիր),
Ա. Ռ. Խոսրովա (ԱՄՆ), Խ. Բ. Գազեր (ԳՖՀ), Ի. Վ. Կրյուչկով (ՌԴ),
Հ.Ղ. Մուրադյան, Ռ.Օ. Սահակյան, Վ. Հ. Թորոսյան, Վ. Ս. Սարգսյան
(պատ. քարտուղար)

Редакционная коллегия

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель
председателя), А.И. Шахназарян (главный редактор), А. Р. Хосроева
(США), Х. Р. Газер (ФРГ), И. В. Крючков (РФ),
А.Г. Мурадян, Р. О. Саакян, В. Г. Торосян, В.С. Саргсян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (Chairman of the Board), K.H. Khachatryan (Deputy
Chairman of the Board), A.I. Shahnazaryan (editor-in-chief), A.R.
Khosroeva (USA), H.R. Gazer (FRG), I.V. Kryuchkov (RF), H.Gh.
Muradyan, R.O. Sahakyan, V.H. Torosyan, V.S. Sargsyan (Executive
Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերականի հերթական՝ 1 (24) համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա:

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ Ս. ԹՈՒԽԱԹՅԱՆ

ԳՄԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

karen.tokhatyan@gmail.com

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԲՆԵՐԵՎՈՒՑԹՆԵՐ***

Բանայի բառեր՝ ժայռապատկեր, հնագիտություն, Երկրագունդ, երկնային լուսատու, երկնային երևույթ, մթնոլորտային երևույթ, հրաբուխ

Ներածություն

Հայաստանի ժայռապատկերների բովանդակային բազմազանության մեջ որոշակիանում է չորս հիմնական ոլորտ՝ **բնույթ-յուն, մարդու առօրյա, արարման արդյունքներ** և **ներաշխարհ:**

Դրանցում առանձնանում է **31** թեմային խումբ. տեղանքի տարր, Երկրագունդ, երկնային լուսատու, երկնային երևույթ, օդերևույթ, երկրային երևույթ, բույս, կենդանիներ, գյուղատնտեսություն, որս, գազանամարտ, մարտարվեստ, մարզում, մրցախաղ, պար, զենք, գործիք, փոխադրամիջոց, շինվածք, կիրառական պատկեր, ուսուցման միջոց, խաղի պարագա, հագուստ, պաշտամունք, երևակայական էակ, ներպատկեր, դիմապատկեր, անորոշ պատկեր, զարդանախշ, խորհրդանշան, տառանման նշան:

Իհարկե, այս բաժանումը դեռևս բավականաչափ պայմանական է: Բնականաբար, այն կախված է ժայռապատկերի իմաստի ու գործառույթի հետագա առավել խոր ըմբռնումից և որոշակիացումից: Թեմաները հաճախ միահյուս են, սերտաճած, համա-

* Ներկայացվել է 3.V. 2022 թ., գրախոսվել է 13. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

լրող՝ անգամ մեկ ժայռանկարի հորինվածքում:

Բովանդակային խմբերի պատկերների և կատարողական-հորինվածքային ոճերի մեծ մասը հարատևել է հայոց մշակույթի մյուս ոլորտներում՝ խեցեղենի, արձանիկի, բրոնզե գոտու և նվիրատվական թիթեղի, հարթաքանդակի, որմնանկարի ու մանրանկարի իմաստաբանական հորինվածքում, զինանշանի, կնիքի և դրամի նկարվածքում, զենքի, խոյակի նախշագարդում, տարագում, մանածագործական ու հյուսածո իրերում և լրացվել նորանոր նշաններով¹:

Հարկ է ամրագրել, որ սկզբնապես՝ հնագույն ժայռապատկերներում, գրեթե բոլոր էակները, իրերը և երևույթները բնական ուրև է իրողության դիտման, պարզ կամ գեղարվեստորեն արտացոլման արդյունք են: Երբեմն առկա է իրականի ծիսականացում, գերբնականացում, երևակայական բովանդակություն: Մշակույթի հետագա փուլերում արդեն իսկ առավել շեշտվել է արարման ծիսական մտահղացումն ու խորհրդանշանային բնույթը՝ հատկապես, բրոնզե գոտու, կնիքի, քանդակի, մանրանկարի, զինանշանի և գորգի հորինվածքում:

1. Տեղանքի տարր խմբում են լեռան, գետի, լճի, աղբյուրի և անձավի նշանները /**աղ. 1/**: Տարածության մեջ կողմնորոշման համար հնուց ի վեր կիրառվել են խորհրդանշաններով գործող գրաֆիկական ու ճանաչողական պարզ ձևեր, որոնցով նշվել է տարածության արտահայտումը, տեսանելի բնապատկերի հետ կապը: Հնագույն մտածողական դաշտի պատկերային արտացոլման արդյունք ժայռանկարը նույնպես մի հզոր միջոց էր, որով մարդը հասկացել և արտահայտել է միջավայրում իր տեղը, ձևավորել իր սրբազան տարածքը: Շրջակա բնության հիմնական տարրերի՝ լեռան, գետի ու լճի, նաև ձորի, աղբյուրի և անձավի պաշտամունքն ակունքվում է անհիշելի ժամանակներից²:

Նավասարում է գազաթնամերձ երեք լճակների և դրանք միացնող վտակների գծապատկերը /**աղ. 16-7/**: Գեղամա լեռների

¹ Թոխաթյան 2016, 180-182, 195-197:

² Հնդեվլոպական ժողովուրդների միջավայրում բնության անշարժ տարրերի անվանումների և պաշտամունքի առթիվ տե՛ս Гамкрелидзе, Иванов 1984, 665-674:

Աստղաբերդ հնավայրում է ջրակունքի տեղը բլուրների միջև նշող ժայռապատկերը, իսկ Արդարանոց հնավայրի գծապատկերը նշում է մոտակա լճակ թափվող և արտահոսող առվակների տեղադրությունը /**աղ. 1**0-11/:

Գեղամա լեռների բարձրադիր հովիտներից մեկի վերնամասում (2660 մ) գտնվող յուրօրինակ ժայռապատկերը, ամենայն հավանականությամբ, ցուցադրում է արևմտյան կողմում մի շարքով վեր խոյացող Հայոց պաշտամունքային լեռներից երեքը՝ Հատիսը (2528 մ), Արալեռը (2577 մ) և Արագածը (4090 մ)³: Ակնառու են հատկապես երկգագաթ Հատիսի և լայն փոված կոնի ձևով Արալեռան ուրվագծերը: Արագածի «Դարավանդ» հնավայրի (3150 մ) մի ժայռանկարում աջից սուրանկյուններով պատկերված են այդտեղից պարզ դիտելի՝ Արագածի երեք գագաթները, իսկ ձախ կողմում՝ մայր մտնող Արևի ճառագայթավոր նշան /**աղ. 2**/:

Լեռ-եռանկյուն ու գետ-ալիքագիծ նշաններն առատ են խեցեղենի, դրվագված բրոնզե իրերի, տապանաքարերի նախշերում և այլն: Օր., Շամքորում ծարիրե կախազարդի վրա լեռնաշղթան նշվել է միակցված եռանկյունիների շարքով, իսկ Դվինում 1962 թ. պեղված պաշտամունքային կավե տախտակում՝ իրար ագուցված եռանկյունիների ձևով: Ուշագրավ է երկգագաթ լեռան ուրվագիծն Արտաշեսյան պղնձադրամների դարձերեսին⁴ /**աղ. 3**/:

2. Երկրագունդ խմբում խաչամիջուկ շրջանիկներ են, հաճախ մեկուսի՝ առանց որևէ կից նշանի: Այս կերպ սովորաբար Երկրագունդն է նշվել, իհարկե, նաև տվնջյան լուսատուն՝ Արեգակը: Շրջանի և քառակողմի մեկտեղման դրսևորում կա Միջագետքի Սամարահնավայրի (մ.թ.ա. III հազ. սկիզբ) կավե ըմ-

³ Այս երեք լեռները և դեպի հեռ՝ հարավ-արևելյան ուղղությամբ գտնվող Աժդահակ (3597մ) և Վարդենիս (3522 մ) գագաթները նույն գծի վրա են, ընդամենը 30 մ շեղմամբ (հինգ լեռները միացնող գծի ազիմուտը 296° է):

⁴ Դրամագետ Ռուբեն Վարդանյանը հիմնավոր էլ է, որ Արտաշատի դրամահատարանի 10 դրամներին դրոշմված է քաղաքից լավ տեսանելի Արարատը (Վարդանյան 2004, 234-253; Vardanyan 2005, 959-963, աղ. 1; Vardumyan 2016, 130, նկ. 16): Հավանաբար դրվագված է նաև Խորվիրապի բլուրը:

պանակի /bowl/ նկարագարում /աղ. 4/:

3. Երկնային լուսատու խմբում գերակշռում է Արևը /աղ. 5/, առատ են աստղի և աստղախմբի /աղ. 6/, Լուսնի և մոլորակի /աղ. 7/, համաստեղության ու Ծիր Կաթնի /աղ. 8-9/ նշաններն ու պատկերները: Երկինքը՝ «Ծով Ծիրանին» պատկերվել է գծիկով միացած երկու շրջանակներով, խորհրդանշորեն՝ նաև թռչնի գծանկարով: Տիեզերքին առնչվող հնագույն ընկալումների դրսևորում են խեցեղենի, բրոնզե գոտու (Վանաձոր, Տանձատափ, Մցխեթ, Կախեթ), շրջանաձև թիթեղի (Վարդաքար, Տուրքս) աստղանշանները: Լուսատուների նշանները լայնորեն կիրառվել են արձանիկի և զենքի զարդանախշում, դրանք առկա են կնիքի (Մեծամոր, Կարմիր Բլուր), կախիկի, հմայիլի և պահպանակի (Լճաշեն, Մեծամոր), Դվինի մեհյանի կավե կոթողի, դրամի /աղ. 16s-6/ և այլ հորինվածքներում: Ուշագրավ է Լճաշենի բրոնզե թիթեղը, որը մեկնաբանվել է որպես Արեգակնային համակարգի մանրակերտ /աղ. 10/: Աստղանշանների առատությունը բնորոշ է բիայնական տարագաձևերին, ինչի վառ օրինակ է Բզնունիքի Արծկե ամրոցի Թեյշեբա աստծու բարձրաքանդակը /աղ. 11/: «Արևի տաճարներին մարտակառքեր նվիրելու սովորությունն ընդունված էր ողջ Փոքր Ասիայում և Արևմուտքում»⁵:

Ժայռագիր նշանները փոխանցվեցին տապանաքարի, խաչքարի, որմնանկարի (Քոբայր, Լմբատավանք, Որոտնավանք), տարազի, կարպետի, գորգի, հյուսքի ու ժանյակի, դրվագված ու փորագրված իրերի (սկուտեղ, հմայիլ, դաղդղան, գաթանախշիկ) և տարեհացի նախշագարդին և այլն /աղ. 11/: Հնգաթև ու վեցաթև աստղանշաններով առատ են Դվինի և Անիի խեցեղենը, մանրանկարը, հոգևոր ու աշխարհիկ շենքերի հարդարանքը⁶:

Հայոց մեջ լուսատուների և Տիեզերքի մասին պատկերացումները զանազան վերապրուկների ձևով հարատևել են մինչ օրս: Լուսատուների, ախտարական⁷, աստղագուշական բովան-

⁵ Իսրայելյան Հ. 1973, 669: Տե՛ս նաև Тревел 1953, 129-130:

⁶ Ս. Հռիփսիմե, Սանահին, Կիրանց, Նոր Գետիկ, Սալտակավոր, Նորավանք, Թեղենյաց եկեղեցիներ, Անիում՝ Մայր տաճար, Պարոնի պալատ, Սարգսի տուն և այլն:

⁷ «Անունը գալիս է պալի. axtar «կենդանակերպ, համաստեղություն», պարսկ. āxtar

դակության պատկերներով, բլոբրակներով և աղյուսակներով հարուստ են որմնանկարը (Որոտնավանք), դրվագված իրերը, ձեռագրերը, հմայիլները և տպագիր գրքերը /**աղ. 12**/: Բազմաթիվ են Արևի, Լուսնի⁸ և աստղերի միջոցով գուշակությանն առնչվող ազգագրական ու բանահյուսական նյութերը:

Աստղատների ծիրում էական են Կենդանաշրջանի⁹ (հուն. Ζωδιακωσ) համաստեղությունները: Կարևոր է, որ դրանցից 11-ը (Խոյ, Յուլ, Երկաւոր, Խեցգետին, Առիւծ, Կոյս, Կշիռ, Կարիձ, Աղեղնաւոր, Այծեղջիր, Ջրհոս/Ջրահեղ) քարերին փորագրված են նշանի կամ էակի տեսքով /**աղ. 13**։-23/: Չկա միայն Ձուկն աստղատունը. հավանաբար այն հնում չի առանձնացվել՝ ձկան է նմանեցվել հետագայում: Փորագրված են նաև Կենդանաշրջանի գոտուց դուրս գտնվող Արծիվ, Կարապ, Շուն, Աղվեսիկ, Օձ, Օձակիր, Վիշապ, Քնար և այլ աստղատներին նման պատկերներ ու նշաններ /**աղ. 13**25-29/:

4. Երկնային երևույթ խմբում են երկնաքարի անկման՝ ասուպ երևույթի ժայռապատկերը Սևաբրի երկնադիտարանում /**աղ. 14**/ և գիսավոր հիշեցնող երկճյուղ նշանները /**աղ. 15**/: Մրանց եռաճյուղ տարբերակ կարելի է դիտարկել Պտղնավանքի, Արմաղանի գագաթի սալաքարերի և Տիգրան Մեծի դրամների նշանները /**աղ. 16**/: Կան նաև լուսնափուլի կամ լուսատուի խավարման նշումներ /**աղ. 17**/:

«աստղ, բախտ» բառից, ուստի հայերենում ուղիղ է և պետք է գրել ախտար, ոչ թե աղթար, ինչպես հաճախ ձեռագրերում պատահում է: Ախտարական արվեստը սկզբում սերտորեն կապված էր աստղաբաշխության (աստրոլոգիայի) հետ և հենց այդտեղից էլ ստացել է իր ախտար անունը» (Անասյան 1959, 425-426):

⁸ Միջնադարում տարածված էր խտիրքը՝ «ամսի օրերի կամ լուսնական օրերի խտրություն կամ ընտրություն՝ իբրև բարեգուշակ կամ չարագուշակ» (Մալխասեանց 1944, 306):

⁹ Ըստ Անանիա Ծիրակացու՝ *երկրոսասան ախտարականքն, որ կոչին կենդանսակերայք* (Աբրահամյան Ա. 1944, 326): Կենդանաշրջանի բացատրությանն ու նկարագրությանն անդրադարձել են մեր մյուս տոմարագետ մատենագիրները ևս, տե՛ս օր., Յոհաննիսի Երզնկացույ Վիպասանություն..., Է, 9; Յովհաննես Երզնկացի, Է, 241-242; Գիրք Հարցմանց ...Գրիգորի Տաթևացույն, հ. IV, ԻԳ, 189; Գրիգոր Տաթևացի, 265-266; Հակոբ Ղրիմեցի 1987, 107-109, 160-163, 257-262, 270-273 (ՄՄ 1114.70բ-73բ, 78ա-80բ):

5. Օդերևույթ խմբի պատկերներում գերակշռում է շանթ-կայծակը /**ադ. 18**/, ժողովրդական հավատալիքների Օովիան-Օովինարը: «Ամպրոպի լուսածնային երևույթը, որ գերմանացիները կոչում են թռչկոտող այծ կամ թռչկոտող ու հարվածող խոյ, հայերի մեջ կոչվում է *հրաչք* (Քամայանց Ս., Օովինար, Թիֆլիս, 1888, էջ 26): Սակայն դա օդերևութական կենդանակերպ ոգի չէ, այլ ամպրոպային մարդակերպ ոգի՝ հրեղեն աչքերով ...որ կայծակ է նշանակում: ...Հրաչք է համարվում նաև Օովյանը կամ Օովինարը, մի կույս, որ վերին երկնքում է ապրում (Բալասյանց, Ռոստոմ և Սալման, Թիֆլիս, 1896): ...Ամպրոպային մութ գիշերներին նա հանկարծ գլուխը հանում է ամպերի տակից և նայում ցած, այն ժամանակ փայլատակում է կամ *Օովյանը խաղում է* (Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 275) ամպերի վրա»¹⁰:

Մթնոլորտային մյուս երևույթներից առկա է ամպ, անձրևի շիթ ու ծիածանի աղեղ հիշեցնող մի քանի ժայռանկար: Աղեղնաձև ու զիզզազ նշանով, կայծակազարդով առատ են խեցեղենի, բրոնզե գոտու, մանրանկարի և գորգի հորինվածքները /**ադ. 18**/: Կայծականշանը ժայռանկարներում հաճախ կից է այծի կամ եղջերվի պատկերին: Հ.Ա. Մարտիրոսյանը կայծակ և այծ մեկտեղած պատկերներն առնչել է «*ինքը էժ, մէջքը պէժ*» հանելուկին, նշելով, որ ժայռանկարներում լայն տարածված՝ այծի երկեռանկյուն ոճով նշանն առկա է նաև բիայնական ու միջնադարյան մեհենագրերում՝ *դայակն, փայլակն* իմաստով¹¹: Այծի և դայակի գործառությանն աղերսը բանաստեղծորեն արտացոլվել է Նահապետ Քուչակին վերագրվող հայրենում. «Ի՞նչ մայր է զքեզ բերեր, ի՞նչ դայեկ՝ զքեզ սնուցեր, զքեզ եղն ի սարին բերեր»¹²:

¹⁰ Abeghian 1899, 83-86; Աբեղյան 1975, 70, 535-536: Տե՛ս նաև Ամատունի 1912, 316; Անատեան 1913, 523; Вардунян 1991, 72-73; Վարդումյան 2011, 123-125; Վարդումյան 2017, 69:

¹¹ Abeghian 1899, 78; Աբեղյան 1975, 66, 530; Մարտիրոսյան, Իսրայելյան 1971, 15: Տե՛ս նաև Վասիլյան 1985, 47-48:

¹² Հայրեններ, 278; Չոպանեան 1930, 11; Աբեղյան 1931, 170; Աբեղյան 1967, 242: «Այստեղ ամեն բառ ու պատկեր և հենց հայրենն ինքը զարմանալու չափ դիցարանական հզոր շունչ ունեն, ասես ինչ-որ առասպելական մայր սա երգել է տիեզերա-

Մոր, դայակի, այծի (եղնիկ) ու կայծակի իմաստաբանական այս կապը լրացվում է դիցաբանական մի ուղղակի վկայությամբ. Կիպրոս կղզու մի անձավում մանուկ Ջևսի ստնտուն էր Ամալթեա այծը:

6. Երկրային երևույթ խմբում է Վարդենիսի լեռների Փորակ լեռան ժայթքման պատկերը¹³: Այն գործել է մ.թ.ա. VIII դ., իսկ մինչ այդ՝ նաև V հազ. կեսերին: Ավելի որոշակի է բուն Հայաստանից արևմուտք, Կոնիայի դաշտի նորքարիդարյան Եղանիկ հնավայրի /Catal hüyük/ որմնանկարը (մ.թ.ա. 6150 թ.), որն արտացոլում է 130 կմ հյուսիս-արևմուտքում գտնվող Հրասար /Hassan Dağ/ լեռան ժայթքումը¹⁴ /**աղ. 19**/:

Ենթադրաբար, Շոփի Արշամ Բ արքայի՝ Դիոսկուրների գլխարկներով դրամներում (մ.թ.ա. 230 թ.) դրվագված է Արգեուսի մ.թ.ա. 253 թ. հավանական ժայթքումը, որն է այլ ծխացող լեռ կամ 30 կմ հեռվում դեռևս շարունակվող՝ մեթանի արտահոսքի երևույթը /**աղ. 313**/:

Եզրակացություններ

Այսպիսով, հնադարի մարդը ներդաշնակ էր շրջակա բնությանը: Նա անսովոր չէր վերերկրյա և երկրային ահեղ բներևույթներին, որ իր առօրյա իրականության անբաժան մասն էին: Բնական է, որ ծագած վախն ու ակնածանքը, ձևավորված հավատալիքն ու պաշտամունքը ծեսի և պատկերավորման հիմք են դարձել՝ արտացոլվել ժայռապատկերներում:

Բնությունն ու բներևույթ արտացոլող ժայռապատկերներն իրենց իմաստաբանությամբ ու գործառույթով մի ամբողջություն են կազմում, որը լիարժեքորեն միավորում է վաղնջական մարդկանց մտածողական ոլորտները:

կան տարերքից ելած մանկիկ Վահագնի օրորոցի մոտ» (Վասիլյան 1985, 48-50):

¹³ Տե՛ս Ավագյան Ա. 2019, 223, նկ. 4.37:

¹⁴ Տե՛ս Mellaart 1967, 133, նկ. 59-60:



1



2



3




4




5

լեռան կշաններ




6



7



8



9

լճեր ու վտակներ, Նավասար

գետեր



10



11

աղբյուրի տեղը՝ շրջակա բլուրների սկատամաք

ոռոգման ինքնաշխատ համակարգ



12




13



14


աղբյուրներ

քարանձավներ.



15

Ակկեքար (Կորճայք)



1 մի շարքում գտնվող Ջատիսի, Արալեռան և Արագածի ժայռապատկերը, Գեղամա լեռներից



2



4



3

Արագածի երեք գագաթները, մայր մտնող Արևը և Երկրի կողմեր նշող խաչ

Տեղանքի տարրեր

աղյուսակ 3



1
Եղանիկ (Կոնիա), մ.թ.ա. VI հազ.



2
Զեթի (Շիրակ) քրեղան, մ.թ.ա. XXVIII դ.



3
գավաթ, մ.թ.ա. XV-XIV դդ



4
Միսիան, մ.թ.ա. XXVIII դ.



5
Շամքոր, մ.թ.ա. III հազ.



6
բրոնզե գոտի, Շիրակ



7
Ջայոց լեռները, Բալավաթյան դարպաս, մ.թ.ա. IX դ.



8
տապանաքար, Որոտնավանք, XI դ.



9
կավե կրթող, Դվին, մ.թ.ա. X-IX դդ.



10
քրեղան, Զեթի (Շիրակ), մ.թ.ա. XVII-XVI դդ.



11
Արարատ լեռը, Տիգրան Դ արքայի և Էրատո թագուհու դրամներ, մ.թ.ա. 2 - մ.թ. 1 թթ.

12
Արգեուս լեռը (?) Արշամ Բ արքայի դրամ, մ.թ.ա. 230 թ.



1



2



3



4



5



6



7



8



9

Երկիր, այծ, աստղ

Տարուկ (Սաուդյան Արաբիա)

ընկանակ, Սամարա (Իրաք) մ.թ.ա. VI-IV հազ.



1

ծագող Արև




2



3

Արևներ



4

աստղ



5

աստղախումբ, Լճաշեն



6

Ծիր Կաթին, Սևսար



7

համաստեղություններ. «Արծիվ»



8

«Առյուծ», Վարդենյաց լեռնանցք



9

մոլորակներ (?)



10

Լուսին



1
աստղեր



2
Գեղամա լեռներ



3
Սևաար



4
«Բոլբ» աստղախումբ.



5
Ագարակ



6
Լճաշեն



7
աստղախմբեր, Ագարակ



«Բոլբ» աստղախումբը



1

մոլորակներ (?)



2



3

Արևն ու Լուսինը միաժամանակ



4



5



6



7

Լուսնի մահիկաձև պատկերներ



8

Կիսալուսին



9

Լուսնափուլեր (տարբեր ժայռապատկերների հավաքածու)



Վարդենիսյաց լեռնանցք, «Առյուծ» համաստեղության ժայռապատկերը հարավ-արևելքից



«Առյուծ»-ի ուրվագիծը կավճաջրով ընդգծված քարի վրա, հյուսիս-արևմուտքից հատված




4

Հայկ և Յուլ համաստեղությունները



5

Նույնը՝ Յան Բեվելիուսի ատլասում (1690 թ.)



6



1




2

Ծիր Կաթին աստղաշերտի հատվածներ, մայրության սշաններով, Սևասր



3

Ծիր Կաթին մի հատված, աստափ թռիչքի ուղղությունը նշող երեք կորագծերը, Սևասր



4

Ծիր Կաթին աստղաշերտի մի հատված. սալաքար, Աստապատ (Նախիջևան)

Երկնային լուսատուներ

աղյուսակ 10



1 մ.թ.ա. III-II հազ. Շամքոր



2 Մեծամոր



3 Սիսիան




4 Զեթի, մ.թ.ա. XXX դ.



5



6



7


բրոնզե հնայիլներ, Մեծամոր, մ.թ.ա. III-II հազ.

կապե կոթողի բեկոր, Դվին, մ.թ.ա. XIII դ.



8

մ.թ.ա. XII դ.



9



10



11

բրոնզե կախազարդեր, Գորիս, Լճաշեն



12



13

Լուսին, Կարմիր Բլուր

բրոնզե մանրակերտներ Տղորս, Լճաշեն, մ.թ.ա. XIII դ.

Լուսին, Արև և հինգ մուրրակ, ծիսական զրոշանոցի զարդ, մ.թ.ա. ~820 թ.



14

Արթիկ, մ.թ.ա. XII դ.



15

բրոնզե գոտիներ, Կանաձոր, Տանձատափ



16



1



2



3

որմանակար, Զորայր, XIII դ. խաչքար, Գոշավանք, 1290 թ. տապանաքար, Արատես, 1602 թ.




4

«Վահան» գորգ, Գեղարքունիք, 1860 թ.




Թելչեբա, Արծկե



7

«Տարի» հաց, Արու (Տավախք), 1965 թ.



5

ա. Գորգ, Գորիս, 1838 թ, շԿԿԲ

բ. Գորգ, Գորիս, 1838 թ

գ. Գորգ, Սյունիք, XIX դ., շԿԿԲ

դ. Գորգեր, Սյունիք-Արցախ, XIX-XX դդ., շԿԿԲ

ե. խուրճին, Ջանշապին, 1912 թ

զ. Գորգ, Արևմտյան Ղարաբաղ, XIX դ., շԿԿԲ

աստղանշաններ Գեղամա լեռների ժայռապատկերներում և գորգերում



1 որմնանկար, Որոտնավանք, XI դ.



2 բրոնզե սկուտեղ, Ջուղա, 1477 թ.



3 սկահակ, XIX դ.



4 Կենդանաշրջանի գոտի, «Ախտաք», Յ. Մեղապարտ, 1513 թ.



5 Կենդանակերպերը և մարդու մարմնի մասերը, Կաֆա, 1445 թ.



Կենդանակերպերի նշանները հայկական ձեռագրերում

♈ ♉ ♊ ♋ ♌ ♍ ♎ ♏ ♐ ♑ ♒ ♓


Կենդանաշրջանի համաստեղությունների նշանները



Կենդանաշրջանի, մարմնի մասերի և ազգերի կապը, 1722 թ.



2 3
խոյ



7 8
ցուլ



9 10
երկվորյակներ

11
խեցգետին


12
առյուծ

13 14
«Կոյս»



15 16
կարիճ

18 19 20
աղեղնավոր



21
«Այծեղջիր»

22 23
Ջրիոս



1 2 3 4 5 6 7 8 9 10 11
խոյ Ցուլ Եկառոր խեցգետին Առիւծ Կոյս Կշիռ Կարիճ Աղեղնաւոր Այծեղջիր Ջրիոս Ձուկն



25 26 27 28 29
այլ համաստեղութիւնների էակներ՝ արծիվ, կարապ, շուն, աղվես, օձ, օձակիր, վիշապ





Վալկամունիկա, մ.թ.ա. V-II դդ.



1



2

սալաքար և տապանաքար, Արմաղանի գագաթ, միջնադար



3



4

Ս. Բռիփսիմեն (խորանի ձախ պատին) և Պտղնավանք (իս. պատին): Կառուցված են VII դ.



5



6

մ.թ.ա. 87 թ. դիտված Բալլեյի գիսավորի նշանը թագի վրա, Տիգրան Մեծի արծաթադրամներ



Լուսատուի խավարման փուլերի (կամ Լուսնի փուլերի) արտահայտություն



կայծակնացայտ, շանթածիգ ոգիներ



շանթ-կայծակ

շանթ-կայծակ, օձավիշապ, այծ




կայծակազարդ, ալիք, Շենգավիթ, մ.թ.ա. XXV դ.

ամպ, անձրև, երկևուրտ (մ.թ.ա. III-II հազ., Մեծամոր սափոր, Դիլիջան



ալիք, Դվին, X-IX դդ. կայծակազարդեր. բրոնզե գոտի, Մեղեչաուր գորդ «Խնձորեսկ», XIX դ



ամպեր ու անձրևի շիթեր



Վարդենիսի լեռների Փորակ հրաբխի ժայթքման պատկերը, Սխտորասար (Զարվաճառի լեռներ)



Հրասար հրաբխի ժայթքման որմնապատկերը. Եղանիկ (Կոնիայի դաշտ), մ.թ.ա. 6150 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Գիրք Հարցմանց Երիցս երանեալ Սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն, 1729 (ՌՃՀԸ), Կ.Պօլիս, 808 էջ:
- Գրիգոր Տաթևացի, 2020, Գիրք Հարցմանց, գրաբարից թարգմ. բ.գ.թ. Սուսաննա Գրիգորյանի (խմբագր. և ծանոթագր.՝ փ.գ.դ., պրոֆ. Ն. Քյոսեյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 1015 էջ:
- Հակոբ Ղրիմեցի, 1987, Տոմարագիտական աշխատություններ, աշխ. Ջ.Ա. Էյնաթյանի, Երևան, «ՀՄՍՀ ԳԱ», 393 էջ:
- Յոհաննիսի Երզնկացոյ Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն՝ որ ի նմա, և զհաստատութենէ երկրի, 1792, Նոր Նախիջևան, «տպարան Ս. Խաչ վանքի», 74 էջ:
- Յովհաննէս Երզնկացի, 2013, Մատենագրութիւն, հ. Ա. Ճառեր եւ քարոզներ, բնագրերը հրատարակության պատրաստեցին Արմենուհի Երզնկացի-Տէր-Սրապյանը եւ Էդվարդ Բաղդասարյանը, ներածականները Էդ. Բաղդասարյանի, Երևան, «Նաիրի», 670 էջ:
- Աբեղյան Մ. 1931, Հին գուսանական ժողովրդական երգեր.- ԵՊՀ Տեղեկագիր, Երևան, «ԵՊՀ», 260 էջ:
- Աբեղյան Մ. 1967, Երկեր, Երևան, «ՀՄՍՀ ԳԱ», հ. Բ, 388 էջ:
- Աբեղյան Մ. 1975, Երկեր, Երևան, «ՀՄՍՀ ԳԱ», հ. Է, 603 էջ:
- Աբրահամյան Ա.Գ. 1944, Անանիա Շիրակացոյ մատենագրությունը, Երևան, «ՀՄՍՌ Մատենադարան», 419 էջ:
- Աճառեան Հր. 1913, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, «Տպ. Աղանեանց», 1141 էջ:
- Ամատունի Մ. վրդ. 1912, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 708 էջ:
- Անասյան Հ.Ս. 1959, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, «ՀՄՍՌ ԳԱ», 1228 էջ:
- Ավագյան Ա.Վ. 2019, Ակտիվ խզվածքների մերձակերևութային դրսևորումները, Երևան, «Գիտություն», 294 էջ:
- Թոխաթյան Կ. 2016, Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը.- ՊԲՀ, №2, էջ 180-198:
- Իսրայելյան Հ.Ռ. 1973, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում (ըստ հնագիտական նյութերի), Երևան, «ՀՄՍՀ ԳԱ», 172 էջ:
- Հայրեններ, 1995, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Շ. Մնացականյանի, Երևան, «Նաիրի», 1096 էջ:

- Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, Երևան, «ՀՍՍՌ Պետհրատ», հ. II, 512 էջ:
- Մարտիրոսյան Հ.Ա., Իսրայելյան Հ.Ռ. 1971, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները 6, պր. II, Երևան, «ՀՍՄՀ ԳԱ», 66 էջ, 333 նկ.:
- Չօպանեան Ա. 1930, Քուչակեան անտիպ տաղեր.- «Անահիտ». հանդէս մտածման եւ արուեստի, Փարիզ, Բ, 4, էջ 4-11:
- Վասիլյան Վ.Ռ. 1985, Առասպելներից մինչև Բյուրական, Երևան, «Սովետական գրող», 224 էջ:
- Վարդանյան Ռ. 2004, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ.- «Պատմա-բանասիրական հանդէս», №2, էջ 234-253:
- Վարդումյան Գ. 2011, Ջրի պաշտամունքը Հայոց մեջ.- «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում». «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, «Սուղնի», էջ 121-127:
- Վարդումյան Գ. 2017, Դիցաբանության արտացոլումը հին հայկական դրամներում.- «Գիտության աշխարհում», №2, էջ 10-15:
- Вардумян Г.Д. 1991, Дохристианские культуры Армян.- Армянская этнография и фольклор, 18, Ереван, «АН Армении», с. 60-146, 24 табл.
- Гамкрелидзе Т.В., Иванов Вяч.Вс. 1984, Индоевропейский язык и индоевропейцы, т. 1-2, Тбилиси, «Тбилисский университет», 1409 с.
- Тревер К.В. 1953, Очерки по истории культуры древней Армении (II в. до н.э. – IV в. н.э.), Москва-Ленинград, «АН СССР», 293+XXIII с., 90 табл.
- Abeghian M. 1899, Der armenische Volksglaube. Inaugural-dissertation, Leipzig, “Druck von W. Drugulin”, 127 S.
- Mellaart J. 1967, Çatal Hüyük: A Neolithic Town in Anatolia, London, “Tames & Hudson”, 232 p., 136 plates.
- Vardanyan R. 2005, Une émission de bronze arménienne du IIe siècle après J.-C.- Actas del XIII Congreso Internacional de Numismática, Madrid, p. 959-964.
- Vardumyan G.D. 2016, Manifestations of Mythological Images on Ancient Armenian Coins.- Fundamental Armenology, Yerevan, №2 (4), p. 123-131 <fundamentalarmenology.am/datas/pdfs/365.pdf>.

Карен С. Тохатян, Институт истории НАН РА, к.и.н., Содержание петроглифов Армении: природа и природные явления.

Резюме

Наскальные изображения отражают большую часть основных сфер деятельности древних армян, представляя собой целостную систему выражения жизненных реалий и мировоззрения дописьменной эпохи. Они тесно и гармонично связаны с окружающей природно-исторической средой, где и сформировали культурный ландшафт.

Среди тематического разнообразия петроглифов Армении выделяются четыре основные сферы: природа, повседневная жизнь человека, плоды его созидания, его внутренний мир. В статье рассматриваются петроглифы, представляющие элементы местности, Земля, небесные светила и явления, атмосферные явления, вулканы.

Наблюдаются теснейшие связи между наскальным искусством и другими сферами армянской культуры. Тематика, стиль и типы древнейших петроглифов пронесли через века, неизменно и почти идентично найдя выражение в керамике, на бронзовых поясах, барельефах, статуэтках и печатях, хачкарах, на коврах и фресках Ванского царства и средневековья, достигнув своего апогея в миниатюрах.

Петроглифы, изображающие природу и природные явления составляют единое целое, что объединяет ментальные сферы древних людей.

Ключевые слова: Наскальные изображения, петроглифы, археология, Земля, небесные светила, небесные явления, атмосферные явления, вулканы.

Karen S. Tokhatyan, Institute of History of the NAS RA, Cd. of Sci. in History, The content of petroglyphs of Armenia: nature and natural phenomena.

Summary

Rock carvings reflect the most of the principal activities of ancient Armenians, representing a complete system of expression of life realities and worldview in the pre-literate era. They are closely and harmoniously inter-

twined with the surrounding natural and historical environment, forming the cultural landscape.

In the thematic diversity of petroglyphs, four main spheres are defined: nature, everyday life of a human, the results of human creativity, his inner world. The article discusses petroglyphs representing terrain elements, the Earth, luminaries, celestial phenomena, atmospheric phenomena, and volcanoes.

Close ties between rock-art and other spheres of Armenian culture are observed. The themes, style and types of ancient petroglyphs have passed on through centuries, invariably and almost identically reflected in ceramics, on bronze belts, bas-reliefs, statuettes and seals, khachkars, on carpets and frescoes of the Van Kingdom and those of the Middle Ages, reaching their apogee in miniatures.

Petroglyphs depicting nature and natural phenomena form a holistic system, which unites the mental spheres of ancient people.

Key words: Rock art, petroglyphs, archaeology, Earth, celestial luminaries, heavenly phenomena, atmospheric phenomena, volcanoes.

ASHOT A. MELKONYAN
Institute of History of the NAS RA
Dr. of Sc. in History, Professor, Academician of the NAS RA
ashamelk@yahoo.com

THE ANCIENT AND MEDIEVAL STAGES OF ARMENIAN STATEHOOD*

Key words: statehood, ancient period, Middle Ages, kingdom, Aratta, Hayasa, satrapy, marzpanate.

Introduction

It is essential to consider the existence of both paramount socio-economic and political preconditions when observing the problem of periodization of the history of each country and nation. As a rule, the ethno-formation and statehood development processes, often taking place concurrently, are of primary significance for periodization. It is no coincidence that, in most cases, the concept of statehood formation and development directly underlies the periodization of the history of nations. In that sense, the periodization of Armenian history is largely conditioned by the circumstances of the existence of statehood or its ideological manifestations. Furthermore, ancient, medieval, modern and contemporary periods of history mainly correspond to the statehood development phases. Consequently, the periodization of the history of Armenian statehood can also be conventionally divided into the four historical stages mentioned above: ancient, medieval, modern and contemporary.

* Submitted on 27.IV.2022, reviewed on 09.V.2022, accepted for publication on 22.VI.2022.

The early statehood era of ancient Armenia

Encompasses a period from primordial times up to the end of the 4th c. AD, which in its turn can be divided into the following sub-phases: a) earliest statehoods: from the 3rd millennium BC to the 9th c. BC (Aratta, Armanum, Arme-Shubria, Togarma, Hayasa, Nairi, Daya, Etiuni, etc.), b) united statehoods: from the 9th c. BC to the end of the 4th c. AD (Van or Araratian (Biainili, Urartu) kingdom, Orontids, Artaxiads, and in the last period of Arsacids' reign, the division of Armenia in 387 AD).

The approaches of both Armenian and foreign authors to the origin of ancient Armenian statehood, that is, to **the earliest period**, often differ radically. For a long time, the prevailing opinion was that the formation of the Armenian statehood could be talked about at best after the collapse of the Urartu state (i.e., the kingdom of Biainili, Ararat, Van) in the 9th-6th cc. BC, when the representatives of the Armenian Orontid (Yervanduni) dynasty came to power, who ruled intermittently in Greater Armenia, Lesser Armenia, Sophene (Tsopk) and Commagene in the 6th-3th cc. BC¹. Moreover, many considered the end of the formation of the Armenian nation and the united Armenian statehood to be the first half of the 2th c. BC, that is, the period of unification of the Armenian lands by Artaxias I². In our opinion, such an approach to “rejuvenate” the native history was conditioned by the desire to see the kingdom of Van, called “Urartu” in the Assyrian inscriptions, as a non-Armenian state, and thus to be consentaneous with European historical schools.

However, at the same time, those authors had to admit that there existed formations, “tribal unions” in their use of terminology, in the Armenian Highland before Urartu, whose were reminiscent of their Armenian origins: Armanum, Arme-Shubria, Hayasa-Azzi, Etiuni, Nairi, Daya, etc. What is strange is that, though the leaders of

¹ Հայ ժողովրդի պատմություն 1971, 435-463, 500-516.

² See Հայ ժողովրդի պատմություն 1975, 82-83.

those formations are often mentioned as kings in sources, the formations they led were still called tribal unions. Thus, in the inscriptions of the rulers of the famous Hittite Empire in the 15th-14th cc. BC, the leaders of their enemy state Hayasa – Karanni, Hukkana, and Ania were called kings, nevertheless, in various texts, their status was arbitrarily relegated from king to chieftain, and the royal court of that state was considered a “tribal military council of elders”³. Whereas, in this case, ethnically Armenian states and their Armenian kings are meant. Fortunately, as orientalists A. Kosyan and R. Ghazaryan rightly mention, a number of foreign scholars (A. Goetze, H. Gutterbok, etc.), based on the evidence of sources, also emphasize that the abovementioned rulers of Hayasa were really kings, especially since they had a regular army consisting of 700 chariots and an infantry unit of 10,000 soldiers, forming the basis of state security⁴.

After gaining independence, some Armenian historians, partially reconsidering the previous approaches, proposed the view that the first states of the Armenian Highland arose not from the middle of the 1st millennium BC, during the reign of the Yervanduni, but from the 2nd millennium. However, that viewpoint was also soon reconsidered.

Studies of recent decades have led to the conviction, that the notions about both the origin of the Armenian people and the nature of the formations evolved on the Armenian Highland need to be fundamentally reviewed. It is clear that the processes of nation-state formation actually occur almost concurrently, or rather, the end of

³ “Hayasa-Azzi,” we read in the first academic edition of the History of the Armenian People, “certainly, should also be viewed as a tribal union, although Hittite sources call its ruler “King”, ... with the “King” of Hayasa ... the assembly of the (inter-ethnic) military council of elders comes together” (Հայ ժողովրդի պատմություն 1971, 196).

⁴ See Քոսյան 2004, 136. Ղազարյան 2009, 84-85.

the ethno-formation logically leads to the germination of the state.

From the standpoint of reviewing the previous conceptual approaches, Artak Movsisyan's inferences are of outstanding significance. Through the examination of the problem he concludes that the first formations of the Armenian Highland possessed all of the characteristics typical of a state (territory, population, ability to exercise public rights, system of government, sovereignty, etc.), and the ancient state known to us among them is Aratta, mentioned in the 28th-27th cc. BC⁵.

The fact, that the formations existing in the Armenian Highland in the 3rd-2th millennia BC had the status of states, is confirmed also through the excavations carried out by Armenian archaeologists. The thing is that the presence of urban planning, in particular, high-quality fortification, pottery, jewelry, tools, viticulture, grain farming, etc., suggests that such a level could not be provided in a tribal society. Naturally, the existence of a state was necessary for the creation of all that⁶.

Thus, most Armenian researchers agree on the existence of statehood in the Armenian Highland in the 3rd-2nd millennia BC. However, a group of specialists still insists that, although these formations existed in the Armenian Highland, it is impossible to speak about them as Armenian state structures. And it is assumed, that most of them probably had a non-Armenian ethnic profile or, at best, Armenians had just begun to appear and set a tone in that state.

In any case, at least a common opinion has been formed that the earliest states, starting from Aratta, germinated in the Armenian Highland from the Early Bronze Age, almost the same age as the first states of the Ancient World – Egypt, Akkad and Sumer. As a rule, they were formations independent of each other or united within

⁵ See Մովսիսյան, Դանիելյան 2010, 21-28.

⁶ See Խանդավազյան 1967. Սիմոնյան 2003, 9-10.

one confederation.

In the 9th c. BC the first **united statehood** arose on the Armenian Highland – the Kingdom of Van or Ararat (Biainili, Urartu) that not only unified the Armenian state formations of the highland around itself, but also became the most powerful in Asia Anterior in the first half of the 9th c. BC. From the time of the Kingdom of Van to the 4th c. AD the borders of the ancient Armenian state at least covered the historical-geographical region of Greater Armenia, from time to time including neighboring countries, and in the uplifting periods of the reigns of kings of Biaini Argishti I, Sarduri II (786-743 BC) and Artaxiad Tigranes II the Great (95-55 BC) they also reached the Mediterranean Sea and the Persian Gulf. In the era of ancient Armenian statehood, an integral system of state administration was formed, numerous elements of which were preserved in later times.

The medieval statehood

stage presents the time period lying between the end of the 4th c. AD until the middle of the 17th c. The first phase (**early medieval statehood**) begins with the first division of Armenia and ends in the second half of the 9th c. with the establishment of the Bagratid Kingdom. In AD 387, Eastern Armenia fell under the Persian hegemony, and Western Armenia under the hegemony of the Roman Empire (from 395 AD – Byzantium). The Armenian statehood was on the verge of deterioration. However, representatives of the Armenian Arsacid royal kin continued to reign in both parts of Armenia for the time being. The Arsacid kingdom declined after the death of Arshak III in Western Armenia in AD 391 and the overthrow of King Artaxias III (Artashir) in AD 428.

However, with the fall of the Arsacid, only the kingdom diminished, and new state formations took hold in Eastern Armenia with a marzpan and in Western Armenia with satrapic institutions based on the principle of *nakharar system*. An expert on the issue,

Nicolas Adontz, states that “the *nakharar* system, with its stability, is such a typical and remarkable phenomenon that scientific understanding and correct coverage of the ancient life and history of Armenians is impossible without it ... Throughout that long period, the *nakharar* state system was a powerful political factor and, one could argue, the lever of the Armenian history: the *Nakhararoutiuns* were the hotspots of political freedom scattered throughout the country... That time, the external dependence of the country was combined with the internal independence, and in that way the originality of the country was ensured”⁷.

After 428 AD, the power in Eastern Armenia passed from the king on to the nobility. The country paid tribute to the Sassanids, but the military power retained control of the *Nakhararoutiuns*. According to historian Yeghishe, when by the Persian court “he (King Artaxias – A. M.) was also removed from the Kingdom, the latter was left to the Armenian *nakharars*: as despite the fact that the royal treasures passed to the Persian court, however the whole Armenian cavalry was in the hands of the *nakharars*, who led it to war”⁸.

Thus, the *marzpan* replacing the king undertook a number of his functions, almost all of the state positions of power that existed in the time of the Arsacids were preserved: the office of Hazarapet, the post of Sparapet, the position of the Great Judge, etc. Especially noteworthy is the retention of *Malkhazoutiune*, that is, the position of the head of the king’s bodyguard, in case there was no longer king. At that, not only the positions were preserved, but also, in many cases, the tradition of handing them over to their former owners, the famous *nakharar* houses – the Mamikonian, the Amatuni, the Khorkhoruni.

It is not difficult to guess that the aforementioned *nakharars*

⁷ Ադոնց 1987, 241.

⁸ Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին 1957, 6.

were now obliged to provide services to the *marzpan* replacing the king, who was now the governor of Eastern Armenia, and should present the Armenian *nakharars* and affairs related to the country before the Persian court. It is no coincidence that the governor was also known as the Landlord of Armenia. After the Vahanants war, when Persia recognized the right of Armenians to live autonomously in Eastern Armenia and temporarily ceased religious persecutions, another state was created under the leadership of Vachagan the Pious in the Eastern Frontiers of Armenia – in Artsakh and Utik.

The satrap system, being a peculiar manifestation of the early medieval Armenian statehood, persisted for a long time in Western Armenia, too, until the reforms of Emperor Justinian I (527-565), where there were five satrapies. Their governor-satraps were making use of internal autonomy⁹.

Certainly, both the Persian and the Byzantine courts gradually weakened the Armenian autonomies in various stages over time, especially through subdivision of *nakharar* estates, but they still were not able to completely eliminate them before the Arab invasions. Moreover, even after the Arab invasions, taking advantage of the aggravation of the Arab-Byzantine conflict, a number of prominent figures of the Armenian ministerial class (Theodoros Rshtuni, Varaztirots Bagratuni, etc.) organized a struggle, due to which a remarkable and united princely state was established in the second half of the 7th c. AD and elements of internal autonomy were preserved in the administrative unit of Arminiya in the 8th c. AD.

“Armenia never lost its internal autonomy during the Arabic period, it was never administratively disorganized, moreover, being part of the Caliphate’s province of “Arminiya”, it retained its peculiar administrative and political face,” Arabist Aram Ter-Ghevondyan writes. During this period Armenia was ruled by the

⁹ For details on the autonomous authorities of Western Armenia, see Արմնյոյ 1987, 39-146.

Armenian Prince, who, though subordinate to the *ostikan* of Arminiya, was the real ruler of the country's affairs"¹⁰. According to the same scholar, the internal autonomy of Armenia and neighboring Iberia, unlike other countries under the caliphate, was due to the preservation of hereditary landownership there, thanks to which Armenians and Georgians "preserved their language and culture and created an independent state in the 9th c."¹¹.

In the Middle Ages, **the developed feudal statehood stage** refers to the rise of the Bagratid and to the period of the new Armenian states (Vaspurakan, Vanand, Tashir-Dzoraget, Syunik kingdoms, Taron, Taik, Hamshen, Samtskhe-Saatabago princedoms, Aranshahik, Zakarid, Vahramian principalities, Armenian state of Cilicia, etc.) from the middle of the 9th c. to the end of the 14th c.

As in many countries of the world, in Armenia, too, due to the new level of development of feudal system, a number of small and medium state formations appeared side by side with the Armenian central state, consequently feudal fragmentation commenced. But if after a while, in most European countries this fragmentation was overcome and soon centralized monarchies (autocracies) were formed, in Armenia, as a consequence of the Seljuk, Mongol and Turkmen tribes, Tamerlane invasions, Persian-Turkish long and bloody wars, the state formations weakened more and more and, with the exception of a number of mountainous regions, disappeared in most parts of the country. Outside the homeland, in the northeastern coastal regions of the Mediterranean Sea, where a large number of Armenians accumulated due to the mass emigration from Armenia, several Armenian formations were being formed in the 9th c., the most viable of which appeared to be the Rubenid princedom, which in 1198 was turned into a kingdom by Levon II the Magnificent and became one of the strongest states in

¹⁰ Տէր-Ղևոնդյան 2003 Ա, 133.

¹¹ Տէր-Ղևոնդյան 2003 Բ, 299.

the region.

The last stage in the history of the state in the Middle Ages can be considered **the period of attempts to restore the kingdom** (from the 15th c. to the middle of the 17th c.), when, after the fall of the Cilician state (1375), in Vaspurakan and in other places steps were taken to restore it.

After the fall of the kingdom, the idea of statehood was so powerful that, despite the seemingly impossible situation, the Armenian social circles continued to make attempts towards restoring it. Due to the heroic struggle of the Armenian population against the foreign invaders in different parts of Cilicia, especially in the mountainous regions, it became possible to preserve separate fragments of the kingdom and sovereign formations until the third decade of the 15th c.¹².

The principality of Khachen, which had maintained its sovereignty in Artsakh since the 10th c., and the principalities founded in Javakhk in 1266 by Sarkis Jaghetsi – the lord of Tmuk fortress, existed the longest among the state formations of the developed feudal period.

“In the late medieval Armenia,” B. Ulubabyan writes, “under the crushing blows of the Tatar-Mongol incursions, and then the Aq-Qoyunlu-Qara-Qoyunlu Turks following them, the Armenian principalities were destroyed, and Khachen was almost the only place where fragments of the Armenian statehood was preserved and where the flames of the Armenian political freedom were still burning ...”¹³. According to the renowned novelist Raffi, the descendants of the princely families (ruling houses) that have survived in Artsakh, neighboring cantons and other regions of North-Eastern Armenia (Hasan-Jalalyan, Dopian, Orbelian, Melik-Shahnazaryan, etc.) never lost their “right to autonomy” and formed

¹² See Թիխոնյան 2011, 129-154.

¹³ Ուլուբաբյան 1975, 6.

Armenian melikdoms¹⁴.

Taking advantage of the conflict between the Georgian kings and the Mongols, Sarkis Jaghetsi was able to create a spacious principality, which soon encompassed the territory from Tashir to Erzurum. The local prince bore the title of atabek, whose (for whom the) authority was also known as Saatabago (i.e., subordinate to atabek). In Armenian sources it is referred to as “Land of Princes”¹⁵. Both during the reign of the Bagratid, the Zakarid, and the successors of the latter – the Jaghetsi, economic and cultural life in Javakhk and in other regions of the principality (atabekoutiun) experienced a significant uplifting. This princely state was maintained till the end of the 16th c., when it was occupied by the Ottoman Turks¹⁶.

At that time, the Armenian Church again played a significant role, assuming certain functions of the Armenian state. It is not accidental, that in 1441 the Catholicosate was returned from Cilicia, which had already been deprived of statehood, to native Etchmiadzin. From then on, the Armenian catholicoi led the liberation struggle. The delegations, formed as a result of the secret meetings convened by Catholicos Stepanos Salmastetsi in Etchmiadzin in 1547 and Catholicos Mikael Sebastatsi in Sebastia in 1562, left for Europe with the mission to receive support for the liberation of Armenia from the Pope and the European potentates. The representatives of the Armenian secular landowners tried to find a way out of that inextricable situation. Many of them transfer their lands to the Armenian Church, day by day handling more and more Armenian social and economic life, and they enter the service in

¹⁴ On the autonomous status of the Armenian meliks, the armed forces, the judiciary, and other manifestations representing the statehood created by them in general, see in detail Ըաֆֆի 1959, 396-510. Ուլուբաբյան 1975. Մաղալյան 2007, etc.

¹⁵ Վարդանայ Վարդապետի Աշխարհացոյց ամենայն տիեզերաց 1887, 138 and Լեօ 1919, 105. According to Hakobos Tashyan, Kiskim and Tortum were also included within this principality (Տաշյան 1973, 61).

¹⁶ See on this princely state Մելքոնյան 2003, 56-63.

the church-owned estates, too. Such landowners became known as landlords. In such a way it became possible to protect, to some extent, the right of property of the Armenian landowners under the Turkish-Persian dominance.

The vivid manifestation of the emphasized aspiration to restore the statehood in the homeland was the fact, that Smbat Sefedinyan, the nephew of Catholicos Zakaria of Akhtamar, was proclaimed king in Akhtamar in 1465. Unfortunately, Smbat's power extended only over Akhtamar and a few other districts of Vaspurakan and existed until 1471¹⁷. Nevertheless, as A. Utujyan properly observed, this event left a great impression on the Armenians, as "For one brief moment Smbat Sefedinyan reminded his contemporaries of the glories of the past of Vapurakan, and, why not, of all Armenia"¹⁸.

Conclusions

A comprehensive study of the history of Armenian statehood not only provides opportunities for manifesting new approaches to this issue, but also paves the way for a radical revision of the issue at the conceptual level. The researches of the last decades bring clarity to the ethnic nature of the first state formations evolved in the Armenian Highland, the time of their emergence, geographical boundaries, the presence of statehood features and other issues. It is already beyond doubt that in the borderline of the 4th-3rd millennia BC, it could be discussed about the first state formations, and from the middle of the 9th century BC – about the Pan-Armenian statehood.

The history of medieval Armenian statehood also needs serious revision. The previously accepted viewpoint that the early medieval Armenian statehood disappeared in Eastern Armenia in 428

¹⁷ See in detail Ուլթուղեան 1999, 107-122.

¹⁸ Ուլթուղեան 1999, 119.

AD with the fall of the Arsacids can no longer stand up to criticism. The higher form of direct statehood – the kingdom, is replaced by another form – the marzpan order, along with the ministerial or landlord system. The situation was almost the same in Western Armenia during the period of Byzantine influence, where five sovereign Armenian satrapies existed.

In the Middle Ages, the higher stage of the history of Armenian statehood is marked in the period of the Bagratuni kingdom (9th-11th cc.) and the Armenian state of Cilicia (11th-14th cc.).

BIBLIOGRAPHY

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում, Երևան, «Հայաստան» հրատ., 639 էջ:

Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին 1957, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 224 էջ:

Թինոյան Դ. 2011, Կիլիկիո Հայոց թագավորությունը 1320-1424 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 195 էջ:

Լեօ, 1919, Սահմանավեճեր: Լոռի-Ախալքալաք.Ղարաբաղ, Թիֆլիս, Տպ. «Աշխատաւոր», 172 էջ:

Խանգաղյան Է. Վ. 1967, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, ԳԱ հրատ., 117 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1971, հ.1, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 991 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1975, Երևան, ԵՊՀ հրատ., 783 էջ:

Ղազարյան Ռ. 2009, Հայասա. Քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, Լուսակն հրատ., 119 էջ:

Մաղալյան Ա. 2007, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 327 էջ:

Մելքոնյան Ա. Ա. 2003, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին (պատմաքննական ուսումնասիրություն), Երևան, «Զանգակ-97» հրատ., 500 էջ:

Մովսիսյան Ա., Դանիելյան Ե. 2010, Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման խնդրի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 130.1, էջ 21-28:

Միմոնյան Հ. 2003, Հայկական լեռնաշխարհում հնագույն

քաղաքակրթության և պետական կազմավորումների առաջացման խնդրի շուրջ (ըստ հնագիտական տվյալների), Հայոց հին պատմության հիմնահարցեր: Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Գիտաժողովի զեկուցումների հիմնադրություններ, Երևան, էջ 9-10:

Վարդանայ Վարդապետի Աշխարհացոյց ամենայն տիեզերաց 1887, «Բազմավեպ», հ. ԽԵ, էջ 134-144:

Տաշյան Հ. 1973, Տայք, Դրացիք և Խոտորջուր, Վիեննա, Ազգային Մատենադարան, ՄԺԷ, 304 էջ:

Տեր Ղևոնդյան Ա. 2003 Ա, «Հայոց իշխան»ը արաբական տիրապետության շրջանում, էջ 92-105, Տեր Ղևոնդյան Ա. 2003 Բ, Հայ նախարարների հողատիրական իրավունքները 7-9-րդ դարերում ըստ Խալիֆայության պայմանագրերի, էջ 285-299, Հոդվածների ժողովածու, Երևան, Երևանի պետ. համալս. հրատ., 712 էջ:

Րաֆֆի 1959, Խամսայի մեկիքությունները, Երկերի ժողովածու, հ.10, Երևան, «Հայպետհրատ», 709 էջ:

Ուլուբաբյան Բ. 1975, Խաչենի իշխանությունը X-XIV դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 453 էջ:

Ութուջեան Ա. 1999, Հայկական պետականության վերականգնման փորձ ԺԵ. դարի կեսերին, «Հայկազեան հայագիտական հանդես», ԺԹ, էջ 107-122:

Քոսյան Ա. 2004, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, «Զանգակ 97», 168 էջ:

artashes.shahnazaryan1950@gmail.com

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆԻ
ՇԻՐԱԿԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ*
(ՇՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բանալի բառեր՝ Անանիա Շիրակացի, Հ. Բարթիկյան, Արատոս Սոլացի, Եվդոքսոս Կնիդացի, Մեսրոպ Մաշտոց, Մատենադարան, Փիլոն Տիրակացի, Սոկրատ, Գ. Աբգարյան:

Ներածություն

Հայ միջնադարյան բնագիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչ՝ մաթեմատիկոս, աշխարհագետ ու փիլիսոփա Անանիա Շիրակացու դժվար գերազնահատելի մատենագրական ժառանգությունը հասկանալի պատճառներով եղել ու մնում է հայ և օտար հայագետների տեսադաշտում՝ հանդիսանալով քննության առարկա: Այն արժանացել է նաև անվանի հայագետ-բյուզանդագետ Հ. Բարթիկյանի ուշադրությանը: Անանիա Շիրակացուն համարելով հայկական միջնադարի ամենալուսավոր դեմքերից մեկը՝ Հ. Բարթիկյանը դրել է նրա, իբրև մտածողի, մասին լիարժեք ու ճիշտ պատկերացում կազմելու անհրաժեշտությունը: Նա կարծել է, որ դրան հասնելու համար հարկ է կատարված աշխատանքը բավարար չհամարելով անել հետևյալը. ա) Անանիա Շիրակացու հեղինակած երկերը զատել սխալմամբ նրան վերագր-

* Ներկայացվել է 15.IV. 2022թ., գրախոսվել է 13.V. 2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

վածներից, բ) ճշտել, թե նա իսկապես ի՞նչ աղբյուրներից է օգտվել, գ) պարզել, թե նա հին աշխարհի ո՞ր գիտնականների նվաճումներին է արձագանքել, դ) ի՞նչ է ավելացրել մինչ իրեն եղած ուսումնասիրությունների վրա¹: Առանց այս ամենը նշել է, գտել է նա, «մեծ մտածողի մասին մեր ունեցած պատկերացումը կլինի որոշ չափով սահմանափակ, հաճախ նաև ոչ ճիշտ»²:

Ելնելով իր իսկ առաջադրած պահանջներից, Հ. Բարթիկյանն իրեն բնորոշ մանրակրկիտությամբ քննության առարկա է դարձրել Անանիա Շիրակացուն վերագրվող երկու երկերի՝ «Յաղագս ամպոց և նշանաց» օղերնութաբանական բովանդակությամբ աշխատության ու «Ժամանակագրության» հեղինակային պատկանելության հարցերը: Ընդ որում, դրանցից առաջինին նա անդրադարձել է երկու, իսկ երկրորդին՝ մեկ հոդվածով:

«Յաղագս ամպոց և նշանաց»

Այս երկին Հ. Բարթիկյանը նախ անդրադարձել է «Արատոս Սոլացու «Διοσημεια» կամ «Προγνωστικα» աշխատության հին հայերեն թարգմանությունը» խորագրով հոդվածով³: Հոդվածի խորագիրն իսկ ընթերցողին հուշում է, որ նա սերտ կապեր է տեսել Արատոս Սոլացու այդ աշխատության, նրա հին հայերեն թարգմանության ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի միջև:

Հ. Բարթիկյանը նախ ներկայացրել է Մակեդոնիայի արքունական բանաստեղծ Արատոս Սոլացու (Ք. ա. 315-

¹ Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

² Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

³ Տե՛ս Բարթիկյան 1964, 331-363:

240/239) կյանքն ու գրական գործունեությունը, նրան բնութագրելով իբրև ավեքսանդրյան պոեզիայի և մշակույթի ամենափայլուն ներկայացուցիչներից մեկի⁴: Նշելով, որ Արատոսի բազմաթիվ գործերից մեզ է հասել նրա լոկ «Ֆենոմեա» չափածո երկը, Հ. Բարթիկյանը գտել է, որ այն իրականում նշանավոր աստղաբաշխ Եվդոքսոս Կնիդացու (Ք. ա. 408-356) մեզ չհասած օդերևութաբանական արձակ երկն է, որն Արատոսը վեր է ածել չափածո պոեմի⁵: Ապա Հ. Բարթիկյանը նկատել է, որ նրա երկրորդ մասը, ուր մանրամասնորեն խոսվում է եղանակը կանխագուշակող նշանների մասին, վերնագրված է «Դիոսեմեա» կամ «Պրոգնոստիկա»: Դրանից հետո նա մեթոդապես ճիշտ վարվելով նաև անդրադարձել է «Յաղագս ամպոց և նշանաց»-ի հեղինակային պատկանելության շուրջ հայագիտության մեջ տեղ գտած կարծիքներին: Ապա անցել է այդ երկի չափածո բնագրի ու դրա հին հայերեն արձակ թարգմանության համեմատությանը՝ կատարելով համապատասխան եզրահանգումներ:

«Յաղագս ամպոց և նշանաց»-ի մասին Հ. Բարթիկյանի շարադրանքը համառոտ այսպիսին է: Պարզվում է, որ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Ղուկաս գրչի ձեռքով ընդօրինակված 971 թ. մի ձեռագիր⁶: Դրանում զետեղված է սկզբից թերատ մի երկ, որը գտնվում է Անանիա Շիրակացուն պատկանող բնագրերի շարքում և անմիջապես կից է նրա ճառերին: Այս բնագիրը հայտնաբերել և առաջինը հրատարակել է Գ. Տեր-Մկրտչյանը⁷: Նա XV դ.

⁴ Տե՛ս Բարթիկյան 1964, 113-117:

⁵ Տե՛ս Բարթիկյան 1964, 332:

⁶ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2679:

⁷ Տե՛ս Տեր-Մկրտչյան 1896, 100-104:

թվագրվող մի ձեռագրում հայտնաբերելով այդ նույն բնագրի «Յաղագս ամպոց և նշանաց» վերնագրված համառոտագրությունը, նույն կերպ է խորագրել իր հրատարակած բնագիրը:

Ըստ Հ. Բարթիկյանի, ելնելով այդ երկի ու Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» մի քանի հատվածների նույնականությունից, նա ոչ միայն չի բացառել, այլև հավանական է համարել այդ բնագիրը մեծ բնագետի գրչի արգասիք լինելը: Ընդ որում, նա իր ենթադրությունը փորձել է հաստատել այդ երկի բովանդակության մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Գ. Տեր-Մկրտչյանը մասնավորապես նկատել է, որ դրանում «Շատ տեղ նայն իմաստները, գրեթե միևնույն բառերով, կրկնուում են այս գրուածքի և Շիրակունու ծանօթ երկասիրութեանց մէջ»⁸, գլխավորապես նկատի ունենալով Անանիա Շիրակացու «Յաղագս երկնի» աշխատությունը: Դրա հետ մեկտեղ, նկատել է Հ. Բարթիկյանը, ելնելով այդ բնագրում օգտագործված հունարեն բառերից և դիտողություններից որոշների, ինչպիսին է, օրինակ, կղզիների մասին տեսությունը, Գ. Տեր-Մկրտչյանը հակված է եղել այն մտքին, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ը ոչ թե բնագիր է, այլ՝ թարգմանական գործ⁹:

Հ. Թորոսյանն իր հերթին Գ. Տեր-Մկրտչյանից անմիջապես հետո անդրադառնալով այդ երկի հեղինակային պատկանելությանը, գտել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ն «ուրիշ բան չէ, բայց եթե հաւաքում մի այլևայլ օղային եր-

⁸ Տեր-Մկրտչյան 1896, 97:

⁹ Տե՛ս Տեր-Մկրտչյան 1896, 99:

նութից կամ գուշակութեանց, թարգմանեալ յայլևայլ գրոց»¹⁰:
Հ. Բարթիկյանը դա համարել է «անհիմն ու սխալ ենթադրություն»¹¹:

«Յաղագս ամպոց և նշանաց»-ի բնագրի երկրորդ հրատարակիչն Ա. Աբրահամյանն է: Այդ երկի քննությունը նրան հիմք է տվել ենթադրելու, որ «Գալուստ Տեր-Մկրտչյանի հրատարակած տեքստը Շիրակացու տոմարի մի հատվածն է հանդիսացել»¹²: Հ. Բարթիկյանը նկատել է, որ Ա. Աբրահամյանն այդ երկը բնագիր, թե թարգմանական գործ հանդիսանալուն չի անդրադարձել և մատնանշել այդ հրատարակության որոշ անճշտություններ¹³:

Հ. Բարթիկյանը չի անտեսել նաև խնդրո առարկա երկի ռուսերեն թարգմանությամբ հրատարակությունը¹⁴: Նա նշել է, որ թարգմանիչներն այն թարգմանչական գործ լինելու հավանականության մասին Գ. Տեր-Մկրտչյանի վերոբերյալ կարծիքին անդրադառնալով միաժամանակ մատնացույց են արել, որ այն շատ մոտ է Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» օդերևութաբանական համապատասխան բաժնին, որը նմանօրինակ մոտեցում ունի օդերևութաբանական երևույթների նկատմամբ և անգամ կան տառացի համընկնող տեղեր: Այս ամենից թարգմանիչները եզրակացրել են, որ եթե նույնիսկ «Յաղագս ամպոց և նշանաց»-ը թարգմանական գործ է, ուշագրավ է որպես Անանիա Շիրակացու «Տիեզերա-

¹⁰ Թորոսյան 1896, 220:

¹¹ Բարթիկյան 1971, 139:

¹² Աբրահամյան 1944, 138:

¹³ Տե՛ս Բարթիկյան 1964, 336-337:

¹⁴ Տե՛ս Ширакаци 1962, 108-117:

գիտության» աղբյուրներից մեկը¹⁵:

Համապատասխան քննությունը Հ. Բարթիկյանին թույլ է տվել պարզելու, որ Արատոս Սուլացու «Դիոսեմեա» պոեմը հայերեն թարգմանվել է վաղ միջնադարում՝ ոչ ուշ քան VII դարը, և որ Գ. Տեր-Մկրտչյանի 1896 թ. «Արարատ» հանդեսում Անանիա Շիրակացու անունով հրատարակած «Յաղագս ամպոց և նշանաց» տեքստը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Դիոսեմեա»-յի արձակ թարգմանությունը: Նա միաժամանակ կարծել է, որ Գ. Տեր-Մկրտչյանը միանգամայն իրավացի է եղել, երբ հայկական տեքստի հանգամանալի քննությամբ եզրահանգել է, որ նշված տեքստը հայ հեղինակի ոչ թե բնագիր, այլ թարգմանական գործ է, հնարավոր է՝ Անանիա Շիրակացու կողմից կատարված¹⁶:

Հոդվածի երկրորդ՝ վերջին մասում, ինչպես վերը նշվեց, Հ. Բարթիկյանը զուգահեռաբար բերել է Արատոս Սուլացու աշխատության հունարեն չափածո բնագիրը և նրա հին հայերեն արձակ թարգմանությունը: Դրանց համեմատությունից նա եզրակացրել է, որ հին հայերեն թարգմանությունը «Դիոսեմեա»-յի 51-261 տողերի ոչ ուշ քան VII դ. կատարված թարգմանությունն է: Նա նաև նկատել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ի տողերից 26-ն ու վերջին կես էջ ընդմիջարկությունն Արատոս Սուլացու չափածո երկում չկան: Ելնելով այդ իրողությունից և Արատոս Սուլացու սկզբնաղբյուրն աստղաբաշխ Եվդոքսոս Կնիդացու վերոհիշյալ մեզ չհասած աշխատությունը հանդիսանալուց, Հ. Բարթիկյանը շատ զգուշորեն առաջ է քաշել «Յաղագս ամպոց և

¹⁵ Տե՛ս Մ. Շիրակացի 1962, 337:

¹⁶ Տե՛ս Հ. Բարթիկյան 1964, 362:

նշանաց»-ն անմիջականորեն Եվրոքոս Կնիդացու երկից թարգմանված լինելու վարկածը, հարցի լուծումը թողնելով արատոսագետներին¹⁷:

Բացի այդ, Հ. Բարթիկյանը «Դիոսեմեա»-յի բնագրի շնորհիվ բացահայտել է «Յաղագս ամպոց և նշանաց»-ում տեղ գտած մի շարք բառերի (աղաղանչ, աստղակտուց, Կոփիք, պատիշովն, տրդկունք) մութ իմաստը իմաստը¹⁸:

Տարիներ անց, Հ. Բարթիկյանի հողվածի հետ կապված «Յաղագս ամպոց և նշանաց» երկն արժանացավ հմուտ հայագետ-բանասեր Գ. Աբգարյանի ուշադրությանը¹⁹: Նրա կարծիքով այն Արատոս Սոլացու երկի թարգմանությունը չէ և որ Հ. Բարթիկյանի բերած գուգահեռ տեքստերը, ոչ թե ցույց են տալիս «Յաղագս նշանաց»-ի ու Արատոս Սոլացու երկի նույնությունը, այլ «իրականում բացահայտում են նրանց տարբերությունները»²⁰: Գ. Աբգարյանը նաև պնդել է, որ Հ. Բարթիկյանի կողմից «ոչ մի բանասիրական փաստարկ չի բերված հոգուտ այդ բանաստեղծության (Արատոս Սոլացու չափածո երկի – Ա. Շ.) և «Յաղագս ամպոց և նշանաց»-ի նույնության: Ընթերցողը չգիտե, թե ինչ հիմունքներով է «Յաղագս նշանաց»-ը համարվել Արատոս Սոլացու թարգմանությունը»²¹: Հ. Բարթիկյանի տեսակետը համարելով ամենամեծ թյուրիմացություն՝ Գ. Աբգարյանը գտել է, որ դրա հիմքում հավանաբար ընկած է «Գ. Զարբհանայանի մի թռուցիկ դիտողությունը, որի համաձայն Անանիա Շիրակացու աշխատություննե-

¹⁷ Տե՛ս Բարթիկյան 1964, 359:

¹⁸ Տե՛ս Բարթիկյան 1964, 360-361:

¹⁹ Տե՛ս Աբգարյան 1971, 77-94:

²⁰ Աբգարյան 1971, 84:

²¹ Աբգարյան 1971, 21:

րում հանդիպում է Արատոսի «Յաղագս միաւորութեան գնդին» երկից քաղված «աստեղաբաշխական բանք»²²: Նա նաև նկատել է, որ «Հ. Բարթիկյանը ծանոթ չլինելով Հ. Թորոսյանի աշխատությանը, որի մեջ արդեն ցույց է տրված, որ «Յաղագս նշանացը» կազմված է Բարսեղ Կեսարացու հայերեն թարգմանությունից (V դար) հետո՝ սույն երկը վերագրել է այդ թարգմանությունից շուրջ 800 տարի առաջ ապրած Արատոս Սոլացուն»²³: Այնուհետև ելնելով Բարսեղ Կեսարացու «Վեցօրեա ճառերի» ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի ընդհանուր հատվածներից, նա գտել է, որ վերջին երկի հեղինակն օգտվել է Բարսեղ Կեսարացու երկի հայերեն մի թարգմանությունից, որը ոչ մի կապ չունի Արատոս Սոլացու չափածո գործի հետ²⁴:

Գ. Աբգարյանը նաև զգալի տարբերություններ է տեսել վերջինիս ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի միջև, պնդելով, որ դրանք Հ. Բարթիկյանը չի նկատել: Արդյունքում նա Արատոս Սոլացու «Դիոսեմիա»-ն անգամ «Յաղագս ամպոց և նշանաց»-ի աղբյուրների շարքում չի դասել, գտնելով, որ այդ երկու աշխատությունների միջև ընդհանրությունների հետքն անգամ չկա: Պատճառն այն է, որ ըստ նրա վերջինս ոչ թե հունարեն մի ամբողջական աղբյուրի թարգմանություն է, այլ՝ արդեն պատրաստի հայերեն զանազան թարգմանություններից, այդ թվում «Գիրք վաստակոց»-ից քաղված նյութերի հավաքածու²⁵: Ջարգացնելով իր տեսակետը, Գ. Աբգարյանը գտել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ի «առաջին ու հիմ-

²² Աբգարյան 1971, 77:

²³ Աբգարյան 1971, 77:

²⁴ Տե՛ս Աբգարյան 1971, 79:

²⁵ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

նական մասի» հիմքում ամենայն հավանականությամբ ընկած է Եվդոքսու Կնիդացու երկից մի հատված, որը VII դ. թարգմանել է Անանիա Շիրակացին²⁶: Իբրև իր այդ կարծիքի հիմնավորում նա գրել է, որ «ավելի հին ժամանակներում (V-VI դդ.) մենք չենք գտնում Շիրակացուց առավել հարմար մի գիտնական, որը հունարենից թարգմանած լիներ Եվդոքսու Կնիդացու (կամ մեկ ուրիշի) օդերևութաբանական ձեռնարկը»²⁷:

Գ. Աբգարյանն անդրադառնալով «Յաղագս ամպոց և նշանաց»-ի վերջին կես էջ ընդմիջարկությանը՝ կարծիք է հայտնել, որ այն «հավանաբար կազմվել է Անանիա Շիրակացուց հետո»²⁸: Բացի այդ, ըստ նրա Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 1973 ձեռագրի հետ 971 թ. ընդօրինակված թիվ 2679 ձեռագրի համեմատությունից պարզվում է, որ Անանիա Շիրակացու թարգմանությունն ամբողջությամբ մեզ չի հասել²⁹:

Ամփոփելով իր դիտարկումները, որոնց մի մասին չանդրադարձանք, Գ. Աբգարյանը պնդել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ն անձանոթ հեղինակի կազմած ժողովածու է, որը սխալմամբ է վերագրվել Անանիա Շիրակացուն: Ըստ նրա՝ դրանում օգտագործված են զանազան հեղինակների գործեր: Դրանցից գլխավորը Եվդոքսու Կնիդացուն պատկանող մի օդերևութաբանական աշխատություն է, որը կապ չունի Արատոս Մոլացու հետ: Ըստ Գ. Աբգարյանի, Եվդոքսուի այդ երկը VII դ. հայերեն է թարգմանել Անանիա Շիրակա-

²⁶ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

²⁷ Աբգարյան 1971, 89:

²⁸ Աբգարյան 1971, 90:

²⁹ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

ցին³⁰:

Ինչպես և պետք էր սպասել, Հ. Բարթիկյանը հակադարձեց Գ. Աբգարյանին, բայց ոչ թե նրա նման տարիներ անց, այլ՝ նույն տարում և նույն հանդեսում³¹: Ընթերցողին բանավեճի բուն նյութին ծանոթացնելուց հետո նա հենց սկզբից հայտնելով, որ փաստերը Գ. Աբգարյանի տեսակետները չեն հաստատում՝ անցել է դրանց հերքմանը:

Գ. Զարբհանալանյանի թռուցիկ դիտողությունն իրեն թյուրիմացության մեջ գցած չլինելն ու Հ. Թորոսյանի աշխատությանը քաջածանոթ լինելը հիմնավորելուց հետո Հ. Բարթիկյանը նկատել է, որ ինքը «Յաղագս ամպոց և նշանաց»-ի հունարեն բնագիրն է վերագրել Արատոս Սոլացուն և ոչ թե նրա՝ մեկ հազարամյակ անց կատարված հայերեն թարգմանությունը³²: Դառնալով Արատոս Սոլացու բանաստեղծության ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի միջև Գ. Աբգարյանի նկատած տարբերություններին նա ցույց է տվել, որ դրանք Արատոսի գործի գերմաներեն թարգմանությունը նրա կողմից հայերեն չափածո թարգմանելու ընթացքում կատարած «բազմաթիվ պլաստիկ վիրահատությունների» արդյունք են³³:

Ինչ վերաբերում է «Գիրք վաստակոց»-ը, բայց ոչ երբեք Արատոս Սոլացու բանաստեղծությունը «Յաղագս ամպոց և նշանաց»-ի սկզբնաղբյուրներից մեկը հանդիսանալու մասին Գ. Աբգարյանի կարծիքին, ապա Հ. Բարթիկյանը հիմնավոր ապացուցել է, որ այն X դ. տարբեր հեղինակներից, այդ թվում և Արատոս Սոլացուց կատարված բանաքաղություն է, ինչը

³⁰ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

³¹ Տե՛ս Բարթիկյան 1971, 134-150:

³² Տե՛ս Բարթիկյան 1971, 139:

³³ Տե՛ս Բարթիկյան 1971, 140-141:

բարեխղճորեն արձանագրել է նրա կազմողը³⁴։ Դրանից ելնելով նա հիմնագուրկ է համարել Գ. Աբգարյանի պնդումն առ այն, որ Արատոսի բանաստեղծության մեջ «չկա անգամ հետքն այն ընդհանրությունների, որոնք գտնում ենք «Գիրք վաստակոցում» և այլ նմանօրինակ աղբյուրներում»³⁵։

Հ. Բարթիկյանն այնուհետև անհիմն է համարել իրականում Գ. Տեր-Մկրտչյանի հետևությամբ Գ. Աբգարյանի կողմից «Յաղագս ամպոց և նշանաց»-ի թարգմանությունն Անանիա Շիրակացուն վերագրելը, պնդելով, որ եթե նրանցից առաջինն իր ենթադրությունը հաստատելու համար ինչ-որ հիմքեր է փնտրել, ապա երկրորդը բավարարվել է V-VII դարերում դրա համար Անանիա Շիրակացուց առավել հարմար գիտնական գտնված չլինելու պատճառաբանությամբ³⁶։ Իր միտքը շարունակելով՝ Հ. Բարթիկյանը գրել է. «Ստացվում է, որ որևէ երկի թարգմանիչը որոշելու գործում կարևորը այդ երկի համար «առավել հարմար» թարգմանիչ փնտրել, գտնելն է, և ոչ թե այդ երկի բազմակողմանի ուսումնասիրությունը։ Մի կողմ թողած առաջ քաշված «փաստարկի» ոչ լուրջ լինելը, ժամանակը չէ՞, արդյոք, որ վերջապես ձերբազատվենք ողջ հայ միջնադարի ճշգրիտ գիտությունների մասին խոսելիս սոսկ Անանիա Շիրակացու անունը հոլովելուց»³⁷։ Հ. Բարթիկյանի այս հարցադրման հետ դժվար է չհամաձայնվել։

Սպասելի էր, որ Գ. Աբգարյանը, իր իսկ սկսած բանավեճը կշարունակեր, սակայն նա այդպես չվարվեց։ Պատճառը, թերևս պետք է փնտրել նրա կողմից Հ. Բարթիկյանի բե-

³⁴ Տե՛ս Բարթիկյան 1971, 141-142։

³⁵ Բարթիկյան 1971, 88։

³⁶ Տե՛ս Բարթիկյան 1971, 144։

³⁷ Բարթիկյան 1971, 144։

րած հակափաստարկներն ընդունվելու մեջ:

Ժամանակագրություն

Անանիա Շիրակացուն վերագրված մյուս աշխատությունը, որին անդրադարձել է Հ. Բարթիկյանը, ինչպես վերը նշվեց, «Ժամանակագրությունն» է: Այն «Յադագս ամպոց և նշանաց»-ի նման մեզ է հասել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2769 ձեռագրում: Այն հրատարակել են Բ. Սարգիսյանը և Ա. Աբրահամյանը³⁸:

«Ժամանակագրության» հեղինակային պատկանելության ճշտմանը նվիրված հոդվածի³⁹ հենց սկզբում Հ. Բարթիկյանը նկատել է, որ «Յադագս ամպոց և նշանաց» երկի իսկական հեղինակին հայտնաբերելուց հետո Անանիա Շիրակացու գրական ժառանգության ճշտորոշման ուղղությամբ աշխատանքը շարունակելով կանգ է առել նրան վերագրված «Ժամանակագրության» վրա⁴⁰:

Շարունակելով նա նշել է, որ գրեթե անտեսելով անցյալում այդ երկի ուսումնասիրությամբ զբաղված գիտնականների ձեռքբերումները, այժմ աներկբա «Ժամանակագրություն»-ն ամբողջությամբ վերագրվում է Անանիա Շիրակացուն: Արդյունքում ստեղծվել է այն տպավորությունը, որ դրանով, իբր, հայկական միջնադարի խոշորագույն նվաճողներից մեկը մի աստիճանով բարձրացվում է⁴¹:

Հ. Բարթիկյանն այնուհետև անդրադարձել է «Ժամանակագրության» քննությամբ զբաղված նախորդ հետազո-

³⁸ Տե՛ս Սարգիսյան 1904: Աբրահամյան 1944, 357-400:

³⁹ Տե՛ս Բարթիկյան 1967, 57-77:

⁴⁰ Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

⁴¹ Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

տողների՝ Գ. Խալաթյանցի, Ֆ. Ֆինկի, Բ. Սարգիսյանի, Ա. Աբրահամյանի ու Հ. Անասյանի պրպտումներին և գտել, որ նրանք բոլորն ունեն «Ժամանակագրությունը» կամ Անանիա Շիրակացու գրչին պատկանելու, կամ էլ ծայրահեղ դեպքում նրա կողմից խմբագրվելու համոզմունքը⁴²:

Ի տարբերություն նրանց՝ Հ. Բարթիկյանը «Ժամանակագրության» աղբյուրագիտական հիմնավոր քննությամբ եզրահանգել է, որ այն մի երկ է, ուր իրար են կցված տարբեր աղբյուրներ ու հեղինակների գործեր, առանց նկատվելու, որ այդ տվյալները հաճախ իրարամերժ են: Իբրև իր եզրակացության հաստատում՝ նա բերել է «Ժամանակագրությունում» երիցս հիշատակվող Ալեքսանդր Մամյա կայսեր օրինակը: Ցույց տալով, որ առաջին անգամ նրա գահակալության տարիների թիվը 12 է նշված, երկրորդ անգամ՝ 3, իսկ երրորդ անգամ՝ 14, Հ. Բարթիկյանն իրավացիորեն նկատել է, որ «Անանիա Շիրակացու նման մի գիտնական նման բան գրել կամ խմբագրել չէր կարող»⁴³:

Դրանով չբավարարվելով՝ նա վկայակոչել է «Ժամանակագրություն»-ում հանդիպող ժամանակագրական կարգի այլ աղաղակող հակասություններ ևս, հավելելով, որ դրանում հռոմեական-բյուզանդական կայսրերի երկու տարբեր ցուցակներն իրենց տվյալներով հաճախ իրար հակասում են: Իրոք, դրանում դժվար չէ համոզվել, եթե աչք ածենք այդ ցուցակներում կայսրերի գահակալման տարիների կամ էլ նրանց թվի վրա: Վերոգրյալի հիմամբ Հ. Բարթիկյանն իրավացիորեն պնդել է, որ ի դեմս «Ժամանակագրության» հեղի-

⁴² Տե՛ս Բարթիկյան 1967, 69:

⁴³ Բարթիկյան 1967, 69:

նակի գործ ունենք մի ապաշնորհ բանաքաղի հետ, որը ոչ միայն չի նկատել իր երկում առկա ճշացող հակասությունները, այլև կատարել է Անանիա Շիրակացու նման հունազետին անհարիր թարգմանական սխալներ⁴⁴: Բացի այդ, նա նկատել է, որ եթե Անանիա Շիրակացին, լինելով իր ժամանակի ամենաառաջադեմ գիտնականներից մեկը, բնության երևույթները մեկնաբանում էր գիտական տեսանկյունից և սուր քննադատում տարբեր հեղինակների աստղաբաշխական հակազիտական ու սնոտիապաշտական հայացքները և նրանց ծաղրում, ապա «Ժամանակագրության» սնոտիապաշտ բանաքաղը գիտությունից իսպառ հեռու է⁴⁵:

Հ. Բարթիկյանն այնուհետև քննության է ենթարկել այն հարցերը, թե ո՞վ է «Ժամանակագրության» բանաքաղը և թե ո՞ւմ գրչին են պատկանում այդ երկի վերջին բաժնի ինքնուրույն էջերը: Այդ հարցերին պատասխանելու համար նա դիմել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 5254 ձեռագրի օգնությամբ: Այն 1280 թ. ընդօրինակել է Գևորգ գրիչը: Հ. Բարթիկյանը հիմնավոր մերժել է այդ բնագիրը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2679 ձեռագրից արտագրված լինելու մասին Ա. Աբրահամյանի տեսակետը, փաստարկված պնդելով, որ թիվ 5254 ձեռագրի բնագիրը «շատ ավելի ընտիր է ու սկզբնական»⁴⁶ և որ այդ ձեռագիրը «միանգամայն անկախ է No 2679 ձեռագրից»⁴⁷:

Թիվ 5425 ձեռագրում ընդօրինակված «Ժամանակագրության» սկզբում նշված է՝ «Խոսք Փիլոնի»: Հ. Բարթիկյանը

⁴⁴ Տե՛ս Բարթիկյան 1967, 69:

⁴⁵ Տե՛ս Բարթիկյան 1967, 69:

⁴⁶ Բարթիկյան 1967, 69:

⁴⁷ Բարթիկյան 1967, 71:

կարծիք է հայտնել, որ այս Փիլոնը Ստեփանոս Տարնացի Ասողիկի հիշատակած Փիլոն Տիրակացին է՝ Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակիցը: Նաև գտել է, որ նա Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմություն»-ը հունարենից հայերեն թարգմանելուց հետո կազմել է նաև «Ժամանակագրություն»-ը՝ օգտագործելով նաև Սոկրատի այդ աշխատությունը⁴⁸: Սակայն անվերապահորեն պնդելով, որ «Ժամանակագրություն»-ը VII դ. բնագիր է և Անանիա Շիրակացու հետ որևէ աղերս չունի՝ Հ. Բարթիկյանը գտել է, որ «այդ ամբողջ աշխատության ամենահավանական բանաբարթարգմանիչն ու ինքնուրույն էջերի հեղինակը՝ Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է»⁴⁹: Ընդ որում, նախքան այդ, նա նկատել է, որ Փիլոն Տիրակացին գիտելիքներով չէր փայլում:

Եզրակացություններ

Վերոգրյալից հետևում է, որ անվանի հայագետ-բյուզանդագետ Հ. Բարթիկյանը մեծ ավանդ է ներդրել նաև Անանիա Շիրակացու գիտական ժառանգության ճշտորոշման գործում: Դա վերաբերում է միջնադարի ականավոր բնագետին վերագրված երկու երկերին՝ «Յաղագս ամպոց և նշանաց»-ին և «Ժամանակագրությանը»: Այդ երկերի համադիր քննությամբ նրան հաջողվել է համոզիչ ապացուցել, որ դրանցից առաջինն իրականում Արատոս Սոլացու «Διοσημεια կամ Προγινωστικα» չափածո երկի հայերեն արձակ թարգմանությունն է, իսկ երկրորդը՝ VII դ. բնագիր է, որի ամենահա-

⁴⁸ Տե՛ս Բարթիկյան 1967, 72:

⁴⁹ Բարթիկյան 1967, 76:

վանական բանաբաղ-թարգմանիչն Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արգարյան Գ. Վ. 1971, Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին.-«Պատմա-բանասիրական հանդես», No 1, էջ 77-94:

Աբրահամյան Ա. Գ. 1944, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Երևան, ՀՍՍՀ Մատենադարանի հրատարակչություն, 419 էջ:

Բարթիկյան Հ., 1964, Արատոս Սուլացու «Διοσημει» կամ «Προγινωστικα» աշխատության հին հայերեն թարգմանությունը.- «Բանբեր Մատենադարանի», No 7, էջ 331-363:

Բարթիկյան Հ. 1967, Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի».- No 16, էջ 57-77:

Բարթիկյան Հ. Մ. 1971, Դարձյալ Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին.- «Պատմա-բանասիրական հանդես», No 4, էջ 139-50:

Թորոսյան Հ., 1896, Անանիա Շիրակացին և «Արարատ» թերթին մեկ հավելվածը.- «Բազմավեպ», էջ 214-221:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2679:

Մարգիսյան Բ. 1904, Անանուն ժամանակագրություն, խմբագիր յորինեալ յԷ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ, 106 էջ:

Տեր-Սկրտչյան Գ. 1896, Անանիա Շիրակացի, Ա.- «Արարատ», 1896, Բ էջ 96-104:

Ананя Ширакаци 1962, Космография, перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатян, Ереван, Издательство АН Армянской ССР, 128 с.

Артешес И. Шахназарян, *Институт истории НАН РА, к.и.н., Исследования академика Грача Бартикяна по ширакациведению (к 95-летию со дня рождения).*

Резюме

Библиографическое наследие крупнейшего представителя армянской средневековой естественнонаучной мысли Анания Ширакаци привлекло также внимание известного арменовед-византолога Грача Бартикяна.

Предметом его скрупулезного анализа стал вопрос авторства двух приписываемых А. Ширакаци работ – сочинения метеорологического содержания «Об облаках и знамениях» и «Хронологии». Причем к первой из них Г. Бартикян обращался дважды – в связи с развернутой вокруг нее дискуссией опытным арменоведом, филологом Г. Абгаряном, а ко второй – лишь однажды.

В итоге Г. Бартикян убедительным образом показал, что обе эти работы не принадлежат перу Ширакаци. Он высказал обоснованное мнение, что первая из них является не стихотворным армянским переводом поэмы «Диосемиа» древнегреческого поэта Аратоса из Сол. Что же касается второй, то Г. Бартикян сделал заключение, что она в основном являет собой материал, взятый из произведений древнегреческих авторов. Наиболее вероятным фольклористом-переводчиком этого труда и собственно автором определенных страниц является младший современник А. Ширакаци – Пилон Тиракаци.

Г. Бартикян справедливо отмечал, что настало время перестать приписывать А. Ширакаци работы по точным наукам армянского средневековья.

Ключевые слова: Анания Ширакаци, Г. Бартикян, Аратос из Сол, Евдокс Книдаци, Месроп Маштоц, Матенадаран, Пилон Тиракаци, Сократ, Г. Абгарян.

Artashes I. Shahnazaryan, *Institute of History of the NAS RA, Cd. of Sci. in History, Academician Hrach Bartikyan's searchings on Shirakatsi studies (on the occasion of his 96th birth anniversary)*.

Summary

The bibliographic heritage of Anania Shirakatsi – the greatest representative of the Armenian medieval naturalistic thought, was given to the attention of famous Armenologist-Byzantinist H. Bartikyan.

The subject of his scrupulous analysis was the issue of the authorship of two works attributed to A. Shirakatsi – meteorological works “On the Clouds and Signs” and the “Chronology”. At that, H. Bartikyan addressed the first of them twice – in connection with the discussion unfolded around it by an experienced Armenologist, philologist G. Abgaryan, and the second – only once.

As a result, H. Bartikyan has convincingly proved that those works do not belong to the pen of Anania Shirakatsi. He put forward the grounded opinion that the first of them is the prose translation of the poem “Diosemia” by famous Greek poet Aratus of Soli. As for the second work, H. Bartikyan showed that it is mainly a compilation from the works of ancient Greek authors. Its most probable compiler-translator and author of individual pages is Pylon Tirakatsi – the junior contemporary of Anania Shirakatsi.

H. Bartikyan rightly noted that it was time to stop attributing to A. Shirakatsi the works on the exact sciences of the Armenian Middle Ages.

Key words: Anania Shirakatsi, H. Bartikyan, Aratus of Soli, Eudoxus of Cnidus, Mesrop Mashtots, Matenadaran, Pylon Tirakatsi, Socrates, G. Abgaryan.

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

ԳԱԱ պատմություն ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր
alkhar39@mail.ru

**«ՋԱՄԲՈՒՐ»՝ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ԵՐԿ (XVIII դ.)***

Բանալի բառեր՝ Սիմեոն Երևանցի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Հովհաննես Կոլոտ, Կարապետ Ուլնեցի, Հակոբ Նալյան, հայկական կրոնադավանական կենտրոններ, Մաղաքիա արք. Օրմանյան:

Ներածություն

Սիմեոն Երևանցու «Ջամբո» (ֆրանս.՝ Chambre, գրասենյակ, այստեղ՝ դիվանի իմաստով) կոթողային աշխատությունը¹, որպես հայոց պատմության, Էջմիածնի կաթողիկոսության ու Կ. Պոլսի պատրիարքության փոխհարաբերությունների պատմության սկզբնաղբյուր, մեր պատմագիտության մեջ քիչ է ուսումնասիրված: Առաջիններից մեկը, որ գի-

* Ներկայացվել է 11. IV.2022թ., գրախոսվել է 13.V.2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

¹ Ջամբո գիրք 1873: Այնուհետև գիրքը թարգմանվել է ռուսերեն՝ ականավոր հայագետ Ստ. Մալխասյանցի թարգմանությամբ (Семён Ереванци 1958), իսկ մեր ժամանակներում՝ հայերեն գրական լեզվով (Սիմեոն կաթողիկոս Երևանցի, 2003):

տական շրջանառության մեջ է դրել այս սկզբնաղբյուրը և միաժամանակ այն գնահատել, որպես պատմագիտական երկ, Մադաքիա արք. Օրմանյանն է: Նա Միմեոն Երևանցու գործունեությանն ու անհատականությանը մոտեցել է համազգային չափանիշներով, հայ եկեղեցու պատմության մեջ նրա և իր աշխատության նշանակության վերաբերյալ լայնախոհ ընդհանրացումներով: Խորհրդային շրջանում մի շարք հեղինակներ ևս անդրադարձել են այս երկին՝ գերազանցապես այն դիտարկելով իբրև սկզբնաղբյուր և մասամբ ու հպանցիկ՝ տնտեսագիտական և պատմագիտական տեսանկյուններից²:

«Ջամբոր» որպես սկզբնաղբյուր

«Ջամբորի» սկզբնաղբյուրային արժեքն ամենից առաջ պայմանավորված է իր ժամանակի իրադարձություններն ու փաստերը ճշտիվ վերհանելու հայեցակարգով, որ հաճախ հեղինակն ամրապնդում է բարեխիղճ մանրամասնություններով, փաստավավերագրական հղումներով և ժամանակագրական կարգի խստիվ պահպանմամբ: Միմեոն Երևանցին ջանախնդիր է իր աղբյուրների բարեխիղճ նկարագրության և դրանց ժամանակն ամրագրելու խնդրում, երբ հենվում է իր մշակած որոշակի սկզբունքների վրա. վավերագրերի թվականները նա նշում է հիմնականում հայկական մեծ թվականի և հիջրի («թուին տաճկաց») համադրումով կամ միայն հայկական և միայն հիջրի թվականներով: Բոլոր երեք դեպքերում հեղինակը տարեթվերը գրում է հայկական այբբենական թվակարգով, ընդամին թվականների հավաստիության և

² Տե՛ս Արутյոյան 1958: Պողոսյան 1964: Կոաննիսյան 1945: Չոբանյան 2006 և այլն:

պատմական արժեքի կարևորման տեսակետից աչքի է զարնում «Ջամբոյի» ոչ միայն պատմաբան հեղինակը, այլև հմուտ տոմարագետը³: Այս երկու հանգամանքները կաթողիկոսին մղել են ըստ արժանվույն և ժամանակի գիտական մտքի տեսակետից բարձր գնահատելու պատմական վավերագրերի պահպանության, դրանք էջմիածնի կաթողիկոսական արխիվում ի պահ դնելու և, առհասարակ, կաթողիկոսական կանոնավոր արխիվ կարգավորելու գործը: Կաթողիկոսը դիվանական փաստաթղթերը տեսակավորում է նկարագրական որոշակի պահանջներով, ինչպես, ասենք, կաթողիկոսների գործունեությունը, Ս. Աթոռի ղեկավարման կարգը նրանցից յուրաքանչյուրի օրոք, նրանց բարեգործությունները, վերաբերմունքն իրավական վավերագրերի նկատմամբ և այլն: «Ջամբոյ»եզակի տվյալներ է մատուցում էջմիածնի տնտեսության, սեփականատիրական-գույքային հարաբերություններում կաթողիկոսության տեղի և առանձնահատկությունների, սեփականատիրական ձևերի (մուլք, վակֆ), նրա կալվածքների, եկամուտների, կաթողիկոսությանն առնչվող հայկական գյուղերի և այլնի վերաբերյալ: Ս. Աթոռի տնտեսական կացության այսպիսի համակարգային նկարագիրը «Ջամբոն» օժտում է աղբյուրագիտական անկրկնելի արժեքով, ուստի պատահական չէ, որ խորհրդային հեղինակներն արժեվորել են հատկապես դրա աղբյուրագիտական կարևորությունը, ինչպես նաև սեփականատիրական-ավատատիրական հարաբերություններում հայ եկեղեցու զբաղեցրած տեղի ու նշանակության հանգամանքը: Մինչդեռ,

³ 1774 թ. Միմեն Երևանցին էջմիածնում հիմնած տպարանում տպագրել էր իր «Տոնացոյցը» ի գործածություն բոլոր հայ եկեղեցիների (տե՛ս Թեոդիկ 1912, 177):

«Ջամբոի» աղբյուրագիտական հարստությունը մեծապես նվազեցված կլիներ, եթե անգիտանայինք դրա նույնչափ անկրկնելի և առանձնահատուկ որակները հայ եկեղեցու պատմության, նրա նվիրապետության մեջ Էջմիածնի Ս. Աթոռի ունեցած պատմական դերակատարության, օսման-յան և պարսկական պետությունների, ինչպես և Կ. Պոլսի պատրիարքության հետ փոխհարաբերությունների վերհանման ոլորտում: Այս աշխատության սկզբնաղբյուրային արժանիքներն առանձնապես ընդգծվում են հեղինակին ժամանակակից կամ ժամանակով ոչ հեռու փաստերի ու անձանց բնութագրի պարագայում, մասնավորապես մեզ հետաքրքրող՝ Կ. Պոլսի պատրիարքության հետ Էջմիածնի աղերսների ավելի քան հիսնամյա պատմության (1726-1770-ական թթ. երկրորդ կես) շրջանակներում: Ինքը՝ Միմեոն Երևանցին, սթափ գիտակցում էր իր գրքի աղբյուրագիտական և պատմական նշանակությունը, երբ ձևակերպում էր դրա նպատակն ու բովանդակությունը. «Վերջապես դիտումն մեր եւ ջանք այս էր՝ զի գիրքս այս լիցի հանրականապես պարունակող, հայելի եւ ծանուցանօղ ամենից որպիսութեանց եւ ապագաիցն Սրբոյ Աթոռոյս եւ վանօրէիցն մերոց, եւ յաւիտենական եւ մշտապիտոյ արձան իրակութեանցն անցելոց ի զգուշութիւն յապա եկելոց»⁴:

Գրության ժամանակը

Երբ է գրվել «Ջամբոը», ավելի որոշակի՝ Միմեոն կաթողիկոսը երբ է գրել և ավարտել իր աշխատությունը: Փաստերի պակասը հնարավորություն չի տալիս ամրագրելու,

⁴ Ջամբո գիրք 1873, 4:

նախ, գործի սկզբնավորման տարեթիվը, ուստի Մ. Օրմանյանն այս առթիվ նկատում է, որ Միմենոն Երևանցու կատարած «աշխատութեանց վրայ 1765 թուական է առթի մեջ դրուած (նկատի ունի 1873-ի էջմիածնական հրատարակության տիտղոսաթերթը-Ա. Խ.) ուշացած չըսուիր, եթէ ամբողջ 1764 տարին պրպտումներու հետեւեցաւ (Միմենոն Երևանցի-Ա. Խ.)»⁵: Իրոք, կարելի է ասել, որ 1763 թ. ընտրված կաթողիկոսը չէր կարող 1764-1765-ից ավելի վաղ սկսել էջմիածնի մատենադարանի բազմաթիվ նյութերի հիման վրա գրվող իր գործը, մանավանդ, որ 1755 թ. վերջերից մինչև իր ընտրությունը նա հիմնականում գտնվում էր Կ. Պոլսում, որպես էջմիածնական նվիրակ⁶: Հետևաբար, հիշյալ տիտղոսաթերթի 1765 թվականը կարող էր ցույց տալ ընդամենը «Ջամբոյի» սկզբնավորման ժամանակը՝ բոլոր դեպքերում մնալով իբրև պատահական բնույթի ձեռագրային-աշխատանքային ընդմիջարկում⁷: Նշված թվականը հերքող որևէ փաստ չկա, ուստի մեզ ևս մնում է այդ՝ 1765 թվականը համարել «Ջամբոյի» գրության սկզբնավորման ժամանակ: Շատ ավելի առարկայական են երկի ավարտին վերաբերող տվյալները: Կաթողիկոսն այդ երկի վրա աշխատել է իր խառնվածքին հատուկ բժախնդրությամբ՝ անխտիր նշելով փաստաթղթերի (ֆերմաններ, բերաթներ, ռադամներ և այլն՝ ստացված օսմանյան և պարսից ինքնակալներից, բարձրաստիճան պետական պաշտոնյաներից, ինչպես արդեն նկատել ենք, հայկական և հիջրի թվա-

⁵ Օրմանեան 2001, 3501-3502:

⁶ Դիւան հայոց պատմութեան 1894: Օրմանեան 2001, 3494-3495:

⁷ Նորագոյն հետազոտողներից Հ. Օհանյանը կարծում է, որ «Ջամբոյի» ստեղծման ժամանակ կարելի է դիտարկել 1765-1775 թվականները (տե՛ս Օհանյան 2016, 46):

կաններով, բայց միշտ՝ հայկական տառաթվային համակարգով: Այս դեպքում չափորոշիչ է դառնում այն հարցը, թե որոնք են (կամ որն է) այն վավերագրերը, որոնք ժամանակային առումով մյուս բոլոր վավերագրերի մեջ վերջինն են ըստ թվականների, որ կաթողիկոսը հասցրել է գետեղել իր աշխատության մեջ: Այս կտրվածքով առանձնանում են (նաև իրենց նվազագույն քանակով) երկու վավերագրեր, մեկը՝ տրված հիջրի թվականով «Մոյն խանս զգիր մի եւս տայ սրբոյ Աթոռոյս... ի ՌՃԶԲ (իմա 1768/1769) թուին տաճկաց»⁸, և մյուսը՝ հայկական թվականով. «... ի մտանելն մեր ի ՌՄԺԸ (իմա 1769) թին մեր»⁹: Այսինքն, այս վերջին վավերագրերը թվագրված են 1769 թվականով, որով և արձանագրվում է կաթողիկոսի աշխատանքի ավարտի տարին:

Վերն ասվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ Սիմեոն կաթողիկոսը «Ջամբոը» սկսել է գրել 1765 թ. և ավարտել՝ 1769 թ.:

«Ջամբոը»՝ հայ եկեղեցու պատմության հայեցակարգի ձևակերպում

Չպետք է անտեսել, բացի աղբյուրագիտական բնույթից, «Ջամբոի» պատմագիտական ակնառու արժանիքները: Վերը նշված փոխհարաբերությունները Սիմեոն Երևանցին

⁸ Ջամբո գիրք 1873, 234: Հիջրի և փրկչական թվականների համեմատական աղյուսակը տե՛ս Թուրքական աղբյուրները 1961, 345-347: Թումանյան 1972, 113: Աղայան 1986, 165, 178:

⁹ Ջամբո գիրք 1873, 114: Գրքի ռուսերեն թարգմանության մեջ բնագրի թվականը ճիշտ չի վերականգնվել. բնագրում՝ «հանեն զբամբակս ի ՌՄԺԶ թուռջն մերում»(այսինքն, 1767 թվականին (տե՛ս Ջամբո գիրք 1873, 191), որը վերձանվել է, հավանաբար վրիպակի արդյունքում, որպես 1777 թ. (Симеон Ереванци 1958, 203):

ամենուրեք պահել է իր ուշադրության կենտրոնում և ի թիվս այլոց՝ Փիլիպոս (1632-1665) և Հակոբ Ջուղայեցի (1655-1680) կաթողիկոսների գործունեությունից մինչև իր կաթողիկոսական ընտրությունը: Սիմեոն Երևանցին գործում էր հայ եկեղեցական մյուս կենտրոնների հետ (Կոստանդնուպոլսի պատրիարքություն, Կիլիկիայի կաթողիկոսություն, Երուսաղեմի պատրիարքություն, Գանձասարի և Աղթամարի կաթողիկոսություններ) մերթ քաջահայտ, մերթ քողարկված մրցակցության պայմաններում, որի առարկայական հիմքում ընկած էին թեմական պատկանելության խնդիրները՝ հատկապես փոխադարձ հավակնությունները դիմակայող կողմի նկատմամբ: Անվարան և վճռականորեն պաշտպանելով Էջմիածնի ավանդական իրավունքները, Սիմեոն կաթողիկոսը ելնում էր նրա, որպես ամենայն հայոց կաթողիկոսության ընդհանրական ու գերակա կարգավիճակի հավատամքից ու տեսակետից: Այս իմաստով նրա բանավիճային առաջնակարգ թիրախը մնում էր XVIII դ. երկրորդ տասնամյակից գորացող՝ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը, որով և կարելի է բացատրել նրա տարապայման, կամ հույժ կտրուկ քննադատական վերաբերմունքը (անգամ հանիրավի՝ անձնական բնույթի հարձակումները) այդ գորացումը նախապատրաստող և ուղղորդող այնպիսի լրջմիտ ու հեղինակավոր դեմքերի նկատմամբ, որպիսիք էին Կոստանդնուպոլսի պատրիարքներ Հովհաննես Կոլոտն ու Հակոբ Նալյանը: Հայտնի են Հ. Կոլոտի՝ պատրիարքական աթոռին հայտնվելու առաջին տասնամյակներին պատրիարքության ամրապնդման ակնառու իրողությունները՝ Երուսաղեմի պատրիարքության անկյալ վիճակի (որին պետք է վերջ տրվեր

Գրիգոր Շղթայակրի անձնվեր գործակցությամբ) վերացման, ինչպես նաև կրոնական մյուս կենտրոնների հետ հարաբերությունների կարգավորման ասպարեզում: Ղազար Ջահկեցու ընտրության պարագաներն արդեն ցույց են տալիս, որ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը մի հայտնի չափով ազդում է այդ ընտրությունների վրա: Բավական է միայն ասել, որ Գրիգոր Շղթայակրին՝ Հ. Կոլտոի այդ եռանդուն համախոհին և հեղինակավոր դեմքին, երիցս առաջարկվել է Էջմիածնի կաթողիկոսական աթոռը, որից նա հրաժարվել էր դեռևս Կարապետ Ուլնեցու կաթողիկոսական ընտրության ժամանակից¹⁰: Վերջինիս ընտրությունը ևս, որ կատարվեց Կոստանդնուպոլսում (1726 թ. փետրվարի 27), իսկապես նորույթ էր Էջմիածնի և Կոստանդնուպոլսի պատրիարքության փոխհարաբերություններում: Այս առումով հավելենք, որ Էջմիածնի կաթողիկոսության ու միաբանության ընթացքի վրա ներգործող այնպիսի ազդեցիկ գործոնը, որպիսին արևելահայ առևտրական խոշոր կապիտալն էր, չէր կարող պահպանել իր քաղաքական հիմքերն ու հմայքն այն ժամանակից ի վեր, երբ Երևանը և Էջմիածինը հայտնվեցին օսմանյան տիրապետության ներքո, ինչն իրավացիորեն նկատում է Մ. Օրմանյանը¹¹: Եվ այս պայմաններում Էջմիածնի կաթողիկոսությունը պետք է համակերպվեր իրերի նոր և աննախընթաց դրությանը, այն է՝ Կոստանդնուպոլսի պատրիարքության առաջադրած կաթողիկոսական թեկնածուի ընտրությանը՝ ի դեմս Կարապետ Ուլնեցու: Վերջինիս հաջորդած մյուս կաթողիկոսներն ընդհուպ մինչև Միմեոն Երևանցի, ընտրվե-

¹⁰ Տես Օրմանեան 2001, 3372:

¹¹ Օրմանեան 2001, 3289:

ցին Կոստանդնուպոլսի պատրիարքության կողմից խաղի կանոնները սահմանելու և նրա ակնհայտ ազդեցության ներքո, որ տևեց շուրջ 37 տարի (1726-1763 թթ.): Հակոբ Շամախեցու հաջորդի ընտրության առթիվ Էջմիածնի միաբանության հնգիցս գումարած ապարդյուն ժողովներն¹² ինքնին վկայում էին դրանց տարերայնության մասին, որի և հիմքում, և մակերեսին ընկած էին ընտրության գործընթացում Կոստանդնուպոլսի ազգայիններին շրջանցելու միտումները: Այս իմաստով ուշագրավ է շրջահայաց նորընտիր Սիմեոն կաթողիկոսի դիմումը Հ. Նալյան պատրիարքին, որ ավելի շուտ մեղանչում է հիշեցնում. «Եւ զի այն ընտրութիւն նորա եղև առանց հաւանութեան մեծամեծացն Կոստանդինուպօլսոյ, կասկածեալ Սիմեոնի ընդ այս՝ գրեաց վաղվադակի թուղթ առ Յակոբ պատրիարք և առ մեծամեծս հայոց և ծանոյց նոցա զընտրութիւն իւր, թէ ես ոչ իմովս ինչ կամօք օծայ կաթողիկոս, այլ յընտրութենէ միաբանիցս»¹³:

Պակաս ուշագրավ չէ այստեղ Մ. Չամչյանի հավելյալ բացատրությունն այն մասին, որ Սիմեոնի ընտրության դեմ առարկողների մեջ էր պատրիարք Հ. Նալյանը¹⁴: Եվ այստեղ հարց է առաջանում՝ իսկ ինչու էր Հ. Նալյանը դեմ այդ ընտրությանը: Կարծում եմ՝ Էջմիածնի վրա պատրիարքության ազդեցությունը պահպանելու պատճառով և այդ մտայնությունը պետք է սասանվեր կաթողիկոսի աթոռին Սիմեոնի նման զորեղ անհատականության հայտնությամբ, պատրիարքության թելադրող առանձնաշնորհման եռանդուն ընդ-

¹² Տե՛ս Չամչյանց 1984, 871:

¹³ Չամչյանց 1984, 872:

¹⁴ Չամչյանց 1984, 872:

դիմախոսին լավ ճանաչելու հանգամանքով: Պոլսահայ իրականությունն ի մոտո ճանաչող Սիմեոնի. «տաճկահայոց գործերի ու ընթացքի» մեջ տարիներ ի վեր հմտանալու կարողությունը թերևս, այդ գործչին ներշնչել է «Կ. Պոլսոյ պատրիարքության հանդեպ բժախնդիր և հակակիր» դիրք գրավելու, որպիսի բացատրություն տալիս է Մ. Օրմանյանը¹⁵:

Խնդիրը, մինչդեռ, շատ ավելի խոր արմատներ ուներ, քան ապագա կաթողիկոսի անհատականությունն էր: Այն սկիզբ էր առնում հայ եկեղեցական կենտրոնների մրցակցությունից և այս վերջինն էլ, իր հերթին, խորանում էր քաղաքական իրադարձությունների զարգացման ընթացքով, որի գլխավոր ուղղորդողներն էին Պարսկաստանն ու Օսմանյան Թուրքիան: Պատահական չէր, որ Կոստանդնուպոլսի ազդեցությունն Էջմիածնական գործերի վրա շեշտակիորեն և կտրուկ բարձրացավ այն պահից ի վեր, երբ օսմանցիները գրավել էին Երևանն ու Էջմիածինը (1725 թ.) սրանց հարող տարածքներով, և մտադիր էին, ինչպես ամեն մի բռնագավթիչ, հիմնավորապես հաստատվել այնտեղ՝ վերանայելով ու ճշտումներ մտցնելով հայ հանրության կրոնադավանական կառույցների հանդեպ իրենց քաղաքականության մեջ: Այլ հարց է արդեն, որ նշված տարածքները Պարսկաստանին վերադարձվելուց հետո էլ, տասնամյակներ շարունակ, վերջինիս քաղաքական հեղիեղուկ կացության պայմաններում, Կոստանդնուպոլսի պատրիարքությունը շարունակում էր, անգամ ինքնաբերաբար, տրվելով մրցակցական պայքարի պահպանողական մտայնությանը, պահպանել իր հավակնությունները՝ Էջմիածնի նկատմամբ թելադրող կամ առաջ-

¹⁵ Օրմանեան 2001, 3495:

նային դիրք ապահովելու համար:

Վերն ասվեց, որ «Ջամբոր» դիտվում է որպես առաջնակարգ սկզբնաղբյուր և դա անվիճելի իրողությունն է, եթե նկատի ունենաք այդ գործի պարունակած եզակի և միևնույն ժամանակ, վիթխարի տեղեկատվությունը: Բայց միակողմանի կլիներ այն բնութագրել որպես զուտ աղբյուրագիտական արժեք՝ անգիտանալով դրա պատմագիտական նշանակությունը: Վերը նշված՝ աղբյուրագիտական-տեղեկատվական ընդարձակ ցանցի յուրաքանչյուր բնագավառում Սիմեոն Երևանցին հայտնում է իր սեփական և որոշակի վերաբերմունքը, ներկայացնում իր թեր ու դեմ մոտեցումներն այս կամ այն փաստին, իրադարձությանը կամ անձնավորությանը, որոնք բխում են նրա մշակած հայեցակարգային ընդհանուր սկզբունքներից և հեղինակային ինքնությունից: Հայեցակարգային այդպիսի սկզբունքներ են, նախ, Էջմիածնի բացառիկ (ազգային-կրոնական և աշխարհիկ իրավասություններ՝ քաղաքական անկախության վերացման պայմաններում) և առաջնային տեղն ու նշանակությունը բնաշխարհի և գաղթօջախների հայ հանրությունների ազգապահպանության գործում: Այնուհետև, Սիմեոն Երևանցու սևեռուն և կետունակությունից ոչ զուրկ գաղափարն Էջմիածնի՝ նշված տեղն ու նշանակությունը հայ կրոնական կենտրոնների նկատմամբ հիմնավորելու տեսակետից: Հիրավի, եթե այսօր ընդգծում ենք Ամենայն հայոց կաթողիկոսության պատմականորեն անհերքելի ազգապահպան գործառույթը Հայաստանում և նրա սահմաններից դուրս, ապա չենք կարող գտնել դրա գուգահեռը հայկական որևէ այլ կրոնական կառույցում, որոնք բոլորն էլ, այս իմաստով, ունեն և ունեցել են սուկ տեղային

գործողության շառավիղներ և նշանակություն: Եվ վերջապես, «Ջամբոին» պատմագիտական երկի իրավունք են տալիս փաստերի վրա հենվող նրա տեսակետներն ու դատողությունները՝ վերոհիշյալ հայեցակարգային միասնության սահմաններում:

Մ. Օրմանյանն իր դարակազմիկ աշխատության մեջ ըստ էության, «Ջամբոը» գնահատել է որպես պատմագիտական երկ՝ ընդգծելով դրա հեղինակի կարողությունները «Տաճկահայոց գործերն ու ընթացքը ուսումնասիրելու եւ կատարելապես անոնց մանրամասնութեանց հմտանալու, ինչպես իր նամակներուն եւ Ջամբոին մէջ կը տեսնուի»¹⁶: Նա այդ աշխատությունը դիտում է որպես երևույթ՝ իր պատմագիտական ու վիճակագրական բովանդակությամբ և առանձին հատվածներով նախ անդրադառնում է աշխատության կազմությանը (հեղինակի կողմից վավերագրական նյութերի հավաքումը, դրանց մշակումը և այն ամեն նախապատրաստական աշխատանքը, որոնցով Միմեոն Երևանցին պետք է կազմեր իր «Դիւանագիրքը կամ դիւանական արձանագիրքը»¹⁷: Այնուհետև Մ. Օրմանյանն անցնում է «Ջամբոի» պատմական մասին, իբրև հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրության՝ առանձնացնելով Միմեոն Երևանցու առաջարկած՝ կաթողիկոսների ժամանակագրական կարգը և անելով իր քննական դիտողությունները: Ի դեպ, Օրմանյանն առաջինն է նկատել, որ գրքի «Վասն Միմեոն կաթողիկոսի» հատվածի հեղինակն ինքը՝ կաթողիկոսը չի կարող լինել, այն պատճառով, որ իր գրքի առաջաբանում հույժ համեստորեն

¹⁶ Օրմանեան 2001, 3495:

¹⁷ Օրմանեան 2001, 3502:

իրեն բնութագրող հեղինակը չէր կարող այդպես մեծարել իրեն: Նա համոզում է, որ այդ հատվածը «ուրիշ գրիչէ Ջամբռին մէջ մուծուած է»¹⁸:

Մ. Օրմանյանն այնուհետև քննարկում է «Ջամբռի» վիճակագրական մասը (Էջմիածնի առաջնորդական վիճակներն ըստ նվիրակությունների՝ «Տաճկահայ վիճակներ», պարսկահայ նվիրակություններ, տերունի վիճակներ՝ Էջմիածնի տերունի գյուղերով, իսկ «հասոյթներու մասը» հատվածում անդրադառնում է աշխատության ընդգրկած՝ Մայր Աթոռի տնտեսական համակարգին՝ հարկերին, ապահարկությանը, Էջմիածնի մուլք գյուղերի ցանկին, դրանք իրավականորեն վավերացնող պաշտոնագրերին և այլն: Անկասկած, Մ. Օրմանյանը խնդրո առարկա աշխատությունը երևույթ է համարում ժամանակի մտավոր կյանքում նաև այն ժամանակ, երբ բանավիճում է դրա հեղինակի հետ, և ինչպես կտեսնենք, առարկում նրա հայեցակարգային դրույթներին:

Իր աշխատության Ե, Ջ և Է գլուխներում կաթողիկոսն Էջմիածնի վիճակների ցանկի մեջ է ընդգրկել բնաշխարհի և բոլոր գաղթօջախների տարածքները՝ փաստորեն հենվելով կաթողիկոսության՝ ամենուրեք նվիրակներ ուղարկելու իրավասությունների վրա: Իր հայեցակարգում կաթողիկոսն այդ իրավասությունները նույնացնում է վիճակների (թեմերի) պատկանելության հետ, և եթե այդ այսպես է, ապա, ըստ նրա, Էջմիածնական վիճակներ են ամենուրեք բոլոր հայկական տարածքները: Այս պատմական ռոմանտիզմը կաթողիկոսն առաջին հերթին ուղղում է եկեղեցու խոշոր կրոնական կառույցների՝ առաջին հերթին Կոստանդնուպոլսի, ապա

¹⁸ Օրմանեան 2001, 3503-3504:

Երուսաղեմի պատրիարքությունների և այնուհետև Կիլիկիայի, Աղթամարի ու Գանձասարի կաթողիկոսությունների դեմ՝ շարունակ ընդգծելով, ինչպես Մ. Օրմանյանն է գրում, «միշտ անոնց սահմանափակ իրաւասութիւնը եւ Մայր Աթոռոյ բարձր իշխանութիւնը ցուցնելու դիտմամբ»¹⁹: Բայց չմոռանանք, Սիմեոն կաթողիկոսը բանավեճ է վարում, իսկ այս ժանրում կրքերը պոռթկալու չափ իրենց ազատ են զգում: Այստեղից՝ նրա ցասկոտ, հաճախ հանիրավի հարձակումները հայ եկեղեցու պատմության մեջ լուսավոր հետազոծ թողած պատրիարքներ Հ. Կոլոտի և Հ. Նալյանի դեմ²⁰: Եթե համառոտենք Սիմեոն Երևանցու քննդատական մտքերը Կոստանդնուպոլսի պատրիարքության դեմ, ապա դրանք հանգում են հետևյալին.

ա) **պատրիարք** և ապա **պատրիարքություն** հասկացությունների խեղաթուրումը և արհեստականությունը հայ եկեղեցու համակարգում

բ) Էջմիածին-Օսմանյան պետություն հարաբերությունների մեջ Կոստանդնուպոլսի պատրիարքության ներխուժումն այն պահին, երբ պատրիարքները կարողացան ստանձնել Բ. դռան կողմից Էջմիածնի կաթողիկոսների հաստատման արտոնությունը և միջնորդի դերակատարությամբ կաթողիկոսներին կախման մեջ դնել իրենցից

գ) Օսմանյան Թուրքիայում Էջմիածնական թեմերը իլլելու անզուսպ ձգտումը, որ ծայր էր առել դեռևս Հակոբ Զուղայեցի-Եղիազար Այնթափցի հակամարտության ժամանակ (XVII դ. 60-70-ական թթ.)

¹⁹ Օրմանեան 2001, 3506:

²⁰ Զամբո գիրք 1873, 29, 235-236:

դ) Էջմիածնի կաթողիկոսության նկատմամբ Կոստանդնուպոլսի պատրիարքության շահատակությունները՝ միջնորդի առանձնաշնորհյալ դերի չարաշահմամբ:

Միմեոն կաթողիկոսի մասին գնահատական խոսքով հանդես է եկել Մ. Օրմանյանը՝ իր պատմաքննական վերլուծությունից բխող առարկություններով: Նա Հովհաննես Կոլոտին հիմնավորապես պաշտպանում է՝ կաթողիկոսի հարձակումներից, և դրանց պատճառը համարելով «Մայր Աթոռի գերիշխանութան և գերագահութան նախանձախնդիր երեւալու» ցանկությունը²¹: Մ. Օրմանյանը հերքում է Հովհաննես Կոլոտին ուղղած՝ կաթողիկոսի մեղադրանքները, իրավացիորեն պնդելով, որ պատրիարքի միջնորդ դերը Օսմանյան պետության և Էջմիածնի կաթողիկոսության միջև թելադրված էր «բացարձակապես պետական յարաբերութեանց պահանջով»²², իսկ Միմեոն կաթողիկոսի դիրքորոշումն այս հարցում նա բացատրում է նրա կամայականությամբ, որին նա էլք է տվել այն ժամանակից, երբ ձախողվել էր Կոստանդնուպոլսում կաթողիկոսական փոխանորդություն հաստատելու իր փորձերում («սակայն պատրիարք եւ ժողովուրդ դեմ դրին եւ Միմեոնի խորհուրդը խափանեցաւ»)²³, ուստի Հովհաննես Կոլոտին է դարձրել իր զայրույթը թափելու նշանակետը: Հատկապես ուշագրավ է Մ. Օրմանյանի եզրակացությունը. «Երեւանեցին է, որ **ամենեւին անտեղեակ** կը գտնուի **որպիսութիւն պատռույն եւ իշխանութեան**, եւ ոչ թէ Կարապետը անգիտակ է, կամ Կոլոտը դաւաճան է»²⁴ (ընդգ-

²¹ Օրմանեան 2001, 3292:

²² Օրմանեան 2001, 3293:

²³ Օրմանեան 2001, 3295:

²⁴ Օրմանեան 2001, 3293:

ծումները՝ բնագրից):

Մենք գիտենք, թե ինչ է նշանակում Մ. Օրմանյանի վկայակոչած «ժողովուրդի դեմ դնելու» արժեքն արևելյան բռնատիրական այնպիսի մի պետության մեջ, որպիսին Օսմանյան Թուրքիան էր և որը վկայակոչում է Մ. Օրմանյանը: Կոստանդնուպոլսում հայ համայնքի վերնախավն ինքն էր վճիռներ ընդունում (Էջմիածնի հետ ունեցած հարաբերություններում՝ միշտ Բ. դռան կարծիքի համեմատ) և այդ վերագրում ժողովրդին: Եվ հետո, կարծում ենք, Սիմեոն կաթողիկոսն այդքան պարզունակ չէր, որ լիովին անտեղյակ լիներ «պատուոյ եւ իշխանութեան որպիսութեանը. Բոլոր պատրիարքներն էլ ընդամենը միջնորդի դեր էին կատարում Բ. դռան և Էջմիածնի փոխհարաբերություններում, և եթե մի կողմ դնենք նրանց տրված՝ Սիմեոն կաթողիկոսի ավելորդ և զգացական բնութագրերը, իրողություն է մնում այն, որ նա Էջմիածնի պատվի և իշխանության դիրքերից էր ելնում այդ միջնորդ դերը քննադատելիս: Մ. Օրմանյանը, ի դեպ, անտեսում է հենց մրցակցական պայքարի հանգամանքն Էջմիածնի ու Կոստանդնուպոլսի պատրիարքության միջև և Սիմեոնի կարծիքի շարժառիթն է համարում զուտ նրա անձնական ընկալումներն ու զգացումները:

Չխորանալով այս բանավեճի այլ նրբությունների մեջ, նշենք, որ Մ. Օրմանյանն այսուհանդերձ, կարևորել է Սիմեոն Երևանցու գործը ոչ միայն որպես երևույթ՝ իր աղբյուրագիտական արժեքով, այլ նաև պատմագիտական աշխատություն՝ լուրջ և հաճախ հիմնավորված իր գնահատականներով: Այս գույգ կողմերի համադրումը հերքում է «Ջամբոջ» որպես զուտ սկզբնաղբյուր համարելու՝ ավանդականացման

հավակնող սպառնալիքը: Եվ վերջում ավելացնենք, որ այդ աշխատությունը դեռևս հանդես չի գալիս որպես XVIII դ. Էջմիածնի և Կոստանդնուպոլսի պատրիարքության ներհակություններն ամփոփող մտավոր հանրագումար: Դրա գրվելուց հետո էլ վերջակետ չէր դրվում այդ ներհակություններին, որոնց թուլացող կամ գրեթե վերջնական դրսևորումներն ենք տեսնում ընդհուպ մինչև Սիմեոն կաթողիկոսի մահը և Ղուկաս Կարնեցու կաթողիկոսական ընտրությունը (1780):

Եզրակացություններ

«Ջամբոը» հայոց պատմության հավաստի սկզբնաղբյուր է, որն իր հերթին հենվում է փաստավավերագրական և ժամանակագրական կարգի այլ սկզբնաղբյուրների վրա: Այդ երևելի գործը գրվել է 1765 թ. և ավարտվել 1769 թթ., թեև այս հարցում կան տարակարծություններ: Բացի աղբյուրագիտական բնույթից, «Ջամբոն» ունի պատմագիտական անհերքելի արժանիքներ: Անվարան պաշտպանելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսության իրավունքները ժամանակի ազգային կրոնական կենտրոնների (Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքություններ, Կիլիկիայի, Գանձասարի և Աղթամարի կաթողիկոսություններ) հետ մրցակցական պայքարում՝ Սիմեոն Երևանցին մշակել է որոշակի պատմագիտական հայեցակարգ: Ըստ դրա, Էջմիածնի կաթողիկոսությունը պատմականորեն բացառիկ տեղ և նշանակություն ունի ազգապահպանության գործում՝ հատկապես հայոց պետականության կորստից հետո: Այդ եզակի գործառույթը Սիմեոն կաթողիկոսը հակադրում է կրոնադավանական մյուս կենտրոններին, մասնավորապես Կոստանդնուպոլսի պատրիար-

քության՝ առաջնայնության հավակնող մտայնությանը: Հիրավի, Կոստանդնուպոլսի պատրիարքությունն էր Էջմիածնի կաթողիկոսության ամենագորեղ ախոյանը՝ 1726-1764 թթ. (սկսած Կարապետ Ուլնեցուն Կոստանդնուպոլսում կաթողիկոս ընտրելու շրջադարձային փաստից մինչև իր՝ Սիմեոն Երևանցու կաթողիկոսական ընտրությունն Էջմիածնում), մի ամբողջ ժամանակաշրջան, երբ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը փաստորեն վերահսկում էր Էջմիածնի կաթողիկոսության գլխի ընտրությունն ու գործունեությունը և որի դեմ առաջինն ըմբոստացավ ինքը՝ Սիմեոն Երևանցին և իր ընտրությամբ և դրանից հետո ձեռնարկած իր «Ջամբո» աշխատության մեջ: Այդ աշխատությանը պատմագիտական երկի իրավունք են տալիս նրա հեղինակի՝ փաստերն ու դրանց գնահատման խնդրում ձևակերպած դատողություններն ու տեսակետները՝ հայեցակարգային ամբողջականության սահմաններում:

Իր հանրահայտ աշխատության մեջ Մ. արք. Օրմանյանը ևս «Ջամբո» գնահատել է ոչ միայն որպես սկզբնաղբյուր (որի դեմ բնականաբար, ոչ մի առարկություն չունի), այլև պատմագիտական երկ՝ առանձնացնելով դրա հեղինակի հայացքներն ու գաղափարախոսությունը և նրան հակադրվելով իր տեսական առարկություններում:

Պետք է եզրակացնել, ուրեմն, որ Սիմեոն Երևանցու գործը ոչ միայն երևույթ է մեր պատմագիտության մեջ՝ իր սկզբնաղբյուրային հարուստ բովանդակությամբ, այլև վերջինիս վրա հենվող պատմագիտական աշխատություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է. 1986, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 299 էջ:

Դիւան հայոց պատմութեան 1894, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, հրատ. Գ. քահ. Աղանեանց, 892 էջ:

Թեոդիկ 1912, Տիպ ու տառ, Կոստանդնուպոլիս, հրատ. և տպագրութիւն Վահրամայ և Հրաչէի Տէր Ներսէսեան, 192 էջ:

Թումանյան Բ. 1972, Տոմարի պատմություն, Երևանի պետական համալսարանի հրատ., 229 էջ:

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին 1961, հ. Ա, կազմ. Սաֆրաստյան Ա. Խ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 403 էջ:

Չամչյանց Մ. 1984, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 896+195 էջ:

Չոբանյան Պ. 2005, Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 271 էջ:

Պողոսյան Ս. 1964, Հայաստանը XVII-XVIII դարերում, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 191 էջ:

Ջամբր զիրք 1873, Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 304 էջ:

Սիմեոն կաթողիկոս Երևանցի 2003, Ջամբր, թարգմ., առաջաբ. և ծանոթ. Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթ. և քարտեզ. Մ. Մ. Բաղայանի, Երևան, «Մուղնի» հրատ., 607 էջ:

Օհանյան Հ. 2016, Սիմեոն Երևանցու «Ջամբր» աշխատությունը որպես XVII-XVIII դարերի հայոց պատմության սկզբնաղբյուր, ատենախոս. պզթ գիտական աստիճան ստանալու համար, Երևան, Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտ, 189 էջ+XXXI:

Օրմանեան Մ. արք. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3844 էջ:

Арутюнян П. Т. 1958, “Джамбр” как первоисточник по истории Армении. В кн.: Симеон Ереванци 1958, Джамбр, с. 3-62.

Иоаннисян А. Р. 1945, Иосиф Эмин, Ереван, изд. Ереванского гос. университета, 352 с.

Симеон Ереванци 1958, “Джамбр”, Москва, изд. Восточной литературы, 398 с.

Альберт А. Харатян, Институт истории НАН РА, д.и.н., профессор, “Джамбр” – первоисточник истории взаимоотношений Эчмиадзинского католикосата и патриархата Константинопольских армян (XVIII в.)

Резюме

“Джамбр”- один из известнейших первоисточников истории армянского народа, одним из многочисленных достоинств которого следует считать достоверную и уникальную информацию относительно взаимоотношений эчмиадзинского католикосата и патриархата константинопольских армян в XVII-XVIII вв.

Автор данного сочинения –выдающийся национальный и церковный деятель католикос Симеон Ереванци, писал свою работу в течении 1765-1769 гг. Он ревностно защищал права Эчмиадзина как католикосата всех армян в конкурентной борьбе с константинопольским патриаршеством, исходя из собственной концепции об исторической роли Эчмиадзина как хранителя национальной самобытности армян. Именно этим обстоятельством обусловлена не только источниковедческая, но и историографическая ценность “Джамбра”.

Ключевые слова: Симеон Ереванци, Первопрестольный Св. Эчмиадзин, Армянский Патриархат Константинополя, Оганес Колот, Карапет Улнеци, Акоп Налян, армянские духовные центры, архиепископ Магакия Орманян.

Albert A. Kharatyan, Institute of History of the NAS RA, Dr. of Sci. in History, Professor, “Jambr” – the primary source of the history of relations between the Catholicosate of Etchmiadzin and the Patriarchate of Constantinople Armenians (XVIII century)

Summary

“Jambr” is one of the most famous primary sources of the history of the Armenian people, one of the many advantages of which should be considered reliable and unique information on the relationship between the Etchmiadzin Catholicosate and the Patriarchate of Constantinople Armenians in the 17th-18th centuries.

The author of this work, the outstanding national and ecclesiastical figure Catholicos Simeon Yerevantsi, wrote his work during 1765-1769. He

zealously defended the rights of Etchmiadzin as the Catholicosate of all Armenians in a competitive struggle with the Patriarchate of Constantinople, based on his own concept of the historical role of Etchmiadzin as the guardian of the national identity of Armenians. It is this circumstance that determines not only the source study, but also the historiographical value of “Jambr”.

Key words: Simeon Yerevantsi, Mother See of Holy Etchmiadzin, Armenian Patriarchate of Constantinople, Hovhannes Kolot, Karapet Ulnetsi, Hakob Nalyan, Armenian spiritual centers, Archbishop Maghakia Ormanyan.

ՀԱՍՄԻԿ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ
amirjanyan.hasmik@rambler.ru

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ
(XVIII Դ. ՎԵՐՋ)*

Բանալի բառեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս, հայկական թեմ, քաղաքական, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ղուկաս Կարնեցի, նամակագրություն, պետական, հնդկահայ:

Ներածություն

Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու (1763-1780) մահից հետո կաթողիկոս ընտրվեց Ղուկաս Կարնեցին (1780-1799): Որպես իր աշակերտի, օգնականի ու վստահելիի Սիմեոն Երևանցին կտակում նրա անունն էր հիշել իբրև իր հաջորդի: Աթոռակալության ամբողջ ընթացքում Ղուկաս Կարնեցին թղթակցում էր Ռուսաստանի, Թուրքիայի, Վրաստանի, Իրանի, անգամ հեռավոր Հնդկաստանի, Չինաստանի և այլ վայրերի հայ երևելիների, հայ ու այլազգի հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչների հետ: Նրա նամակներն ուշագրավ տեղեկություններ են պարունակում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի, Էջմիածնի վանքի տնտեսական վիճակի, այնտեղ կատարված շինարարական աշխատանքների, նվիրակ-

* Ներկայացվել է 04. IV.2022թ., գրախոսվել է 20.V. 2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

ների¹ գործունեության, հայկական թեմերի, հարևան երկրների քաղաքական իրավիճակների և այլնի մասին: Նամակների մի մասն էլ շնորհակալական ու օրհնության գրություններ են:

Ազգային-քաղաքական հարցերի քննարկումը Ղուկաս Կարնեցու և հնդկահայ գործիչների միջև

Ղուկաս Կարնեցու նամակների որոշ մասն ուղղված է հնդկահայ գործիչներին ու Հնդկաստան գործուղված նվիրակներին և գրեթե ուսումնասիրված չէ: Հնդկաստանն առհասարակ հայկական կարևորագույն թեմերից մեկն էր, ոչ միայն հոգևոր հասույթի ստացման, այլև տեղի հայ գործիչների կողմից Էջմիածնի վանքի և, առհասարակ, Հայաստանի նկատմամբ հայրենանվեր գործունեության տեսանկյունից: Նամակները պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի: Առաջինի մեջ ներառված են ազգային-քաղաքական բնույթի նամակները, իսկ համեմատաբար ծավալուն հոգևոր-մշակութայինները՝ երկրորդի:

Առաջին խմբի նամակները տեղեկություններ են հաղորդում Հայաստանի տարածքում վրացական և Երևանի խանի զորքերի ընդհարումների, հյուսիսկովկասյան լեռնականների արշավանքների ու Երևանի խանությունում քաղաքական իրավիճակի վերաբերյալ: Վ. Գրիգորյանն իրավացի է՝ գրելով, որ «Ղուկասի նամակները համարյա միակ սկզբնաղբյուրն են այդ ժամանակ Երևանի խանության մեջ ստեղծված քաղաքական խառնակ կացության՝ ի նկատի ու-

¹ Նվիրակն Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով գործում էր հիմնականում հայկական գաղթավայրերում՝ հայության շրջանում կաթողիկոսի անունից Մայր Աթոռի համար կամավոր նվիրատվություններ ժողովելու համար:

ներնալով 1784 թ. իրադարձությունները»²:

Դրանցում քննարկվում են նաև Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու հարցեր: Ինչպես գիտենք, XVIII դ. վերջերին Կասպից ծովի առափնյա հատվածներում և Անդրկովկասում հաստատվելու Ռուսաստանի քաղաքականության ակտիվացման հետ կապված՝ հայ ազգային քաղաքական շրջանակներում արմատավորվեց ռուսական գորքի օգնությամբ երկիրը պարսկական տիրապետությունից ազատագրելու գաղափարը:

Հայ գործիչների համար, որպես այդ գաղափարի շուրջ հայությանը համախմբող ուժ, մեծապես կարևորվում էր Էջմիածնի կաթողիկոսների դերը՝ հատկապես ռուսական գորքերի անդրկովկասյան արշավանքներին աջակցելու հարցում: Այդ նպատակով Ղուկաս Կարնեցու հետ ակտիվ բանակցում է հնդկահայ ազգային գործիչ Շահամիր Շահամիրյանը (1723-1798): Վերջինս կաթողիկոսին բացահայտ կշտամբում է հայ ազգային-ազատագրական շարժմանը չընդառաջելու մեջ: Ղուկաս Կարնեցու պատասխանը ներկայացնում էր հայկական իրականությունը, որը հեռավոր հնդկաստանաբնակ հայերի համար դժվար էր պատկերացնել: «Պիտոյ էր ամենայն ազգի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ տէրանց լինել և զապահովութիւն ունել, որ խնամածութեամբ նոցա կարիցէին ձգտիլ առ երջանկութիւնս»³, - գրում է կաթողիկոսը Շ. Շահամիրյանին՝ ավելացնելով, որ հայ ժողովուրդն անգամ պարսիկներին հավատարմորեն ծառայելով ապահով չէ, ուր մնաց՝ ապստամբության

² Դիվան Հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1780-1785) 1984, 56:

³ Տե՛ս Լեո 1923, 353, 380: Դիվան հայոց պատմության 2003, 488:

դեպքում: Նա նաև շեշտում էր թշնամու մեծաքանակ լինելը⁴:

Այս խոսքերով կաթողիկոսը բացահայտ դրսևորում էր ապստամբական շարժմանն իր դեմ լինելը: Այնուհետև Ղուկաս Կարնեցին անդրադառնում է Շ. Շահամիրյանի. «...հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն»⁵ դատապարտող խոսքերին և պատասխանում, որ եթե հնդկահայ հայրենասերները Հայաստանով շրջագայեն, ականատես լինեն հայերի կացությանը, անօգնական վիճակին ու թշնամիների բռնություններին, ապա կհասկանան, թե ինչքան դժվար է պայքարել ազատության համար. «Մի՞ թե յիմար իցենք որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք»,⁶-հարցնում է կաթողիկոսը: Այդպիսով, Ղուկաս Կարնեցին պարզորոշ հասկացնում էր, որ հեռավոր Հնդկաստանում բնակվող հայերն աղոտ պատկերացում ունեն հայ ժողովրդի վիճակի ու պարսկական դաժան տիրապետության վերաբերյալ:

Հայտնի է, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը բացասական դիրքորոշում ուներ 1771 թ. Մադրասում Շ. Շահամիրյանի հիմնադրած տպարանում լույս տեսած ազգային-ազատագրական բովանդակությամբ գրականության հանդեպ: Այժմ կարևոր էր Ղուկաս Կարնեցու վերաբերմունքը: Նա չնայած շատ հարցերում Սիմեոն Երևանցու գաղափարները կրողն էր, որոշ դեպքերում նրանից էապես տարբերվում էր⁷: Այդ իսկ պատճառով նա միջոցներ ձեռնարկեց, որ

⁴ Տե՛ս Գրիգորյան 1958, 105: Դիվան հայոց պատմության 2003, 487:

⁵ Լեո 1923, 353, 380: Դիվան հայոց պատմության 2003, 488:

⁶ Դիվան հայոց պատմության 2003, 488:

⁷ Հայտնի է, որ Շ. Շահամիրյանի խնդրանքով Ղուկաս Կարնեցին «արձակման գիր» է տվել Մադրասի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Մովսես Բադրամյանին՝ վերջինիս ազատելով Սիմեոն Երևանցու բանադրանքից (տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 205):

Հայաստան բերվեն Մադրասի տպարանում տպագրված և Շ. Շահամիրյանի կողմից Նոր Ջուղա ուղարկված «Աշխարհացոյց Հայաստանեայցը»⁸, Նադիր շահի պատմությունը⁹ և Մադրասի հայ գաղութի 1783 թ. տպագրված կանոնադրությունը՝ «Տետրակ որ կոչի նշաւակ կառավարելոյ ինչս որբոց և առակ կտակ ննջեցելոց»¹⁰:

Շ. Շահամիրյանը որոշել էր նաև «Որոգայթ փառացի» օրինակներ ուղարկել կաթողիկոսին, վրաց Հերակլ Ա արքային (1744-1798) և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին (1773-1801)¹¹: Շ. Շահամիրյանը 1787 թ. հոկտեմբերի 15-ին Մադրասից կաթողիկոսին գրում է. «...զի գրքուկն այն («Որոգայթ փառացը»-Հ. Ա.) է ելանելոց ի մենջ երիս օրինակօք՝ մի վասն իւր (Հերակլ արքային-Հ. Ա.) մի՝ վասն պատուականութեան քոյ և մի՝ վասն սրբակրօն տեառն Յովսեփեոս արքեպիսկոպոսի...»¹²:

Այդ գրքերից մեկի ճակատագիրն անհայտ է, իսկ եր-

⁸ Այս «Աշխարհացոյցը» 1778 թ. Վենետիկում նրա պատվերով լույս տեսած «Աշխարհացոյց Հայստանեայցն» էր (տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 562: 2003, 143, 274):

⁹ Գրքի վերնագիրն է՝ «Պատմագրութիւն վարուցն և գործոցն Նադիր շահ թագաւորին Պարսից հանեալ ի գրոց պատմութեան ազգին պարսից արարելոց յումեմնէ անգլիացոյ մսոր Նանուէ կոչեցելոյ»:

¹⁰ Չնայած Սիմեոն Երևանցին 1776 թ. Շ. Շահամիրյանին նամակով դատապարտել էր նրա գրքերի համար (Սիմեոնի մահից հետո միայն Շ. Շահամիրյանը ձեռնամուխ եղավ «Որոգայթի» լրամշակմանը և մյուս հատորների տպագրմանը), Դուկաս Կարնեցին, ինչպես տեսնում ենք, ոչ միայն բարեկամական կապեր էր պահպանում Շ. Շահամիրյանի հետ, այլև հետաքրքրված էր Մադրասի տպարանի գործունեությամբ (տե՛ս Иоаннисян 1989, 285): Դուկաս Կարնեցին նամակագրական կապեր ուներ նաև Մադրասի հայ գործիչ, այնտեղի տպարանի աշխատանքների մասնակից Մովսես Բաղրամյանի հետ (տե՛ս Иоаннисян 1989, 248):

¹¹ Տե՛ս Иоаннисян 1989, 284.

¹² Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.) 1990, док. 239, 360.

կուսը 1788 թ. հասնում են Հ. Արդուլթյանին: Նա դրանցից մեկն Աստրախանում ընդօրինակել է տալիս և կրկնօրինակն է ուղարկում Վրաստան¹³: Հավանաբար, գիրքը 1792 թ. կաթողիկոսին չէր հասել, քանի որ այդ թվականի օգոստոսի 16-ին Շ. Շահամիրյանին գրած նամակում նա նշում է, որ լսել են նոր գրքի՝ «Որոգայթ փառացի» մասին և հայտնում է, որ գիրքը դեռևս Էջմիածին չի հասել¹⁴:

Հոգևոր-մշակութային հարցերի քննարկումը Ղուկաս Կարնեցու և հնդկահայ գործիչների միջև

Առավել ծավալուն են Ղուկաս Կարնեցու հոգևոր-մշակութային բնույթի նամակները, որոնք տեղեկություններ են հաղորդում հնդկահայ մեծահարուստների միջոցով Էջմիածնի Մայր տաճարում իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ: Դրանց մեջ գերակշռում են Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Ս. Աթոռի գործակալ Հոհանջան Գերաքյանին (Յոհանջան Հակոբյանի) ուղղվածները, քանի որ վերջինս մեծապես աջակցում էր Մայր Տաճարի շինարարական աշխատանքներին և մշակութային տարբեր նախաձեռնություններին: Այսպես, 1785 թ. Հ. Գերաքյանի միջոցներով նորոգվում են տաճարի շրջակա սալահատակը¹⁵ և

¹³ Տե՛ս Մնացականյան 1958, 156:

¹⁴ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 732:

¹⁵ Տե՛ս Աղանեանց 1899, ԾԲ: Այդ մասին հիշատակագրությամբ արձանագրություն է տեղակայվում ներքնահարկի զանգակատան արևմտյան դռան վրա. «Կաման Աստուծոյ նորոգեցան սրբոյ տաճարիս շուրջանակի սալայատակքն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, ծախիւք եւ ի Սուրաթ բնակեալ Գերագեանց բարեպաշտ Յոհանջան աղային վասն հոգոյ իւրոյ եւ իւրայոցն՝ հօրն Յակոբին եւ սօրն Մեհրաբանին եւ նոցին ծնողացն Գերաք աղային եւ Թագուհոյն, Աղամալին եւ Վալիտային եւ եղբարցն՝ Աւետիքին, Գերաքին եւ

պարիսպը¹⁶: Նրա միջոցներով հիմնովին վերանորոգվում է նաև Սանահնի վանքը, 30 թուման¹⁷ է տրամադրվում դրա համար բերքատու այգի գնելուն¹⁸:

Կաթողիկոսը Հ. Գերաքյանին պարբերաբար տեղեկություններ է հաղորդում արված և կատարվող շինարարական աշխատանքների վերաբերյալ: Այսպես, 1789 թ. գրած նամակներից պարզվում է, որ 1788 թ. սեղանատան մեծ մասը, որի պատերն ու առաստաղը խախտվել էին, սրբատաշ քարով նորոգվել է, իսկ դրա վրա ավելացված վերնահարկի կառուցումը դեռ անավարտ է և նախատեսվում է առաջիկա գարնանը շարունակել¹⁹: Սեղանատան վրա կառուցվում են մի քանի սենյակներ և շտեմարան:

Վանքի արևելյան խցի վերանորոգումը հետաձգելու առնչությամբ Ղուկաս Կարնեցին Հ. Գերաքյանին գրում է. «...երկիրս մարդապակաս է եւ անհանգիստ, եւ այլազգիքն իբրեւ զքաղցեալ գազանս գաչս իւրեանց առ մեզ յառեալ ունին, եթէ համարձակիցիմք զամենայն կամեցեալսց մեր յառաջացուցանել, նոցա պատճառ լինի առաւել եւս ազահաբար պահանջմունս առնելոց»²⁰: Նա 1789 թ. Հ. Գերաքյանին տեղեկացնում է, որ շատ վանքեր լեզգիների արշավանքից ի վեր ամայացել են, իսկ դրանց մի մասն անգամ զրկվել է այգիներ-

Աբրահամին եւ քեոցն՝ Ազիզին, Թագուհոյն եւ Խաթունին եւ կնոջն Կիլիստանին եւ դատերացն Վալիտային եւ Թիրվանտային եւ այլ կենդանեաց եւ ննջեցելոցն, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի: ՌՄԼԴ (1785) թուին (Հայոց)» (տե՛ս Շահխաթունեանց 2014, 29):

¹⁶ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 322: Ճեմարանցի 1951, 31:

¹⁷ 100 թումանը հավասար էր ռուսական մոտ 2 ռուբլի 85 կոպեկի:

¹⁸ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 449:

¹⁹ Տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 38: 2003, 412, 442, 450:

²⁰ Դիվան հայոց պատմության 2003, 450:

րից²¹:

Ղուկաս Կարնեցու նամակները տեղեկություններ են հաղորդում նաև նրա տպագրական գործունեության վերաբերյալ, ինչը պատմագիտության մեջ քիչ է ուսումնասիրված: Դեռևս 1788 թ. հունիսի 21-ին և 1789 թ. փետրվարին Ղուկաս Կարնեցին Սուրաթ քաղաքում Ս. Աթոռի նվիրակ Եփրեմ վարդապետին գրում է, որ Հ. Գերաքյանին խոստացել է ի հիշատակ նրա ընտանիքի անդամների «Շարական» ու «Մաշտոց» տպել²²: Այդ գրքերը Հ. Գերաքյանի ընտանիքի հիշատակությամբ տպագրելուց հետևում է, որ դրանց մեկենասը նա էր:

Ղուկաս Կարնեցին 1789 թ. Հ. Գերաքյանին գրած նամակներում բազմիցս հայտնում է, որ «Շարական» ու «Մաշտոց» տպելը դեռևս ուժի մեջ է և որ դրանք տպագրվելու են ի հիշատակ նրա և իր ընտանիքի²³: Նա նաև գրում է, որ «Ճաշոց գրքի» տպագրությունն առայժմ հնարավոր չէ, քանզի գրքի «պարագայքն բազումք են»²⁴: Նամակից կռահում ենք, որ կաթողիկոսն ու Հ. Գերաքյանը խորհրդակցել են նաև «Ճաշոց» տպագրելու ուղղությամբ: Եփրեմ վարդապետին գրած վերևում նշված 1888թ. հունիսի 21-ի նամակում նա դարձյալ գրում է, որ «Ճաշոցն» առայժմ հնարավոր չէ տպել՝ ամենատարբեր պատճառներով, որոնք չի մանրամասնում²⁵: Վերջապես 1794 թ. Եփրեմ վարդապետին Ղուկաս Կարնեցին տեղեկացնում է, որ «Մաշտոցի» տպագրությունը վերսկսվել է, և

²¹ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 449:

²² Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 434-445:

²³ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 432:

²⁴ Դիվան հայոց պատմության 2003, 450:

²⁵ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 374:

առաջին օրինակներից ըստ նախնական խոստման վեց հատ ուղարկվել է Հ. Գերաքյանին²⁶:

Էջմիածնի տպարանում տպված գրքերը մեկենասներից բացի, ուղարկվում էին նաև տեղի այլ հայ գործիչների: Դրանք նվիրաբերվում կամ վաճառվում էին: Այսպես, «Խորհրդատետրերից»²⁷ մեկը պետք է ուղարկվեր Սուրաթ՝ Գերաքյանին, երեքը Մադրաս՝ Շ. Շահամիրյանին, 5-ը՝ նվիրակ Եփրեմ վարդապետին, 1-ը Կալկաթա՝ Խաչիկ աղա Առաքելյանին: «Ատենի ժամագրքի» («Ատենիի»)²⁸ 100 օրինակ և «Շարականի» երկու հատոր ևս ուղարկվում Հնդկաստան²⁹: Ղուկաս Կարնեցին 1787 թ. օգոստոսի 25-ին Շ. Շահամիրյանին գրում է, որ նվիրակի հետ «Պարտավճար»³⁰ և «Ատենի» են առաքել Հնդկաստան, իսկ «Հովսեփոսի պատմագրքի»³¹ օրինակները ևս կազմվելուց հետո առաջիկայում կառաքվեն³²:

Գ. Աղանյանցը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղուկաս Կարնեցու օրոք է Մադրասում լույս տեսել առաջին

²⁶ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. Հ⁴ 4538, թ. 17ա:

²⁷ Գրքի ամբողջական անվանումն է «Խորհրդատետր սրբազան պատարագի ըստ արարողութեան սրբոյ եկեղեցոյս Հայաստանեայց»:

²⁸ «Ատենի ժամագիրք» կամ ուղղակի «Ատենի» («Գիրք ժամանակագրութեանց սրբոյ եկեղեցոյս Հայաստանեայց եւ կարգաւորութեան սաղմոսացն Դաւթի մարգարէին»):

²⁹ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, LXX, LXXIV-LXXV (ներածություն):

³⁰ «Պարտավճար գիրքը» բովանդակում էր Սիմեոն Երևանցու խրատներն ու հորդորները՝ ուղղված ժողովրդին ու հոգևորականներին, կաթողիկոսի դավանաբանական, աստվածաբանական տեսությունները, նրա ժխտողական վերաբերմունքը կաթոլիկ դավանաբանության դեմ և այլն:

³¹ Տե՛ս Հովսեփոս Եբրայեցու «Պատմությունը» կամ «Գիրք պատմութեանց Յովսեփոսի Եբրայեցոյ արարեալ յաղագս Պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս և աւերման Երուսաղէմի»:

հայկական լրագիր «Ազդարարը», կարծիք է հայտնել, որ դրանում իր դերն ունի նաև կաթողիկոսը: Նա գրում է, որ ըստ իր լսածի Հնդկաստանի հայաբնակ վայրերում Ղուկաս Կարնեցու հղած գրություններ կան, որոնց համաձայն նա է այդ լրագրի խմբագիր Հարություն Տեր-Շմավոնյանին խորհուրդ տվել ձեռնարկելու հրատարակչական գործունեություն: «Եթե ստույգ է այս լուրը, այն ժամանակ Ղուկասի արժանիքը կրկին չափով պիտի բարձրանա ամեն մի հայի աչքում»³³, -եզրահանգում է Գ. Աղանյանը: Գ. Աղանյանցի այս ենթադրությունը Մ. Օրմանյանին հիմք է տվել գրելու, որ Ղ. Կարնեցուն է վերագրվում Հ. Շմավոնյանի կողմից հրատարակումը ոգեշնչողի դերը³⁴:

Հ. Գերաքյանի և Ղուկաս Կարնեցու նամակագրությունը սուղ տեղեկություններ է հաղորդում նաև քննվող ժամանակաշրջանում Էջմիածնի վանքում դպրոցական կյանքի վերաբերյալ: Ղուկաս Կարնեցու 1791 թ. դեկտեմբերի 31-ին Հ. Գերաքյանին գրած նամակից տեղեկանում ենք, որ նա կաթողիկոսին առաջարկել էր իր միջոցներով Ս. Գայանեում պահել՝ «ուսուցիչ արտաքնոց գրեաց, որ թե աստուստ խնդրողաց և թե յայլուստ եկողաց՝ թե վանական իցեն և թե աշխարհական, անխնայօրէն դաս ասասցէ և այլն»³⁵: Հ. Գերաքյանը պարտավորվում էր հոգալ դպրոցի ծախսերը՝ տարեկան 500 ռուբլի: Առաջարկությունն արժանանում է Ղուկաս Կարնեցու հավանությանը, որը որպէս ուսուցիչ Կ. Պոլսից հրավիրում է վարժապետ Թեոդորոս սարկավազին: Վերջինս շուտով ժա-

³² Տե՛ս Դիվան հայոց պատմության 1984, 379: 2003, 276:

³³ Աղանեանց 1899, ԾԶ:

³⁴ Տե՛ս Օրմանեան 1914, 3236:

³⁵ Դիվան հայոց պատմության 2003, 681:

մանում է³⁶:

Ղուկաս Կարնեցին Գերաքյանին հղած նամակներում առաջ է քաշում նաև դպրոցական նոր շենքի կառուցման անհրաժեշտությունը, թեև վերջինիս տեղեկացնում է վտանգների մասին. «վասն արտաքնոյ դասասացութեանն, որ գրեալ էիր ի վանսն սրբոյ Գայիանեան լինիլ, բարի է և ազնիվ միտքոյ, բայց այնպիսի գործառնութիւն անդէն ոչ առնու զհաստատութիւն եւ ոչ տեւէ ընդ երկար, զի որպիսութիւն անտերունջ երկրիս, որ ի բազմիցս անգամ վրդովիլն ի խոտվութեանց պէսպէս վնասք յառաջանան...»³⁷: Փաստորեն, կաթողիկոսը սկզբունքորեն դեմ չէր նոր դպրոցի բացմանը, սակայն պատկերացնում էր դրա գոյությանն սպառնացող բազմաբնույթ վտանգները: Նա Գերաքյանին գրում էր, որ նմանօրինակ գործը պետք է կազմակերպվի Մայր Աթոռի պարսպներից ներս, քանզի «...յայլ ուրեք ոչ վարի եւ ոչ արդիւնաւորի»³⁸:

Այդ դպրոցն ամենայն հավանականությամբ չբացվեց: Ուշագրավ է սակայն, որ կաթողիկոսը դրական պատասխանի արժանացրեց այն առաջարկը, որով նախատեսվում էր դպրոցում նաև աշխարհիկ գիտելիքներ ուսուցանել: Ավելին, 1791 թ. դեկտեմբերի 31-ին Հ. Գերաքյանին ուղղած նամակում գրելով վանքի հետ կապված շինարարական ծրագրերի վերաբերյալ, Ղուկաս Կարնեցին հայտնում էր դպրոցի համար նոր շենքի կառուցման իր նպատակի մասին: Նա նախատեսել էր Մայր Տաճարի արևելյան կողմում գտնվող վերնահար-

³⁶ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 683:

³⁷ Դիվան հայոց պատմության 2003, 682:

³⁸ Դիվան հայոց պատմության 2003, 682:

կը, որը նախկինում որպէս ամառային դպրոց էր ծառայել, վերակառուցել և ներքին հատվածում ձմեռային, իսկ վերին մասում՝ ամառային դպրոցներ բացել: «Որպէս զի յառաջին դպրոցին մանկունք զսաղմոս, զշարական, եւ զկտակարան եւ զայլ այնպիսի գրեանս դաս առցեն եւ ընթերցցեն: Իսկ ի նորոգ շինելի դպրոցիս չափահասակ անձինք զքերականութիւն զտրամաբանութիւն եւ զայլ արտաքին գրեանս ուսցին»³⁹, գրում է Ղուկաս Կարնեցին Ն. Գերաքյանին, նշելով, որ սպասում է դրական պատասխանի՝ սկսելու աշխատանքները:

Ինչպէս նշվեց, Հնդկաստանի թեմը կարևորվում էր Էջմիածնի մի պատկառելի հասույթն ապահովելու տեսանկյունից: Դրանից ելնելով Ղուկաս Կարնեցին մեծ ջանքեր էր գործադրում՝ ձեռք բերելու Հնդկաստանի նվիրակությունից ստացվելիքը⁴⁰: Ն. Գերաքյանին 1786 թ. մայիսին Ղուկաս Կարնեցու ուղարկած նամակից տեղեկանում ենք, որ հնդկահայ Քամալ Ստեփանյանը 460 ռուբլի էր կտակել Էջմիածնին և կտակարար կարգել Ն. Գերաքյանին: Վերջինս գումարն ուղարկել էր Բասրա՝ Ն. Բեթղեհեմյանին, իսկ նա՝ «ի մեծն Պօլիս փօլիցայ առնելով, ձեռամբ տեղոյ նուիրակին մերոյ՝ Իսահակ աստուածաբան վարդապետին, հասոյց ի Սուրբ Աթոռս»⁴¹:

Հայտնի է, որ Ղուկաս Կարնեցին 1795 թ. նամակ է գրել կալկաթաբնակ Աստվածատուր Մուրատխանյանին՝ նրա եղբոր կտակն ստանալու համար⁴²: Ս. Աթոռին Մադրասից

³⁹ Դիվան հայոց պատմության 2003, 682:

⁴⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. շնթ 4538, թ. 24ա:

⁴¹ Գրիգորյան 1995, 92:

⁴² Տե՛ս ՄՄ, ձեռ. շնթ 4538, թ. 37ա:

նվերներ էր ուղարկում նաև Շահամիր Շահամիրյանը⁴³:

Դրամական մեծ նվիրատվություններ կատարելու համար կաթողիկոսը շնորհակալական նամակներ է հղել Հնդկաստանի Բոմբեյ, Սուրաթ, Մադրաս, Կալկաթա, Բանդերբուշեռ, Մեիդապատ, Ագրարաբադ, Դաքքա և այլ քաղաքներում բնակվող հայերին⁴⁴: Նա նաև հնդկահայերին կոչ էր անում սատարել հայկական տարբեր հոգևոր կառույցներին (օրինակ, աջակցել Նոր Նախիջևանում հայկական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումն ավարտին հասցնելու գործին)⁴⁵:

Ղուկաս Կարնեցին 1787 թ. սեպտեմբերին հնդկահայերին ուղղված «ժողովարարության կոնդակ»՝ դրամական հանգանակության թուղթ է տալիս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի միաբաններին, քանի որ վանքը գտնվում էր աղքատ վիճակում ու այլազգիների ասպատակությունների ներքո: Կաթողիկոսը ներկայացնում է վանքի երբեմնի հարուստ ու ճոխ և ներկա աղքատ ու անմխիթար վիճակը⁴⁶:

Ղուկաս Կարնեցու նամակների մի մասը հայաբնակ տարբեր վայրերի, այդ թվում Հնդկաստանի հայ հոգևորականներին ուղղված կոչեր են: Նա պահանջում էր չգրադվել աշխարհիկ գործունեությամբ, հատկապես՝ առևտրով, պարսավում էր վատաբարո կամ բնակիչներին կողոպտող հոգևոր գործիչների գործունեությունը, ժողովրդից պահանջում

⁴³ Տե՛ս ՄՍ, ձեռ. Շ^մ 4538, թ. 39ա:

⁴⁴ Տե՛ս ՄՍ, ձեռ. Շ^մ 4538, Շ^մ 4482, թ. 65ա-65բ, 67ա-71ա, 100ա: Դիվան հայոց պատմության 2003, 127-129:

⁴⁵ Տե՛ս ՄՍ, ձեռ. 4567, թ. 14ա:

⁴⁶ Տե՛ս Դիվան հայոց պատմության 2003, 374: Գրիգորյան 1995, 89:

էր նմաններին հոգևոր տուրք չտալ⁴⁷:

Եզրակացություններ

Այսպիսով, Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու նամականին՝ ուղղված հնդկահայ գործիչներին, կարևոր սկզբնաղբյուր է, բացահայտում է Էջմիածնի ու հնդկահայ թեմի առնչությունները: Թեմը, հատկապես տնտեսական ու մշակութային հարցերում, ըստ ամենայնի աջակցում էր Մայր Աթոռին:

Նամակները նախևառաջ բացահայտում են հնդկահայ գործիչների ու հայոց կաթողիկոսի հայացքների հակադարձությունը, որը դրսևորվեց հատկապես ազգային ազատագրական շարժումն աջակցելու հարցում: Ղուկաս Կարնեցին սակայն, զգուշություն ու զսպվածություն դրսևորեց այդ հարցում՝ կասկածելով, որ ռուսները կկարողանան գրավել Երևանի խանությունը և հայ բնակչությունը չի հայտնվի պարսկական վրեժխնդրության թիրախում:

Ինչ վերաբերվում է Ղուկաս Կարնեցու մշակութային գործունեությանը, ապա սկզբնաղբյուրներն այդ հարցում սակավախոս են: Դա նախևառաջ բխում է նրանից, որ նա իր տպագրական, դպրոցաշինական, Մայր Աթոռի վերանորոգչական ու կառուցողական ձեռնարկումներին անդրադառնում էր այնքանով, որքանով փորձում էր հայազգի գործիչներին ոգևորել՝ հովանավորելու նմանօրինակ աշխատանքները:

Նրա բազմաթիվ գրությունները վկայում են, որ անգամ

⁴⁷Տե՛ս ՄՄ Հ⁴ր 2922, թ. 56բ, ձեռ. Հ⁴ր 6298, թ. 8ա: Դիվան հայոց պատմության 1984, 409, 410: 2003, 720:

շատ ծանր պայմաններում Ղուկաս Կարնեցին կարողանում է նամակագրությունը պահպանել հեռավոր Հնդկաստանի հետ, տեղեկանալ այնտեղի հայերի կյանքի ու գործունեության մասին, Մայր Աթոռ հասցնել տեղի թեմի հոգևոր հասույթը, էջմիածնում տպագրված գրքեր առաքել Հնդկաստան և այլն:

Նամակները միաժամանակ հնդկահայ գործիչներին կոչ են անում սիրով ու բարեկամաբար տրամադրվել դեպի Մայր Աթոռն ու հայ ժողովուրդը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, ձեռագիր Հ^մ 2922, Հ^մ 4482, Հ^մ 4538, Հ^մ 4567, Հ^մ 6298:

Դիվան հայոց պատմության 1984, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, հ. Ա, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:

Դիվան հայոց պատմության 2003, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, հ. Բ, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., 845 էջ:

Գրիգորյան Վ. 1958, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., 226 էջ:

Գրիգորյան Վ. 1995, էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի անտիպ նամակներում. - «Էջմիածին», Զ-Է, էջ 76-93:

Աղանեանց Գ. 1899, Դիւան հայոց պատմութեան, Դ, Թիֆլիս, տպ. Տ. Ռոտինեանցի, 683 էջ:

Լեո 1973, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 638 էջ:

Ճեմարանցի (Հովսեփ Գրիգորյան) 1951, Ղուկաս Կարնեցի կաթողիկոս. - «Էջմիածին», Ը, էջ 29-34:

Մնացականյան Ս. 1958, 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը. - «Բանբեր Մատենադարանի», թիվ 4, էջ 160:

Շահխաթունեանց Յովհ. 2014, Ստորագրություն կաթողիկե էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, աշխատասիրությամբ Ա. Տեր-

Ստեփանյանի, Ս. Էջմիածին հրատ., 560 էջ:

Օրմանեան Ս. 1914, Ազգաշատում, հ. Բ, Շնուանդնուպոլիս, 3376 էջ:

Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.) 1990, под ред. М. Нерсисяна, т. IV, Ереван, , Изд. АН Арм. ССР, 590 с.

Иоаннисян А. 1989, Иосиф Эмин, Ереван, изд. АН, Арм. ССР, 291 с.

Асмик О. Амирджян, *Институт истории НАН РА, к.и.н.*, Переписка Гукаса Карнеци с армянами в Индии (конец XVIII в.)

Резюме

Переписка католикоса Гукаса Карнеци с видным армянскими деятелям Индии, архиереями, содержит богатый материал для изучения социально-экономической ситуации Первопрестольного св. Эчмиадзина, духовной жизни армянской епархий Индии, политической ситуации Восточной Армении и т.д.

В некоторых письмах обсуждаются вопросы национально-освободительного движения армянского народа и освобождении Армении от турецко-персидского ига. В письмах выражены разнообразия политических взглядов разных армянских деятелей, их переживания и отношение к политическим и религиозным проблемам армянского народа. Письма интересны для изучения национально-освободительного движения армянского народа.

Письма отражают также деятельность Католикоса Всех армян в деле образования и книгопечатия. Во время предводительства Гукас Карнеци упад и подъем школы в Св. Эчмиадзине были обусловлены целым рядом внутренних и внешних факторов. В этот период создание культурно-просветительских учреждений сталкивалось с трудностями из-за многочисленных экономических, социальных и политических проблем.

Переписка содержит богатый материал также для изучения строительной деятельности Карнеци. Основные строительные расходы были покрыты известными армянами Индии. Армянская община Индии также финансировала строительство кафедрального собора Св. Эчмиадзин.

Ключевые слова: Католикос Всех армян, Армянская епархия, политический, Кафедральный Собор Св. Эчмиадзин, переписка, государственный.

Hasmk H. Amirjanyan, *Institute of History of the NAS RA, Cd. of Sci. in History, The correspondence of Ghukas Karnetsi and Indian Armenians (the end of the 18th century)*

Summary

The correspondence of Catholicos Ghukas Karnetsi with prominent Armenian figures of India, bishops, contains rich material for studying the socio-economic situation of the Mother See of St. Echmiadzin, the spiritual life of the Armenian dioceses of India, the political situation in Eastern Armenia, etc.

Some of the letters discuss the issues of the national liberation movement of the Armenian people and the liberation of Armenia from the Turkish-Persian yoke. The letters express the diversity of political views of different Armenian figures, their experiences and attitude to the political and religious problems of the Armenian people. The letters are interesting for studying the national liberation movement of the Armenian people.

The letters also reflect the activities of the Catholicos of All Armenians in the field of education and printing. During the leadership of Ghukas Karnetsi, the decline and rise of the school in St. Etchmiadzin were due to a number of internal and external factors. During this period, the creation of cultural and educational institutions faced difficulties due to numerous economic, social and political problems.

The correspondence contains rich material also for studying the construction activities of Karnetsi. The main building costs were covered by the famous Armenians of India. The Armenian community of India also financed the construction of the Cathedral of St. Etchmiadzin.

Key words: Catholicos of All Armenians, Armenian diocese, political, St. Etchmiadzin Cathedral, correspondence, state.

ՎԱՀԱՆ Հ. ՄԵԼԻԲՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր

v_melikian@mail.ru

**ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՑՄԱՆ
ԳԱՂԱՓԱՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԲՐԵՍ–ԼԻՏՈՎՍԿԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ***

Բանալի բառեր՝ Բրեստ Լիտովսկ, Սեյմ, Ս. Սապախ-Գյուլյան, Ա. Չիսենկելի, Արկոմեդ, Ն. Ժորդանիա, Գերմանա:

Ներածություն

1918 թ. հունվարին բոլշևիկների կողմից Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ցրումից հետո Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապող միակ իրական գործոնը շարունակում էր մնալ պատերազմի և խաղաղության հարցը:

Անդրկովկասյան Սեյմի թուրքամետ քաղաքական կողմնորոշման համատեքստում թուրքական արշավանքի, Կարսի հանձնման ու Տրապիզոնի անպտուղ, իսկ հայության համար աղետաբեր բանակցությունների պայմաններում այդ կապն էլ խզվեց:

Աշխարհաքաղաքական զարգացումները տարածաշրջանում և Անդրկովկասյան իշխանությունների նոր ռազմավարությունը

* Ներկայացվել է 12. V.2022թ., գրախոսվել է 10.VI. 2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

Հայտնի է, որ Գերմանիայի հետ Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը Բրեստ–Լիտովսկի պայմանագիրը կնքեց հարկադրաբար և զիջեց շուրջ մեկ միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ գլխավոր խնդիրը՝ իր իշխանությունը պահպանելու նպատակով:

Ստեղծված պայմաններում Բրեստ–Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո անդրկովկասյան կառավարությունը փորձեց իր շահերը պաշտպանել Թուրքիայի հետ ուղիղ բանակցությունների և ռազմական դիմադրության ճանապարհով: Չ. Ավալովի արտահայտությամբ «անդրկովկասյան դեմոկրատիան դուրս եկավ «թուրքական իմպերիալիզմի դեմ»¹, ինչը խիստ վնասակար հետևանքներ ունեցավ հայկական կողմի համար:

Խորհրդա–գերմանական մերձեցման պայմաններում Անգլիան ակտիվացրեց գերմանա–թուրքական հակաբրիտանական ճակատի դեմ պայքարը:

Այդ կապակցությամբ ուշագրավ լրացնող նյութ է փոխանցում բրիտանացի գեներալ–մայոր Լիոնել Դենստերվիլն իր հուշերում: Խոսքը վերաբերում է 1918 թ. հունվարից սկսած տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի ակտիվացող դերակատարությանը, ինչն ուղղակիորեն բխվում էր գերմանա–թուրքական շահերին:

Լ. Դենստերվիլի համառոտ աշխարհաքաղաքական վերլուծությունը հանգում է հետևյալին: Համաշխարհային տիրապետության հասնելու Գերմանիայի նախապատերազմյան պլանը նախատեսում էր Փոքր Ասիայի գրավումը և Ասիայում խորացումը՝ Բեռլին–Բաղդադ երկաթուղու կա-

¹ Տե՛ս Авалов 1924, 27:

ռուցման միջոցով: Երբ 1917 թ. մարտին անգլիացիների կողմից Բաղդադը գրավվեց և պարզ դարձավ, որ թուրքերն այն հետ չեն նվաճի, գերմանացիներն Ասիայում խորանալու ծրագիրը ձևափոխեցին և ընտրեցին Բեռլին-Բաքու-Բուխարա ուղին: «Այստեղից էլ,- գրում է Դենստերվիլը,-Անդրկովկասը, Բաքուն և Կասպից ծովը պետք է նկատելի դեր խաղային, ուստի և ինձ հանձնարարվեց կանխել այդ շրջաններում գերմանացիների ու թուրքերի հայտնվելը»²: Նկարագրելով Կովկասյան ռազմաճակատի քայքայման գործընթացը և «հայերի հայրենիքում» Էրզրումից սկսած հայկական ուժերի դիմադրությունը, նա ընդգծում է, որ գլխավոր օպերացիաների տարածքից (Բաղդադից-Բաքու՝ 800 մղոն), ռազմական գործողությունների թատերաբեմի տեղափոխումը հնարավորություն չէր տալիս այնտեղ մեծաքանակ ուժեր ուղարկել³:

Ըստ Դենստերվիլի միակ հնարավոր և նպատակահարմար պլանն անգլիական առաքելությանը Թիֆլիս ուղարկելն էր: Դրա նպատակն առայժմ քայքայված ռուսական, հայկական և վրացական զորամասերի վերակազմավորումն ու թուրքական ներխուժման դեմ ռազմաճակատի վերականգնումն էր: «Այդ գայթակղիչ ու պրակտիկ գործուղման պատիվը,- նշում է գեներալը,- հանձնարարվեց ինձ և ես 1918 թ. հունվարին Բաղդադից ուղևորվեցի գլխադասային ջոկատով»⁴:

Սակայն այդ ջոկատը, ինչպես հայտնի է, Թիֆլիս չի հասնում: Պատճառը Գերմանիայի ակտիվությունն էր և

² Денстервиль 1925, 2.

³ Ст' у Денстервиль 1925, 2:

⁴ Денстервиль 1925, 3.

վրաց-գերմանական մերձեցումը: Հասկանալի է, որ այդ գործընթացին աջակցում էր Օսմանյան կայսրությունը հանձին թուրքական արշավանքի: Թուրքական նպատակների վերաբերյալ Լ. Դենստերվիլի գնահատականը դիպուկ է. «հաղթանակները հասած սալորի պես ընկնում էին թուրքերի բերանը,- նշում է նա,- բացի այդ թուրքերը վերջապես կարող էին իրենց ատելությունը ցուցաբերել հայերի նկատմամբ և օգտվել մեծ քաղաքների թալանի հեռանկարից»⁵:

Լ. Դենստերվիլի գրքի ռուսերեն հրատարակության առաջաբանի հեղինակ բոլշևիկ Պոդոս Մակինցյանը, իհարկե, բոլշևիկյան տեսանկյանից և այն էլ 1925 թ. նկատում էր, որ անգլիական գեներալի նպատակն իր տիրապետության հաստատումն էր Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում և Թուրքեստանում, այսինքն՝ Կասպից ծովի, Բաքվի նավթի ու թուրքեստանյան բամբակի նվաճումը: «Այդ ազահ գազանը,- գրում է Պ. Մակինցյանը,- նույնիսկ խոստովանում է, որ գնալով Բաքվի ինտերվենցիային, նա իրականում ներխուժեց արկածախնդրության մեջ, բայց նավթն իր իսկ արտահայտությամբ արժե, որպեսզի գնաս արկածախնդրության»⁶:

Տարածաշրջանում Անգլիայի ակտիվացմանն է նվիրված նաև Մ. Քեմալի «Նոր Թուրքիայի ուղին» գրքի համար Վ. Գուրկո-Կրյաժինի 1929 թ. գրած առաջաբանը⁷: Վերջինս տարածաշրջանային գործընթացների մեջ Անգլիայի միջամտությունը բաժանում է երկու փուլի և բացատրում հետևյալ գործոններով: Դրանցից առաջինը Փետրվարյան հեղափո-

⁵ Денстервиль 1925, 3.

⁶ Денстервиль 1925, 1-2:

⁷ Ст' u Кемаль 1929, 2-3:

խությունն էր, որն անգլիացիներին հնարավորություն տվեց չեղարկելու սևծովյան նեղուցների նկատմամբ ռուսական ոտնձգությունները:

Իրոք, Վ. Գուրկո-Կրյաժինի դիտարկմամբ տեղի ունեցավ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարներ՝ սկզբում Միլյուկովի, ապա և Տերեշչենկոյի մեկուսացումն Արևելյան հարցի քննարկումից: Մերձավոր Արևելքում ռուսական էքսպանսիան փաստորեն դադարեցվեց, ինչը և անգլիացիների գործողությունների ճանապարհի հարթեց: Ժամանակավորապես նրանք սահմանափակվում էին միայն Արևմտյան Հայաստանում գրավված արևելյան վիլայեթներով (Էրզրում-Տրապիզոն-Վան), որոնք նեղուցների համեմատ առայժմ կրում էին երկրորդական բնույթ, իսկ ավելի ուշ՝ Անգլիայի համար ստացան ավելի նշանակալից դերակատարություն:

Մերձավոր Արևելքում Անգլիայի ակտիվացման երկրորդ փուլը կապվում էր նույն 1917 թ. ընթացքում Օսմանյան կայսրության ռազմա-քաղաքական և տնտեսական թուլացման հետ:

Երրորդ գործոնն էլ առաջին աշխարհամարտի երկրորդ կեսին Անգլիայի աննախադեպ ռազմական հզորացումն էր և այդպիսով Անտանտի իր դաշնակիցների համեմատ տեսակարար կշռի աճը: Փաստորեն, ռուսական Կովկասյան և Պարսկական ռազմաճակատների վերացումը և Մերձավոր Արևելքում խորհրդային իշխանության կողմից իմպերալիստական նկրտումներից հրաժարվելը բացեցին անգլիացիների ճանապարհը: Ցարական արտաքին գործերի նախարար Ն. Պոկրովսկու գնահատմամբ «Անգլիան հաշտության բա-

նակցությունների նախօրեին իր համար ստեղծեց պատե-րազմի աշխարհագրական քարտեզի շահավետ իրավիճակ»⁸:

Թուրքիայի դեմ Անգլիայի անջատ պատերազմը պետք է ավարտվեր Անգլիայի հետ միակողմանի զինադադարի կնքումով: Որպեսզի ճիշտ գնահատվեն 1918-1919 թթ. Անգլիայի քաղաքականության բնույթն ու մասշտաբը չպետք է ելնել անգլիացիների սահմանափակ հետաքրքրություններից միայն նեղուցների, Անատոլիայի, այն է՝ Թուրքիայի նեղ, տեղային իրավիճակից: Այդ քաղաքականության արմատներն ավելի խորն էին: Դրանք բազմաթիվ թելերով կապված էին Անդրկովկասի, Թուրքեստանի, Պարսկաստանի, Աֆղանստանի, Հնդկաստանի, իսկ ամենից շատ՝ Խորհրդային Ռուսաստանի հետ: Չախողումից խուսափելու համար անգլիացիներին անհրաժեշտ էր քանդել հակաբրիտանական ճակատը և այն տրոհել առանձին, չկապակցված օղակների: Այստեղից էլ բխում էր 1918-1919 թթ. անգլիական ինտերվենցիան Բաքու և Անդրկասպյան տարածաշրջան ու նրա ագրեսիվ քաղաքականությունը նախ Պարսկաստանում, ապա և Թուրքիայում⁹:

Իրենց ինտերվենցիան արդարացնելու համար անգլիացիներն առիթի կարիք ունեին, որը շարունակվող պատերազմի պայմաններում պետք է կրեր քաղաքակ-ռազմավարական բնույթ: Այդպիսի առիթ գտնվեց՝ դա գերմանա-թուրքական վտանգն էր, որն իրենց կարծիքով հայտնվեց 1918 թ. սկզբին: Գուրկո-Կրյաժինն իրավամբ չի անտեսում նաև երիտթուրքե-

⁸ Տե՛ս «Записки министра иностранных дел, Н. Покрошского (переписки Трюмера) от 21/II 1917 г.», ըստ՝ Кемаль 1929, 3:

⁹ Տե՛ս Кемаль 1929, 4-6:

րի «մանիակային» պանթյուրքիստական մոլուցքը, մասնավորապես Էնվերի պլանը, որն ամբողջ Անդրկովկասը (Բացի Բաքվից) փաստորեն գրավելուց հետո երազում էր առաջանալ Աստրախան, այնտեղից էլ կազակական տափաստանների վրայով՝ Միջին Ասիա և Թուրքիայի գերակայության տակ միավորել «Ասիայի թուրքական ժողովուրդներին»¹⁰: «Անգլիացիներին թողնենք արաբների թշվառ անապատը,- հեզնում էր Խալիլ փաշան,- և գնանք Թուրքեստան ես այնտեղ իմ փոքրիկ Չինգիզի (նրա ավագ որդին) համար կստեղծեմ կայսրություն»¹¹:

Ի դեպ, 1918 թ. մարտյան մուսավաթական խռովության ձախողումից հետո արդեն Թուրքիան էր հետևողական կերպով ձգտում էր ամեն կերպ գրավել Բաքուն: Անդրկովկասում գերմանական ու անգլիական ակտիվ ներգրավվածության և թուրքական ծրագրերի մասին էր վկայում Բաքվի կոմունայի ղեկավարության մտահոգությունը: 1918 թ. մայիսի վերջին ս.-դ. մենշևիկ-ինտրենացիոնալիստ Արամայիս Երզնկյանի հետ ունեցած ռադիոկապի ընթացքում կոմունայի ռազմական կոմիսար և Ստ. Շահումյանի աջ թևը հանդիսացող Գ. Ղորղանյանը հայտնում էր. «Անդրկովկասը վերածված է անգլիական և գերմանական իմպերալիզմի պայքարի ասպարեզի: Այդ սպառնում է նրա կործանմանը: Մենք ամեն կերպ արգելք ենք հանդիսանում անգլիացիների մուտք գործելուն, իսկ մենշևիկներն ու դաշնակցականները, ընդհակառակը, թույլ են տալիս թուրքերին ու գերմանացիներին մուտք գործելու Անդրկովկաս: Համաձայն մեր ստացած տեղեկությունների,

¹⁰ Кемаль 1929, 4-6.

¹¹ Кемаль 1929, 4-6.

անգլիացիք սպառնում են թուրք-գերմանական զորքերի Անդրկովկաս խուժման ժամանակ իրենց զորքերը շարժել Պարսկաստանից դեպի Անդրկովկաս»¹²:

Անդրկովկասյան անկախ պետությունների առաջացման գաղափարի ակտիվացումը

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի և Տրապիզոնի բանակցությունների վերաբերյալ հայ և արտասահմանյան պատմագիտությունը պատկառելի ժառանգություն է թողել ուստի հարկ չկա կրկին մանրամասնելու այդ գործընթացների ժամանակացույցն ու հետևանքները:

Կանգ կառնենք միայն մի շարք քաղաքական գնահատականների վրա, որոնք լիարժեքորեն արտացոլում են ժամանակի քաղաքական զարգացումները, ինչպես նաև ուղղակիորեն կապվում են թե՛ Անդրկովկասի և թե՛ ապագա ազգային անկախ պետությունների առաջացման հիմնահարցի հետ: Պետրոգրադում 1918 թ. հունվարի 21 (փետրվարի 3)-ին կայացավ Բրեստի բանակցություններում ռուս-թուրքական պատվիրակությունների նիստը: Ուշագրավ է այդ նիստում թուրքական պատվիրակության նախագահ Հակկի փաշայի հարցադրումն ուղղված Տրոցկուն: «Մինչ այժմ մենք գիտեինք,- նշում էր նա,- թե Կովկասը Ռուսաստանին է պատկանում: Եթե մենք կովկասյան կառավարությունը անկախ ճանաչեինք, այն ժամանակ ոչ մի իմաստ չէր ունենա այն հայտարարությունը, որ մենք այստեղ տաճիկ պատգամավորության անունից ներկայացրինք պ. Տրոցկուն, որովհետև այդ հայտարարության մեջ մենք խնդրում ենք ռուս կառավարությունից կատարել իր պարտքը, բայց եթե Տրոցկին ուզում

¹² «Հորիզոն» (Թիֆլիս) 24 մայիսի, թիվ 97, 1918:

է ասել, թե Կովկասում է մի անկախ կառավարություն, որ չի հպատակվում ռուս կառավարությանը, այդ դեպքում մի նոր դրություն կստացվի, որի առթիվ մենք դեռ պիտի մտածենք»¹³:

Թուրքական հերթական շանտաժին հետևում է Տրոցկու արդարացումը՝ «հայկական երկրամասերից ռուսական գորքերը հեռացնելու» վերաբերյալ: Նա հայտարարում է. «Ինչպես մենք արդեն դուրս ենք հանում մեր գորքերը Պարսկաստանից, այնպես էլ դուրս կհանենք Հայաստանից և այդ արդեն սկսվել է»¹⁴:

«Աշխատավոր» թերթը «Բրեստի դավաճանության» կապակցությամբ հրապարակում է սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կենտրոնական կոմիտեի կոչը, որտեղ պաշտպանելով Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչության, վրացիների և հայերի շահերը և ելնելով էսեռական կուսակցության հակախորհրդային ու հակաբոլշևիկյան քաղաքականությունից, ընդգծվում էր, որ «եթե խորտակվի Ռուսաստանը՝ կը խորտակվի նաև նրա թանկագին գոհար Կովկասը»¹⁵: Խորհրդային պետական գործիչ Վ. Վորովսկին իր իսկ արտահայտությամբ որպես «Գերմանական Բրեստի» գործարք-հաշտության հնարավոր հետևանք էր տեսնում Ռուսաստանի տնտեսական բազմակողմանի շահագործումը¹⁶: Ռուսական ազգային, պետական շահերը դավաճանելու մասին է նաև գեներալ Ա. Դենիկինի տված գնահատականը. «Թաթարական լծից հետո (նկատի ունի մոնղոլներին – Վ.Մ.),

¹³ «Արև» (Բաքու), 3 փետրվարի, թիվ 26, 1918:

¹⁴ «Արև» (Բաքու), 3 փետրվարի, թիվ 26, 1918:

¹⁵ «Աշխատավոր» (Թիֆլիս), 25 մարտի, թիվ 31, 1918:

¹⁶ Воровский 1933, 375-376:

ռուսական պատմության մեջ երկրի ներկայացուցիչները, իբրև որպիսիք մեծագույն անկման շրջանում հետևողակա-նորեն հանդես եկան պարոնայք Իոֆֆեն, Բրոնշտեյնը (Տրոց-կի – Վ.Մ.) և Բրիլլիանտը (Սոկոլնիկով), չենթարկվեցին ա-ռավել նվաստացման քան Բրեստ-Լիտովսկի խորհրդակ-ցության ժամանակ: Երբևիցե պետության կենսական շահե-րին նրա «լիազոր դեսպանները» չեն վերաբերվել նման կոպ-տագույն բռնությամբ և քամահրանքով, ինչպես այն դեմքերը, որոնք այժմ խոսում են ռուս ժողովրդի անունից»¹⁷:

Արդեն սկսված թուրքական արշավանքի օրերին, ՀՅԴ «Молот» («Մուրճ») թերթն իր առաջնորդողում հույս էր հայտ-նում, որ «ինչպես Անդրկովկասի ժողովուրդները, այնպես էլ Թուրքիայի բնակչությունը խոր հուզմունքով հայացք են հա-ռել Տրապիզոնին, որտեղ պետք է լուծվեն խաղաղության և պատերազմի հարցերը»¹⁸:

Անդրկովկասյան կոմիսարիատի առջև իր կարծիքով նոր հեռանկարներ էր ուրվագծում նախկին ռազմական մի-նիստր Էսեռ Դ. Դոնսկոյը: Մարտի 7 (20)-ին նա Ե. Գեգեչկո-րուն Պետրոգրադից գրում էր, որ Բրեստ-Լիտովսկի պայմա-նագրի «վավերացումը առաջացրել է սուր բողոք. Բաթումի, Կարսի հանձնումը վրդովեցրել է իրենց իսկ՝ բոլշևիկներին: Ազդեցիկ ժողովրդական կոմիսարները ոչ հրապարակայնո-րեն ցանկություն էին հայտնում Կովկասի անջատման, հաշ-տությունը չճանաչելու, դիմադրության կազմակերպման, ան-գամ թուրքերի հետ անջատ, ավելի շահավետ հաշտություն կնքելու վերաբերյալ: Հնարավոր է՝ ֆինանսական պետական

¹⁷ Деникин 1991, 112.

¹⁸ “Молот” (Тифлис), 25 февраля, N 40, 1918.

աջակցություն առանց բոլշևիկյան իշխանության ուլտիմատիվ ճանաչման»¹⁹:

Ավելի անհավանական ու ինչ-որ առումով սադրիչ բնույթ էր կրում ժողովուրդի ներկայացուցիչ Ս. Իոֆֆեյի հայտարարությունը: Թուրքերի դեմ պայքարելու հարցում օգնություն ակնկալող Անդրկովկասին նա առաջարկում էր ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը հայտնելով, որ եթե դրանից հետո «թուրքերը նորից առաջ շարժվեն ու անցնեն պայմանական սահմանները, ապա ԺԿԽ-ը կանգ չի առնի Թուրքիային համապատասխան նոտա առաջադրելու հարցում»²⁰:

Ինչ վերաբերում էր թուրքական կողմին, ապա վերջինիս վերաբերմունքը մասամբ արտահայտում էր գերմանական լրագրողին հարցազրույց տված Օսմանյան կայսրության խորհրդարանի նախագահի տեղակալ Հուսեյն Ջավիդ բեյը. «Այս հաշտությունը,- ասում էր նա,- Թուրքիայի առջև բացում է նոր հորիզոններ: Երկուսուկես դար Թուրքիան ցարիզմի իմպերալիստական ագահության զոհ ու պատառն էր: Ռուսաստանն ուզում էր ճզմել մեզ, որպեսզի խլի նեղուցները, որը նույնն է, թե մեր կյանքը խլեր: Այդ պայմաններում մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ խիստ լարված էին: Ցարիզմի անկումով և *ուկրահինական պետության ստեղծումով Թուրքիան ձերբազատվեց հավերժ սպառնալիքից: Այստեղևտ մեզ ոչինչ չի խանգարում Ռուսաստանի հետ բարեկամություն անել* (ընդգծումը մերն է.-Վ.Մ.): Թուրքիայի ապագան Արևելքում է: Կովկասում բնակչության մեծ մասը մահ-

¹⁹ Национальный архив Грузии (այստեղևտն՝ ՆԱԳ), ֆ. 1818, օպ. 2, ժ. 249, լ. 60.

²⁰ ՆԱԳ, ֆ. 1818, օպ. 2, ժ. 249, լ. 60.

մեղական են, նրանց մեջ քիչ չեն և թուրքերը: Մինչև Չինաստան ձգվում են տարածքներ, որոնք առանց ընդմիջման բնակեցված են թյուրքական ցեղերով: Իսկ Հյուսիսային Կովկասում ապրում են այլ ցեղեր, որոնց հետ հույս ունեն, մենք գերազանց համաձայնության կգանք: Այդ հողերի նկատմամբ նվաճողական ոչ մի նպատակ մենք չենք հետապնդում»²¹: «Новая жизнь» թերթի թղթակիցը Ջավիդ բեյին պատասխանում էր կոմս Ռեվենլոֆի գնահատականով, առ այն, որ Կարսի, Բաթումի գրավումով Գերմանիայի առջև բացվում է Կ. Պոլսի վրայով Բեռլինից մինչև Պարսկաստան, Աֆղանստան ու Հնդկաստան ճանապարհը²²:

Ս.-դ. մենշևիկ Ս.Տ. Արկումեդը (Գ. Ղարաջյան) իր կուսակցության առաջնորդներից Ա. Չխենկելուն «առանձնահատուկ խաղաղասիրական տրամադրության» համար քննադատելով եզրակացնում էր, թե «մեր ներկայ ահռելի մոմենտին, երբ թշնամին սպառնում է Բաթումից յետոյ Կովկասի մայրաքաղաքին (Թիֆլիսը նկատի ունի – Վ.Ս.), հաւանօրէն կառավարութեան նոր կրիզիս տեղի կունենայ»²³:

Ավելի վաղ՝ 1918 թ. փետրվարին, Արկումեդը վեր հանելով Թուրքիայի ծրագրերի իրականացման հարցում Գերմանիայի գործոնը՝ գրում էր. «Թուրքիային այժմ թն ու թիկունք կարող է տալ տեղի ունեցած հաշտության պայմանագիրը նա ունի մի այնպիսի պաշտպան վամպիր, որի ժանիքների տակն է գտնվում այժմ կիսամեռ Ռուսաստանը շնորհիվ Պետրոգրադի իշխանության»²⁴: Մենշևիկ Արկումեդը վկայում

²¹ НАГ, ф. 1818, оп. 2, д. 249, л. 60.

²² См. у НАГ, ф. 1818, оп. 2, д. 249, л. 60:

²³ «Պայքար», 1918, Թիֆլիս, 7 ապրիլի, թիվ 74:

²⁴ «Պայքար», 1918, Թիֆլիս, 16 փետրվարի, թիվ 33:

էր, որ «Գերմանական հաշտության 5-րդ պայմանը բառացի խմբագրված է այսպէս. «Ռուսաստանը կարողության չափ անելու է բոլորը, որպէսզի անմիջապէս Թուրքիային վերադարձվեն նրա Արևելյան Անատոլիայի սահմանները և ընդունում է թուրքական կապիտուլյացիայի վերացումը»²⁵»:

«Դավաճան կառավարության» կնքած Բրեստ-Լիտովսկի պայմանագրին Արկումեդն անդրադարձել է նաև իր «Անդրկովկասի վաճառումը» հոդվածում²⁶:

Ինչպէս հայտնի է, Տրապիզոնում թուրքական պատվիրակությունը գերմանական դիվանագետների անդրկուլիսյան մասնակցության պարագայում պահանջում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճշգրիտ կատարում և անդրկովկասյան գորքերից Կարսի, Արդահանի ու Բաթումի անհապաղ ազատում: Միաժամանակ, թուրքերն ամեն կերպ ձգձգելով բանակցությունների ընթացքը՝ հաշտության վերջնական պայմանները կախման մեջ էին դնում անդրկովկասյան պատվիրակության կողմից Անդրկովկասի Հանրապետության էության, ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպման հստակ հռչակումից: Հակասությունն այն էր, որ եթէ Անդրկովկասը շարունակում է պետական հարաբերությունների մեջ մնալ Խորհրդային Ռուսաստանի հետ, ապա նրա համար պարտադիր պետք է լինէր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կատարումը. ինչն էլ ի վերջո հանգեցրեց Անդրկովկասի անկախության հռչակմանը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Բաթումի անկման նախօրերին, մարտի 31 (ապրիլի 13)-ին թուրքական կողմն անդր-

²⁵ «Պայքար», 1918, Թիֆլիս, 16 փետրվարի, թիվ 33:

²⁶ Տե՛ս «Պայքար» (Թիֆլիս), 21 փետրվարի, թիվ 37, 1918:

կովկասյան պատվիրակությունից պահանջեց հռչակել անկախություն²⁷:

«Թուրքը հասած է իր նպատակին,- ավելի ուշ գրում էր Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության տեսաբաններից Գերսամ Ահարոնյանը,- նախ պարտադրած էր Սեյմին խզումը Ռուսիայեն, ապա պարտադրած էր Սեյմին կազմալուծումը»²⁸:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ու Անդրկովկասի անկախացման համատեքստում հնչակյանների մյուս տեսաբան, «Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագիր Ս. Սապահ-Գյուլյանը ճանաչելով բոլշևիկյան կառավարությունը, գտնում էր, որ «մեր բախտը այս բոպէիս, իր առաջին փուլի մէջ, վճռում է Բրեստ-Լիտովսկիի մէջ»²⁹:

Բնութագրական է նաև այն հանգամանքը, երբ Ա. Չխենկելին համաձայնվեց Թուրքիայի հետ բանակցել արդեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիմքի վրա, և երբ Բաթումի հանձնումն արդեն իրականություն էր, Սեյմում սկսվել էր սրեր ճռճելու ժամանակավրեպ ցնծություն:

«Ահա թե ուր է մեր փրկութիւնը» հողվածում կատարվածին դիպուկ գնահատական է տալիս «Աշխատանք» թերթը՝ բացահայտելով Հայկական հարցում վրացական մենշևիզմի հետևողական քաղաքականությունը: Թերթը գրում էր «լիազոր Չխենկելին, առանց ուշադրութիւն դարձնելու իր շուրջը հեծող հայ մանեկէններու աղերսալի հայացքներուն՝ Կարսն ու Արդահանը տուած է Թուրքիային, իսկ Բաթում

²⁷ Տե՛ս Ստավրովսկի 1925, 23:

²⁸ Ահարոնեան 1964, 110:

²⁹ «Երիտասարդ Հայաստան» (Չիկագո), 23 փետրվարի, թիվ 78, 1918:

քաղաքը, Արդվինի գավառակը, Արդահանի հիւսիսային մասը «կը մնան մեզի...». սոցիալ-դեմոկրատ և Դաշնակցութեան նացիոնալիզմին այնքան հակառակորդ կուսակցութեան մը պարագլուխներէն եղող Չիւենկելին, տեսէ՛ք ինչքան մանրակրկիտ ու բծախնդիր է Վրաստանի սահմանագծի վերաբերմամբ, իսկ ասկէ դուրս՝ թուրքերը եթէ Ալեքսանդրապօլն ալ ուզէին կամ Երևանը, չեմ կարծեր, որ Վրաստանի ներկայացուցիչը առանձին ջանք գործ դնէր պաշտպանելու ատուր հակառակը»³⁰: Բացի գլխավոր հարցադրումից, կարևոր է տողերի արանքից զգուշորեն, բայց միանգամայն որոշակի հնչող միտքը «Վրաստան» հասկացության ու նրա սահմանների վերաբերյալ, այն էլ մարտ ամսին: Ստացվում է, որ անգամ Անդրկովկասն անկախ հռչակելուց և Կարսը հանձնելուց առաջ, ոչ միայն վրացական, այլև հայկական շրջանակներում դրվում էր ազգային պետությունների հնարավոր առաջացման գաղափարը: Եվ այս համատեքստում կատարյալ փարիսեցիություն է Ն. Ժորդանիայի անկեղծ թվացող խոստովանությունը, թե «Դեմոկրատիայի մեղքը նրանում է, որ նա ժամանակին բանակ չստեղծեց»³¹:

Քանի որ հայ դեմոկրատիան բանակ ուներ, թերևս նա նկատի ուներ վրացական բանակի անգործությունը. տվյալ դեպքում՝ միասնական պետության կազմում վերջինիս հանցավոր գործելակերպը:

1918 թ. դեկտեմբերի 17-ին, արդեն հայ-վրացական պատերազմի շրջանում, Ա. Չիւենկելին Վրաստանի սոցիալ-դեմոկրատիայի անունից նամակ է հղում Միջազգային սոցիա-

³⁰ «Աշխատանք» (Երևան), 31 մարտի, թիվ 91, 1918:
³¹ Жордания 1919, 91.

լիստական բյուրոյին:

Նորից գերագնահատելով վրացական մենջևիզմի ու Անդրկովկասի պրոլետարիատի դերը երկրամասի կառավարման և, հատկապես, քաղաքացիական պատերազմից զերծ պահելու մտացածին ու Եվրոպային ուղղված չափազանցված ուղերձների հարցում, Ա. Չխենկելին արդարացնում էր Մեյմի ստեղծումը, «Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերությունների կործանումը», Բրեստ չմեկնելը, Գերմանիայի փրկարար աջակցությունը, ռուսական բանակի «վտանգը» և, Անդրկովկասի ժողովուրդների համերաշխությունը խաթարող «հայ-թաթարական թշնամանքը»³² :

Այդ ամենը մեկ նպատակ էր հետապնդում՝ հիմնավորել Անդրկովկասի անջատումը բոլշևիկյան Ռուսաստանից:

Անօգնական է հնչում «Հորիզոն»-ի արձագանքը՝ «Համագործակցության անհրաժեշտությունը» խորագրով հոդվածում, որտեղ նաև պետություն ստեղծելու պահանջ էր դրվում. «Ո՞վ պիտի կերտե վերջին վայրկյանին մեր դժբախտ ժողովրդի բախտը,- ասվում էր այնտեղ,- ով պիտի գրե մեր չարատանջ ազգի հին սև պատմության վերջին էջը, կամ նոր պատմության առաջին լուսափառ գլուխը: Ո՞վ. **Չունինք կառավարություն, չունինք մեր պետական կազմը ու պատրաստ ապարատ, որին ուժ տանք, որին վստահենք, որին ապավինենք: Չունինք, բայց պետք է ստեղծենք: Պետք է ստեղծենք արագորեն, ուժերի տենդային լարումով, հուսահատական հնարագիտությամբ ու արվեստով**»³³ (ընդգծումը մերն է – Վ.Մ.):

³² Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1831, օր. 1, ժ. 6, լ. 1-2:

³³ «Հորիզոն» (Թիֆլիս), 13 մարտի, թիվ 53, 1918 :

Ռամկավար առաջնորդ Արտակ Դարբինյանը ևս կարծում էր, որ «Կովկասահայութեան հոգին թէև յոժար է պաշտպանելու թուրքերէն խլուած տաճկական Հայաստանը, բայց մարմինը տկար է»³⁴:

Համենայնդեպս, համընդհանուր անորոշության մեջ անգամ դրսևորվում էր գլխավոր հայկական քաղաքական ուժի՝ ՀՅԴ դիրքորոշումը 1918 թ. մարտի կեսերին, երբ թուրքական զորքերը վերագրվում էին առայժմ Արևմտյան Հայաստանը: Դա սեփական, հայկական կառավարության ստեղծման խնդիրն էր:

Միաժամանակ արմատական հարցադրումներով հանդես եկավ ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի օրգան «Աշխատավոր» թերթը՝ «Գոնէ առաքինութիւն ունեցե՛ք լռելու» հոդվածում:

Դրանում Բաթումի «փառաւոր» անկման հետ կապված թերթը բացատրություն էր պահանջում մի շարք հակասական և անհասկանալի հարցերի վերաբերյալ. «1. Ինչը ստիպեց Տերիկ - Վեհիբ – Մեհմեդին մարտի 29-ին «խնդրել» Բաթումի բերդապետին դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ մարտի 30-ին վերջնագիր ներկայացնել, 2. Ինչից դրդուած և իբրև ո՞վ Չխենկելին իր կողմից «խնդրել է» բերդապետին դադարեցնել ռազմական գործողութիւնները, 3. Ջինադադարը կնքելիս ի նկատի առնուած է՞ր ֆրոնտի ընդհանուր դրութիւնը, մասնաւորապէս Ղարսի կացութիւնը: Ի նկատի առնուած էր գոնէ կովկասեան մեր զօրքերի ընդհանուր հրամանատարի կամ շտաբի կարծիքը, թե ո՞չ, 4. Եթե ոչ, ապա ո՞վ և ե՞րբ էր լիազօրել Չխենկելիին իր «խնդիրներով»

³⁴ Դարբինյան 2003, 221:

միջամտել ռազմական գործողություններին, կարգադրել դադարեցնել կռիւը և կամ յանձնել բերդը, 5. Ո՞րոնք են այն «լուրջ նկատառումները», որոնք ստիպել են պատւիրակութեան նախագահին կարգադրել «ինքնակամ պարպել Բաթումի բերդը»...»³⁵:

Թերթը հարցեր էր ուղղում նաև Կարսի հանձնման կապակցությամբ. «1. Ինչի՞ց ստիպւած և ո՞ւմ անունից, ումնի՞ց լիազօրւած, ո՞ւմ հետ խորհրդակցելուց յետոյ մինիստր-նախագահը անմիջապէս կարգադրեց ընդունել թուրքերի պայմանները, 2. Այդ պայմանները ընդունելիս նախօրոք հարցւած էր գէն. Նազարբեկեանի ու Ղարսի բերդապետի կարծիքը և եթէ ոչ ինչո՞ւ, 3. Եւ դարձեալ նոյն հարցը՝ ո՞վ և ե՞րբ է լիազօրել, և կամ որ երկրում է ընդունւած, որ կառավարութեան (այն էլ դեռ գոյութիւն չունեցող) նախագահը միջամտել և տնօրինել ռազմական խնդիրները առանց որևէ մէկի կարծիքն հարցնելու, 4. Մի՞ թե վախենում էիք, որ թրքերի «մի քիչ վաղաժամ» յարձակումը մեր զօրքերը չը կարողանային կասեցնել, փաստորէն այսպէս էլ եղել է և ձեզ համար իզուր «թիւրիմացութիւնների» դուռը կը բանային»³⁶:

Մեկ անգամ ևս դառնալով Անդրկովկասի անկախության հռչակմանը, արձանագրենք վրացական մենշևիզմի առաջնորդ Ն. Ժորդանիայի հիմնավորումը: Այն պաշտոնապէս հնչեց 1918 թ. ապրիլի 13-ին բանվորների, զինվորների և գյուղացիների ու բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների գործադիր կոմիտէի երկրամասային կենտրոնի միացյալ նիստում ընդունված բանաձևում: Այն է՝ «Անդր-

³⁵ «Աշխատավոր» (Թիֆլիս), 16 մայիսի, թիվ 45, 1918:

³⁶ «Աշխատավոր» (Թիֆլիս), 16 մայիսի, թիվ 45, 1918:

կովկասի անկախության հռչակումը, որն իրականացվեց Անդրկովկասի ողջ բնակչության իրավագոր ներկայացուցչության՝ Սեյմի կողմից, ճանաչել որպես պատմականորեն անհրաժեշտ ակտ և ամբողջ երկրի համար ստեղծված ռազմական ու քաղաքական դրությունից դուրս գալու միակ ելք, որը բխում է ինքնուրույն գոյության պաշտպանության անհրաժեշտությունից՝ ինչպես հարավից սպառնացող իմպերալիզմի, այնպես էլ հյուսիսի ամենագործուն անարխիզմի դեմ»³⁷:

Հարկ է անդրադառնալ նաև Թիֆլիսի բանվորների և զինվորների պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի ապրիլի 11-ի նիստում հնչած կարևոր հարցադրումներին: Այդ նիստում Ն. Ժորդանիայի ելույթը հիմնականում խարսխված էր թուրքական արշավանքի, Թուրքիա-Անդրկովկաս, Անդրկովկաս-Խորհրդային Ռուսաստան հարաբերությունների հանգույցի վրա: Ն. Ժորդանիան նախ մտահոգություն էր հայտնում, որ չնայած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրին, ինչպես Թուրքիայի, այնպես էլ Գերմանիայի մոտ պահպանվում էր առաջ շարժվելու նպատակը և այն, որ Թուրքիայի ու նրա դաշնակիցների հետագա քայլերն Անդրկովկասի նկատմամբ պայմանավորված էին նրան կողմից անկախության նախնական ձևակերպմամբ:

Ն. Ժորդանիան, դարձյալ զուտ վրացական շահերից ելնելով նշում էր, որ այդ տեղեկությունները ստանալով, երկրամասային կոմիտեն սկսեց Թուրքիայի դեմ պայքարի հարցում դաշնակիցներ որոնել, որպիսիք ստեղծված իրավիճակում հանդիսանում էին ցենտրոֆլուտը՝ Բաթումի Սևծովյան

³⁷ Жордания 1919, 93.

նավատորմիդը, ռուսական կենտրոնական կառավարությունը՝ ժողկոմխորհը և Հյուսիսային Կովկասը՝ հակախորհրդային կառավարությունները:

Պարզվում է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համատեքստում ցենտրոֆլուտն առանց Գերմանիայի թույլտվության իրավունք չունեի իրականացնելու ոչ մի գործողություն, չնայած որ չէր ընդունել այդ պայմանագիրը: Ինչ վերաբերում էր Խորհրդային Ռուսաստանին, ապա Ժողկոմխորհին Անդրկովկասին առաջարկում էր ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, միաժամանակ պնդելով, որ այդ քայլը ևս չի կանգնեցնի թուրքերի առաջխաղացումը, ինչպես չէր կանգնեցրել Գերմանիայի հարձակումը: Եթե Անդրկովկասը ճանաչեր Ժողկոմխորհի իշխանությունը, ապա վերջինս պարտավորվում էր Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագիրը խախտելու դեպքում Գերմանիային դիվանագիտական բողոք ուղարկել³⁸:

Ն. Ժորդանիայի, այն է՝ վրացական մենշևիզմի դիրքորոշումը մի շարք էական հակասություններ էր պարունակում: Նախ՝ դրսում դաշնակիցներ որոնելու փոխարեն՝ իրավական առումով և փաստորեն «դաշնակիցներ» կային Անդրկովկասյան Սեյմի ապա նաև անկախ հանրապետության կազմում: Ավելին, դաշնակիցներից հայերը ուժերի գերլարման ճանապարհով փորձում էին պաշտպանել Կովկասյան ռազմաճակատը ու հիմա էլ Արևելյան Հայաստանը: Անդրկովկասյան սեյմն ու կառավարությունը պարտավոր էին կովել ու կասեցնել թուրքական առաջխաղացումը դեպի Անդրկովկաս:

³⁸ См. у Жордания 1919, 88:

Երկրորդ, կարևոր է Ն. Ժորդանիայի ելույթի Ռուսաստանին վերաբերող այն հատվածը, ըստ որի եթե անգամ Անդրկովկասը ճանաչի Բրեստ–Լիտովսկի պայմանները միևնույն է, դա չի կանգնեցնի թուրքական արշավանքը: Այս հանգամանքը, դուրս է մնացել խորհրդահայ պատմագիտության ուշադրությունից: Հարց է առաջանում եթե Անդրկովկասի մասով Բրեստ–Լիտովսկը որոշիչ դեր չէր կատարելու, ապա մասնավորապես հայկական տարածքները՝ Կարսը, Արդահանը ու «վրացական» Բաթումը ինչո՞ւ էին բռնակցվում:

Եվ, երրորդ, թերևս ամենաարդիականն այդ պահին՝ խորհրդային իշխանությունը չճանաչող Անդրկովկասը, հատկապես վրացական մենշևիզմն ու Ն. Ժորդանիան, ինչո՞ւ և ինչպե՞ս էին դիմում կենտրոնի բոլշևիկների աջակցությանն ու ինչո՞ւ չէին դիմում Բաքվի կոմունայի օգնությանը: Չէ՞ որ, հիմնվելով 1917 թ. բոլշևիկյան կուսակցության 7–րդ՝ ապրիլյան կոնֆերանսի որոշման վրա, ըստ որի «ազգերի տարանջատման իրավունքի հարցն անթույլատրելի է շփոթել այս կամ այն ազգի տարանջատման նպատակահարմարության հարցի հետ այս կամ այն պահին և կուսակցությունը պետք է վճռի յուրաքանչյուր դեպքում միանգամայն յուրովի»³⁹, անդրկովկասյան բոլշևիկները դեմ էին ինչպես Անդրկովկասի տարանջատմանը Ռուսաստանից, այնպես էլ նրա տրոհմանը տեղի ազգությունների միջև: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ի տարբերություն Ֆինլանդիայի և Ուկրաինայի ճանաչման, մերժում էր Անդրկովկասի անկախության գաղափարը՝ դա հիմնավորելով Բաքվում ու Ար-

³⁹ Жордания 1919, 88.

խազիայում խորհրդային իշխանության գոյությամբ⁴⁰:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Անդրկովկասի կառավարության ու Սեյմի խմբակցությունների միացյալ նիստում մենշևիկյան խմբակցությունը դեմ է արտահայտվում թուրքական վերջնագրին: Ստեղծված իրավիճակում մահմեդական բոլոր խմբակցությունները հայտարարում են կառավարության կազմից դուրս գալու մասին: Ակնհայտ էր, որ նրանք դուրս կգան նաև Սեյմի կազմից և կհայտարարեն Ադրբեջանի անկախությունը⁴¹: «Մեր և մահմեդականների միջև եղբայրասպան պատերազմը դառնում է անխուսափելի, – հայտարարում էր Ն. Ժորդանիան, – մեզ հայտնի դարձավ, որ դա անխուսափելիորեն կապվում է թուրքական արշավանքի հետ և թուրքերն անպայման կօգտագործեն մեր հակասությունները: Ստացվել են տեղեկություններ այն մասին, որ թուրքերը ու հնարավոր է նաև տեղական թաթարներն Ախալցխայի շրջանում գրավում են ռազմավարական կետերը: Ընդհանրապես, մահմեդական բնակչությունը ծայրահեղ անհանգիստ է, ուստի և թիկունքում հնարավոր են լուրջ բարդացումներ»⁴²: Ն. Ժորդանիան դրանով էր բացատրում Տրապիզոնի բնակչությունների ընթացքում Սեյմի պատվիրակության «փորձարկումները» և հայտնի զիջումները, որոնք հիմնականում վերաբերում էին Կովկասյան ռազմաճակատի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տարածքները թուրքերին զիջելուն: Սրան էլ հետևում է Անդրկովկասի անկախության հռչակումը և նոր կառավարության ձևավո-

⁴⁰ Տե՛ս Մախիյան 2008, 34-35:

⁴¹ Տե՛ս Жордания 1919, 89:

⁴² Жордания 1919, 89.

րումը: Մահմեդականության ակտիվացումը նկատի ունենալով, մենշևիկյան «Борьба» (Պայքար) թերթը նշում էր. «Ե. Գեգեչկորու կաբինետի հեռացումն ու Ա. Չխենկելու կողմից վերջինիս ղեկավարումը, որը ստորագրել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, նշանակում է «Մուսավաթ» կուսակցության և մյուս ազգայնական տարրերի խոշոր հաղթանակ»⁴³:

Ստացվում է հետևյալ պատկերը. նախ՝ 1918 թ. մարտի առաջին տասնօրյակից սկսած թե՛ վրացական մենշևիզմի և թե՛ ՅՅԴ շրջանակներում ակտիվորեն բարձրացվում էր անկախ պետություն ունենալու գաղափարը, ապա և՛ ապրիլի առաջին տասնօրյակից հետո, երբ Ա. Չխենկելին ու վրացական մենշևիկները դեռ նոր էին Կարսը հանձնել թուրքերին ու հոչակել Անդրկովկասի անկախությունը, մենշևիկների թելադրանքով, չգիտես ինչու առաջինը անկախություն պետք է հոչակեր «Ադրբեջանը»: Անհասկանալի է նաև այն, որ «Ադրբեջան» եզրույթը համարձակ առաջադրում էին հենց վրացական մենշևիկները, որոնք ավելի վաղ Գերմանիայի հետ սկսել էին Վրաստանի անկախանալու շուրջ բանակցություններ:

Գերմանիայի դերակատարության հիմնահարցի գիտակ Ա. Հայրունին կարծում է, որ երբ Տրապիզոնում թուրքերը Սեյմին փորձում էին պարտադրել Բրեստի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող հոդվածը, Գերմանիան իր մտահոգությունն էր հայտնում Սեյմի, այդ թվում և ի դեմս ՅՅԴ խմբակցության՝ հայկական կողմի ընդդիմության հանդեպ: Անընդունելի էին համարվում, մի կողմից, Թուրքիայի դեմ պատերազմելու, իսկ մյուս կողմից՝ անգլիացիների կամ որևէ

⁴³ Аркомед 1923, 68.

այլ երրորդ ուժի աջակցությանն ապավինելու հայկական շրջաններում ի հայտ եկող կոչերը: Տարածաշրջանում «խաղաղ իրադրության» ստեղծման համար Գերմանիան անհրաժեշտ էր համարում, որ հայերը հրաժարվեն ընդդիմության փորձից, անկախության ձգտումներից, որոնց «անհուսալիությունը այժմ ստիպված են գիտակցել», և ընդառաջ են թուրքերի կողմից առաջարկվող հաշտությանը⁴⁴:

Ա. Հայրունին համոզված է, որ Գերմանիան մտադիր չէր հայերի նկատմամբ թուրքական կամայականություններն ու վայրագությունները զենքի ուժով արգելել, բայց և չէր էլ կարող ծայրահեղ հաշտվողական կեցվածք որդեգրել: Իսկապես, թուրքերի կողմից Կարսը, Արդահանը և Բաթումը գրավելուց հետո Գերմանիան լրջորեն անհանգստացավ:

Միաժամանակ, ստեղծված իրավիճակում Գերմանիային և Օսմանյան Թուրքիային մերձեցնում էր հրատապ մեկ այլ աշխարհաքաղաքական խնդիր՝ Փոքր Մերձավոր Արևելքում, մասնավորապես Իրանական Ասորպատականում Անգլիայի ակտիվացման կանխումը:

Եզրակացություններ

1918 թ. մարտից թուրքական շարունակվող արշավանքի և զուգահեռ ընթացող Տրապիզոնի ու Բրեստ–Լիտովսկի բանակցությունների ընթացքում, Անդրկովկասյան սեյմի քաղաքական ղեկավարության, հայկական ազդեցիկ կուսակցությունների միջավայրում արմատավորվում էր գերմանա-թուրքական քաղաքական կողմնորոշման որդեգրմամբ ինչպես Անդրկովկասի, այնպես էլ անկախ ազգային հանրապե-

⁴⁴ Տե՛ս Հայրունի 2013, 8, 13:

տույթունների ստեղծման գաղափարը: Այդ ողջ գործընթացն ուղղորդվում էր Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի կողմից և հետապնդում էր առայժմ մեկ գերնպատակ՝ Անդրկովկասն անջատել Խորհրդային Ռուսաստանից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ահարոնյան Գերսամ 1964, Մեծ երազի ճամբուն վրայ, Պէյրութ, «Ատլաս», 224 էջ:

«Աշխատանք» (Երևան), 31 մարտի, թիվ 91, 1918:

«Աշխատավոր» (Թիֆլիս), 25 մարտի, թիվ 31, 1918: 16 մայիսի, թիվ 45, 1918:

«Արև» (Բաքու), 3 փետրվարի, թիվ 26, 1918:

Դարբինյան Ա. 2003, Հայ ազատագրական շարժման օրերէն, Երևան, Հրատ., «Ազգ» օր., 389 էջ:

Հայրունի Ա. 2013, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ, 1918 թվականին, Երևան, ԵՊՀ հրատ., 192 էջ:

«Երիտասարդ Հայաստան» (Չիկագո), 23 փետրվարի, թիվ 78, 1918:

«Հորիզոն» (Թիֆլիս), 24 մայիսի, թիվ 97, 1918,:

Սաիլյան Բ. 2008, Արխագիայի կարգավիճակի հարցը 1917-1921 թթ., Երևան, «Լուսակն», 195 էջ:

«Պայքար», (Թիֆլիս), 16 փետրվարի, թիվ 33, 1918 :21 փետրվարի, թիվ 37, 1918: 7 ապրիլի, թիվ 74, 1918:

Авалов З. 1924, Независимость Грузии в международной политике, 1918-1921 гг., Воспоминания, Очерки, Париж, Б.и., 318 с.

Аркомед С.Т. 1923, Материалы по истории отделения Закавказья от России, Тифлис, “Красная книга”, 85 с.

Воровский В.В. 1933, Сочинения, т. 3, Москва, “Печатный двор”, , 425 с.

Генерал-майор Денстервиль 1925, Британский империализм в Баку и Персии, 1917-1918, Воспоминания, Тифлис, “Советский Кавказ”, 281 с.

Деникин А.И. 1991, Очерки русской смуты, Москва, “Мысль”, 205 с.

Жордания Н.Н. 1919, За два года. Доклады и речи, Тифлис, Изд. исторической комиссии, 224 с., Н.К. Совета раб. деп. Г. Тифлиса.

Молот” (Тифлис), 25 февраля, N 40, 1918.

Мустафа Кемаль 1929, Путь Новой Турции, 1919-1927, т. 1, Предисловие, Москва, “Литиздат”, 480 с.

Национальный архив Грузии (այսուհետև՝ НАГ), ֆ. 1818, օպ. 2, Ժ. 249, Լ. 60:

Ставровский Ал. 1925, Закавказье после октября, Москва, Госиздательство, 120 с.

Ваан Г. Меликян, *Институт истории НАН РА, д.и.н., профессор*,
Активизация идеи о вероятном создании независимых государств в контексте Брест-Литовского договора.

Резюме

С марта 1918 года в условиях турецкого нашествия на Закавказье и проходивших переговоров в Трапизоне, а затем и в Батуми, в кругах политического руководства Закавказского сейма, армянских влиятельных партий укоренилась идея создания как независимого Закавказья, так и национальных государств. Весь этот процесс руководствовался со стороны Османской Турции и Германии и преследовал пока-что одну сверхзадачу – отторгнуть Закавказье от Советской России.

Противоречье заключилось в том, что “единое” Закавказье продолжая оставаться в определенных политических отношениях с большевистской Россией, должно было исполнять условия Брест-Литовского договора. В конечном итоге именно этот фактор и привел к провозглашению независимого Закавказья.

Ключевые слова: Брест-Литовск, Сейм, С. Сапах-Гюлян, А. Чхенкели, Аркомед, Н. Жордания, Германия.

Vahan H. Melikyan, *Institute of History of the NAS RA, Dr. of Sci. in History, Professor*, **Activation of the idea of the possible creation of independent states in the context of the Brest-Litovsk Treaty.**

Summary

Since March 1918, in the conditions of the Turkish invasion in Transcaucasia and the negotiations taking place in Trabizon, and then in

Batumi, the idea of creating both an independent Transcaucasia and national states took root in the circles of the political leadership of the Transcaucasian Seim and Armenian influential parties. This whole process was guided by Ottoman Turkey and Germany and pursued for the time being one super-task – to tear the Transcaucasus away from Soviet Russia.

The contradiction consisted in the fact that the “united” Transcaucasia, while continuing to remain in certain political relations with Bolshevik Russia, had to fulfill the conditions of the Brest-Litovsk Treaty. Ultimately, it was this factor that led to the proclamation of an independent Transcaucasus.

Key words: Brest-Litovsk, Seim, S. Sapakh-Gyulyan, A. Chkhenkeli, Arkomed, N. Zhordania, Germany.

ԷՂԻՏԱ Վ. ԴԱԴԱՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ
dadayane77@gmail.com

**ՀԱՅ-ՊԱՐՄԿԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1918-1920 ԹԹ.)***

Բանալի բառեր՝ Հայաստանի առաջին Հանրապետություն, միջազգային ճանաչում, Պարսկաստան, Ներսես (Գարուշ) Գևորգյան, Հովսեփ Արղության, գաղթականություն, պարսկահայություն:

Ներածություն

1918 թ. մայիսի 28-ին դարեր անց հայոց պետականության վերականգնումից հետո հայկական նորանկախ պետության առջև ծառայան մի շարք առաջնահերթ խնդիրներ: Դրանցից էր տարբեր պետությունների հետ դիվանագիտական կապեր հաստատելու և միջազգային ճանաչման հասնելու հրամայականը: Շատ չանցած դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին մի շարք երկրների հետ¹:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաջին փաստաթուղթն Օսմանյան կառավարության հետ 1918 թ. հունիսի 4-ին ստորագրված Բաթումի պայմանագիրն էր: Այդ պայմանագրով օսմանյան կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախությունը:

* Ներկայացվել է 21. V.2022թ., գրախոսվել է 10.VI. 2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

¹ Տե՛ս մանրամասն Կեսոյան 2021, 56-74:

Ինչ վերաբերվում է Պարսկաստանին, ապա այն հարևան միակ երկիրն էր, որը Հայաստանի հետ տարածքային կամ քաղաքական խնդիրներ գրեթե չուներ: Միակ խնդիրը ծավալվում էր Նախիջևանի հարցում:

Հայ-պարսկական հարաբերությունների սկզբնավորումը

1918 թ. վերջերին Անդրկովկասից օսմանյան զորքերի հեռանալուց հետո պարսկական կառավարությունը միջամտեց Նախիջևանի խնդրին, փորձելով տիրանալ այդ երկրամասին²: Սակայն 1919 թ. մայիսի 3-ին, երբ անգլիացի զեներալ Դևին ու Դրոն ստորագրեցին Նախիջևանի շրջանի ազգաբնակչությանը ուղղված հրաման՝ շրջանը Հայաստանի Հանրապետությանը միացնելու մասին, իրավիճակը հանդարտվեց³: Դրան հատկապես նպաստեց 1919 թ. մայիսի 15-ին Իրանի շահին ՀՀ վարչապետ Ալ. Խատիայանի ուղարկած հեռագիրը, որում շեշտվում էր «նոր հարևանության» և հայ ու պարսիկ ժողովուրդների «դարավոր» բարեկամության մասին⁴: Նախիջևանից անգլիական զորքերի հեռանալու, ինչպես նաև այնտեղ հայկական իշխանություն հաստատվելու լուրն Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես Եպիսկոպոս Մելիք-Թանգյանը ստացավ 1919 թ. մայիսի 24-ին⁵:

Հայաստանի և Պարսկաստանի հարաբերությունները 1918-1920 թթ. ընթացքում ակտիվ էին հատկապես առևտրատնտեսական ոլորտում: Հայաստանի Հանրապետություն-

² Տե՛ս Զոհրաբյան 2010, 20-37:

³ «Հայոց պատմություն» 2010, 186:

⁴ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց.1, գ. 13, թ. 20:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց.7, գ. 1, թ. 7:

նը, գտնվելով սոցիալ-տնտեսական ծանր վիճակի մեջ և փաստացի շրջապատված լինելով թշնամական պետություններով, առավել քան կարևորում էր Պարսկաստանի հետ բազմակողմանի կապերի ամրապնդումը: Վերջինս իր հերթին հետաքրքրված էր Հայաստանի տարածքով Թավրիզ նավթ ներմուծելու խնդրով⁶: Երկու պետությունները տնտեսական շահերի համընկնմամբ պայմանավորված՝ 1918 թ. սկսեցին ակտիվ առևտրական կապեր հաստատել:

Սա հանգեցրեց նրան, որ արդեն 1919 թ. հունիսի 11-ին Ալ. Խատիսյանը Պարսկաստանի կառավարության նախագահ Վոսուդ Էդ Դովուլեի հետ գրազրության ժամանակ ցանկություն հայտնեց հայ և պարսիկ ժողովուրդների միջև բարեկամական կապերն ամրապնդելու, ինչպես նաև գաղթականության, տրանզիտի, երկաթգծի և այլ հարցերի լուծման նպատակով Թեհրան ուղարկել հատուկ ներկայացուցիչ և խնդրեց շահի համաձայնությունը⁷:

Դրան հետևեց շահի 1919 թ. հունիսի 18-ի հեռագիրը, որով նա ՀՀ-ում Պարսկաստանի կոնսուլ Միրզա Ասադ օղլու խան Մանուել մոլլի միջոցով Ալ. Խատիսյանին հայտնում է, որ Փարիզի խաղաքարար կոնֆերանսի ավարտից հետո երկու երկրների հարաբերությունները կստանան պաշտոնական բնույթ⁸:

Հովսեփ Արղությանի դիվանագիտական գործունեությունը

Պարսկաստանում Հայաստանի Հանրապետության

⁶ Տե՛ս «Հայոց պատմություն» 2010, 126:

⁷ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ.13, թ.13:

⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 13:

առաջին լիազոր ներկայացուցիչ է նշանակվում Իշխանը՝ Հովսեփ Արղությանը⁹: Նորանշանակ ներկայացուցչի Թեհրան ուղևորվելու լուրն Ատրպատականի թեմի առաջնորդը ստանում է 1919 թ.օգոստոսի 19-ին՝ ՀՀ Ներքին գործերի նախարարի օգնական Ա. Մաքսապետյանից¹⁰:

Երևան-Ջուլֆա երկաթգիծը 1919 թ. հուլիսին Նախիջևանում ծագած թուրք-թաթարական հակահայկական ապստամբության պատճառով փակվել էր: Այդ իսկ պատճառով Հովսեփ Արղությանի պատվիրակությունը 1919 թ. դեկտեմբերին Բաքվից Կասպից ծովով է մեկնում Թեհրան և այնտեղ հասնում 1920 թ. հունվարի 4-ին¹¹: Հովսեփ Արղությանը նախքան Թեհրան մեկնելը Բաքվում մասնակցում է հայադրբեջանական խորհրդածողովի աշխատանքներին, որում քննարկվում էին երկու պետությունների սահմանների, երկաթուղու, գաղթականների, հյուպատոսական և դատախրավական հարցեր¹²: Թեհրանի հայերը Հայաստանի ներկայացուցչի մոտալուտ ժամանման լուրը իմանում են Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դեսպան Մարտիրոս Հարությունյանից:

ՀՅԴ գործիչ Մամունը (Ստեփան Թադևոսյան) իր հուշերում նկարագրում է այն ուրախությունն ու ոգևորությունը, որը համակել էր Թեհրանի հայությանը՝ դեսպանի ժամանման օրը: Թեհրանահայերը նրան դիմավորում են մեծ

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 37, հմմտ. «Հայոց պատմություն» 2010, 127:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 7, գ. 3, թ. 2:

¹¹ Տե՛ս «Հայոց պատմություն» 2010, 127: Գ. Կետյանը նշում է, որ Արղությանը Երևանից Թեհրան ճանապարհով է նոյեմբերի 1-ին (տե՛ս Կետյան 2010, 60):

¹² Բաղայան http://www.diplomat.am/publ/an/armenian_diplo_iran/arajin_despan-utyun_1/59-1-0-266 (մուտք՝ 11.04.2022):

ցնծությամբ, ճոխ սեղանով, երաժշտությամբ ու ծափողջույններով¹³: Հայտնի երգչուհի և դաշնակահարուհի Շաքե Մակարյանի մայր Արաքս Մակարյանն իր «Մոխրացած հուշեր» գրքում նկարագրելով դեսպանի հետ հուզումնալից հանդիպումը՝ գրում է. «Ես ապրող այն միակ բախտավորն եմ, որ 74 տարի առաջ տեսել եմ մեր անդրանիկ դեսպանին Թեհրանում... Մանկական մեր հասկացողությամբ՝ դեսպան ասած բանը հայության մեծն էր և հայոց թագավորը»¹⁴:

Հովսեփ Արղությանն, ակտիվ գործունեություն ծավալեց հետևյալ խնդիրների լուծման շուրջ. - Պարսկաստանի հետ կնքել բարեկամության և առևտրական պայմանագիր, ինչպես նաև երկաթուղային ու փոստ-հեռագրային համաձայնագրեր.

- պարզել պարսկահայերի թվաքանակը, նրանց կապել Հայաստանի հետ և ներգրավել հայրենիքի վերաշինության գործին,

- ճշտել Պարսկաստանում և Միջագետքում /Բաքուբերում/ գտնվող հայ գաղթականության թվաքանակը, պարզել նրանց կացության պայմանները և Հայաստան ներգաղթելու հնարավորությունը,

- կապեր հաստատել Հնդկաստանի և Միջագետքի հայերի հետ,

- պարզել այն միջոցները, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետության ու Պարսկաստանի միջև

¹³ Տե՛ս Մամսն 1934, 61-67:

¹⁴ Մակարյան 1998, 58-59:

առևտրական հարաբերությունների հաստատմանը¹⁵:

Այս խնդիրների ուղղությամբ աշխատանքներ սկսվել էին ավելի վաղ, մինչև Թեհրանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի հաստատվելը և, կարելի է ասել, շոշափելի արդյունքներ արձանագրել:

Այս առումով հետաքրքրական է Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ներսես (Գարուշ) Գևորգյանի 1919 թ. հունիսի 19-ի զեկուցումը Մակուի խանին: Նրան լիազորված էր գնալ Մակու և ծանոթանալ տեղի հայության վիճակին: Մակուի խանի հետ նրա տեսակցությանը ներկա էր նաև Թավրիզից Մակու ժամանած Թադեի վանքի նախկին վանահայր Պետրոս վարդապետ Ղազարյանը¹⁶: Այդ տեսակցության ժամանակ ծավալվող խոսակցությունից ակնհայտ էրևում է, որ Մակուում գտնվող հայերի վիճակը ծանր է եղել: Նրանց մի մասը անգամ մահմեդականություն էր ընդունել: Եվ, քանի որ, հայկական թաղամասերում հայությանը տեղավորելու համար տեղ չկար, որոշվեց բոլորին ուղարկել Թավրիզ: Հատկապես խնդիր էին մահմեդականություն ընդունած կանայք և արհեստավորները: Նախ ոչ մի կին իր ցանկությամբ չէր ընդունել մահմեդականություն, իսկ ինչ վերաբերվում է արհեստավորներին, ապա, ինչպես նշված է զեկուցագրում, նրանք չէին կարող մնալ, որովհետև մեկի եղբորն

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ. 43-44:

¹⁶ Պետրոս վարդապետ Ղազարյանը Պարսկաստան տեղափոխվելուց հետո Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի հետ ակտիվ զբաղվել է Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գաղթականների խնդրով, տե՛ս Վաևերագրեր հայ եկեղեցու պատմութեան 2020, 178:

էին սպանել, մյուսի երեխային¹⁷: Խանն ամեն կերպ փորձում էր ի ցույց դնել իր բարեկամական զգացմունքները հայերի նկատմամբ: Միննույն ժամանակ նա Ներսես Գևորգյանին հանձնում է նամակ՝ հասցեագրված Ալ. Խատիսյանին և բավոր խնդրում է հաղորդել հետևյալը.

- Մակուի երկաթգիծը հանձնել պարսից կառավարությանը
- Որքան գարի և կորեկ Հայաստանի կառավարությունը ցանկանա, Մակուի խանությունը կարող է տալ, իսկ ցորեն՝ երբ նորը դուրս կգա,
- Հայկական կողմը թող ուրիշ խաների հետ գործ չանի և ամբողջ գործը իրեն հանձնի և որ ինքը ամեն կերպ կբավարարի իրենց պայմանները...¹⁸:

Այս հանդիպման իսկապես մեծ կարևորություն ունենալը, երևում է նաև Ատրպատականի հայոց թեմական խորհրդի գրություններից՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը¹⁹: Դրանցից նաև պարզ է դառնում, թե Հայաստանի կառավարությունն ինչքան է կարևորել գաղթականների խնդիրը և ինչ քայլեր է ձեռնարկել նրանց ավելի ապահով վայրեր տեղափոխելու ուղղությամբ: Ահա թե ինչ է գրված այդ գրություններից մեկում. «Մեծ ուրախությամբ կլինի, որ մերոնք գրաւեն Բայազէ-

¹⁷ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 23: Ցավոք, մենք չկարողացաքն գտնել որևէ լրացնող փաստաթուղթ, թե ինչու էին խոցելի խումբ համարվում հենց արհեստավորները:

¹⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 23:

¹⁹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 7, գ. 2, թ. 1-9:

տը, Վանը, որը մեզ յամար շատ կարեւոր է և գաղթականութեանը բնակեցնելու միակ միջոցը: Բանակցութիւնները շատ բարեյաջող են ավարտուել: Անյամբեր սպասում ենք Ջանգեզուրի և Ղարաբաղի միացմանը հանրապետութեան հետ»²⁰: Սակայն ակնհայտ էր, որ ներքին ծանրագույն իրավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետությունը որքան էլ ցանկանար, չէր կարող հայ գաղթականության այդ հատվածի տեղափոխել հայրենիք: Երկիրն այնպիսի ծանր իրավիճակում էր, որ դժվար էր հոգալ անգամ Թավրիզում գտնվող և Ջուլֆայի երկաթգծում ծառայող ՀՀ վեց միլիցիոներների ծախսերը, ովքեր պահվում էին ամերիկյան «Ռեյլեֆ» կոմիտեի նպաստով²¹: Ինչ վերաբերվում է պարսկահայության հետ կապին, ապա դրանք հիմնականում ծավալվում էին Հայաստանի օգտին հանգանակություններ կազմակերպելու շրջանակներում²²: Դեռ նոր էին ամրապնդվել կապերը մայր հայրենիքի հետ, երբ բռնկվեց թուրք-հայկական պատերազմը և պարսկահայերի հայրենիք վերադառնալու երազանքն ի չիք դարձավ: 1920 թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ելնելով նյութական միջոցների սղությունից, որոշում է լուծարել Թեհրանում ՀՀ ներկայացուցչությունը և դիվանագիտական անձնակազմին հետ կանչել Երևան: Հավանաբար Հովսեփ Արղությանին հրահանգվում է գործերը հանձնել տեղացիներից մեկին՝ նրան նշանակելով ՀՀ պատվավոր ներկայացուցիչ, առանց պետական գանձարանից վճարումներ ստանալու իրավունքի:

²⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 7, գ. 2, թ. թ. 2:

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 7, գ. 8, թ. 2:

²² Տե՛ս «Հայոց պատմություն» 2010, 128:

Հայաստանի Հանրապետության դեսպանության աշխատակիցներից Ս. Առաքելյանը հետագայում համաձայնվում է աշխատել Խորհրդային Հայաստանի դեսպանությունում, իսկ Հովսեփ Արղությանը մինչև 1922 թ. լքված վիճակում մնալով ստիպված է լինում ընտանիքով տեղափոխվել Ֆրանսիա, որտեղ էլ 1925 թ. մահանում է և հողին հանձնվում Փարիզում: Այսպիսով Իրանում Հայաստանի Հանրապետության առաջին դեսպանության մոտ մեկամյա գործունեությունն ընդհատվում է²³:

Եզրակացություններ

Այսպիսով, կարելի է միանշանակ պնդել, որ Հայաստանի Հանրապետության գոյության երկուսուկես տարիներին Պարսկաստանը դարձավ նրա միակ հարևանը, ում հետ ձևավորվեցին բարեկամական և սերտ հարաբերություններ: Պարսկական կառավարությունը մեծ ներդրում ունեցավ հայ գաղթականությանն օգնելու և այդ ծանրագույն իրավիճակում հայկական կառավարությանն աջակցելու հարցում: Պարսկահայությունը դարձավ երկրին ֆինանսապես օգնելու կարևորագույն աղբյուր, իսկ տնտեսական համագործակցությունը, չնայած, պայմանագրերի տեսքով միս ու արյուն չստացավ, իսկ երբեմն էլ հանդիպում էր խոչընդոտների, Հայաստանի ներքին կյանքի վրա ունեցավ դրական ազդեցություն:

²³ Տե՛ս Բաղայան <http://www.aniarc.am/2019/06/12/armenia-iran-1918-1922-garnik-badalyan/> (մուտք՝ 11.04.2022):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բաղայան Գ., Հայաստան-Պարսկաստան հարաբերությունները 1918-1922 թթ. մաս VI, <http://www.aniarc.am/2019/06/12/armenia-iran-1918-1922-garnik-badalyan/>:

Բաղայան Գ., Հայաստանի առաջին դեսպանությունը Իրանում (մաս առաջին), http://www.diplomat.am/publ/an/armenian_diplo_iran/arajin_des_panutyun_1/59-1-0-266:

Չոհրաբյան Է. 2010, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 428 էջ:

Կետյան Գ. 2021., Հայաստանի առաջին հանրապետության ներկայացվածությունը.- «Հայոց պատմության հարցեր», N 2(23), Երևան, էջ 56-74:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ.43-44:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 13:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 275, ց. 7, գ. 1, 2, 3:

«Հայոց պատմություն» 2010, հ. IV, գ. առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, «Զանգակ- 97» հրատ., 800 էջ+ 24 էջ ներդիր:

Մակարյան Ա. 1998, Մոխրացած հուշեր. երկու պատմական հանդիպում, Բոստոն-Միացեալ նահանգներ, Հեղինակային հրատ., 367 էջ:

Սամսոն 1934, Անդրանիկ դեսպանը Պարսկաստանում, «Վեմ: հանդես, մշակույթի և պատմության», Փարիզ, հատոր Բ, թիվ 3, էջ 61-73:

Վալերագրեր հայ եկեղեցու պատմութեան 2020, Գիրք ԻԳ, Տ. Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան (կազմեց՝ Գ. Ավագեան,) Էջմիածին., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 543 էջ:

Едита В. Дадаян, *Институт истории НАН РА, Из истории армяно-персидских межгосударственных отношений (1918-1920 гг.)*

Резюме

За два с половиной года существования Республики Армения (1918-1920 гг.) государство добилось не только международного признания в сложных внутренних и внешних условиях, но и установило активные дипломатические отношения со многими странами. В статье проанализированы армяно-персидские межгосударственные отношения, которые не ограничивались только

дипломатическим представительством. Армяно-персидские отношения были особенно развиты в экономике и вопросах размещения беженцев.

Действуя в тяжелой социально-экономической ситуации, республика находилась в окружении враждебных государств и более чем нуждалась в укреплении связей с Персией. Тем более, что последнюю интересовали вопросы вывоза нефти через территорию Армении. Поэтому совпадение экономических интересов двух стран привело к тому, что с 1918 г. они стали активно сотрудничать в торговой сфере. Была также проделана большая работа по размещению беженцев. Овсеп Аргутян, назначенный полномочным представителем республики, пытался системно решать эти проблемы. Персидское правительство действительно внесло большой вклад в помощь армянским беженцам, оно активно содействовало армянскому правительству в имевшейся сложной ситуации. Персидские армяне стали важным источником финансовой помощи родной стране, и хотя налаженное экономическое сотрудничество не было оформлено договорами и иногда встречало препятствия, оно положительно сказывалось на внутренней жизни Армении и сохранилось даже в советский период.

Ключевые слова: Первая Республика Армения, международное признание, Персия, Нерсес (Гаруш) Горган, Овсеп Аргутян, беженцы, персидские армяне.

Edita V. Dadayan, *Institute of History of the NAS RA, From the History of Armenian-Persian Inter-State Relations (1918-1920).*

Summary

During the two and a half years of the existence of the Republic of Armenia (1918-1920), the state not only achieved international recognition in difficult internal and external conditions, but also established active diplomatic relations with many countries. The article analyzes the Armenian-Persian interstate relations, which were not limited to diplomatic representation. Armenian-Persian relations were especially developed in the economy and questions of the accommodation of refugees.

Acting in a difficult socio-economic situation, the republic was surrounded by hostile states and more than needed to strengthen ties with

Persia. Moreover, the latter was interested in the issues of exporting oil through the territory of Armenia. Therefore, the coincidence of the economic interests of the two countries led to the fact that since 1918 they began to actively cooperate in the trade sphere. A lot of work has also been done to accommodate refugees.

Hovsep Arghutyan, appointed as the plenipotentiary representative of the republic, tried to systematically solve these problems. The Persian government really made a great contribution to helping the Armenian refugees, it actively assisted the Armenian government in the difficult situation. Persian Armenians became an important source of financial assistance to their native country, and although the established economic cooperation was not formalized by agreements and sometimes met with obstacles, it had a positive effect on the internal life of Armenia and was preserved even in the Soviet period.

Key words: First Republic of Armenia, international recognition, Persia, Nerses (Garush) Gorgyan, Hovsep Arghutyan, refugees, Persian Armenians.

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ
r.azizbekyan@mail.ru

ՀՀ ԵՎ ՌԴ ՄԻՋԵՎ ԿՐԹԱՍՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1991-2008 ԹԹ.*

Բանալի բառեր՝ ՀՀ, ՌԴ, հումանիտար փոխգործակցություն, մշակութային, կրթական, լեզվամշակութային կապեր, իրավապայմանագրային հենք:

Ներածություն

Հայ և ռուս ժողովուրդների հոգևոր, մշակութային ու նյութական արժեքների միահյուսման պատմական ավանդույթները հետխորհրդային շրջանում ՀՀ և ՌԴ միջև հումանիտար կապերի զարգացման ամուր հենք հանդիսացան: Պատահական չէր, որ ԽՍՀՄ փլուզման հետևանքով այդ ոլորտում հայ-ռուսական փոխգործակցությունը որոշ ընդհատումից հետո զարգացման նոր փուլ թևակոխեց: Այն սկսեց իրականացվել միջպետական մակարդակով և կարևոր տեղ զբաղեցնելով երկու երկրների համագործակցությունում՝ ձեռք բերեց առանձնահատուկ նշանակություն:

Իրավապայմանագրային հենքը

Հումանիտար ոլորտում համագործակցության զարգացումը դրսևորվեց 1991-2008 թթ. տվյալ բնագավառում եր-

* Ներկայացվել է 4. IV.2022թ., գրախոսվել է 21.IV.2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

կու երկրների փոխգործակցության իրավական կանոնակարգմանը միտված շուրջ 20 միջկառավարական համաձայնագրի և կազմակերպչական այլ փաստաթղթերի ստորագրմամբ¹: Դրանց թվում էին 1995 թ. հունիսի 27-ին ստորագրված՝ «Բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի աստեսավորման բնագավառում համագործակցության մասին»², նույն թվականի նոյեմբերի 13-ին ստորագրված՝ «Մշակույթի, գիտության ու կրթության բնագավառներում համագործակցության մասին»³ համաձայնագրերը: Վերջինիս հիման վրա ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրվեցին մշակույթի, գիտության և կրթության բնագավառներում փոխանակման եռամյա ծրագրեր⁴: 1997 թ. օգոստոսի 29-ին էլ ստորագրվեց Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին⁵, միջկառավարական համաձայնագիրը, իսկ 2003 թ. հունվարին ստորագրվեց «Մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համատեղ հռչակագիրը⁶: Ստորագրվեցին նաև այդ բնույթի այլ փաստաթղթեր ևս: Ըստ էության, ստեղծվել էր բավական ընդգրկուն իրավապայմանագրային հենք, որը ներառում էր նաև համագործակցության բազմակողմ ձևաչափեր: Այս առումով հատկանշական է, որ 2005 թ. օգոստոսին տեղի ունեցած ԱՊՀ պետությունների ղեկավարների նիստի ժամանակ Հայաստանը

¹ Տե՛ս Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները 2010, 41:

² Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, 657-658:

³ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, 684-688:

⁴ Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 207, թ. 99:

⁵ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, 383-385:

⁶ Տե՛ս Оганисян 2012, 85:

պաշտպանեց Ռուսաստանի նախաձեռնությունը՝ ԱՊՀ-ում հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի ստորագրման հարցում⁷:

Այդուհանդերձ հումանիտար բնագավառում ստորագրված պայմանագրերի որոշ դրույթներ գործնականում այդպես էլ չէին իրագործվում: Այդ հանգամանքը հիմնականում պայմանավորված էր իրավաբանական փաստաթղթերում հումանիտար կապերի ամրապնդմանը նպատակաուղղված երկկողմ քայլերի հստակ համաձայնեցման ու համադրման համապատասխան մեխանիզմների դրույթների բացակայությամբ, լիարժեք փոխգործակցության ձևաչափի սահմանափակությամբ և այլն: Դա բնակաբար ժամանակի պահանջներին համապատասխանող, ավելի համապարփակ նոր համաձայնագրերի կնքման անհրաժեշտություն էր առաջացնում: ՀՀ և ՌԴ միջև 1995 թ. նոյեմբերի 13-ին ստորագրված՝ «Մշակույթի, գիտության ու կրթության բնագավառներում համագործակցության մասին» վերոնշյալ համաձայնագիրը դադարեց գործել, երբ 2012 թ. մարտի 12-ին ուժի մեջ մտավ 2011 թ. հոկտեմբերի 24-ին երկու երկրների կառավարությունների միջև ստորագրված հումանիտար ոլորտում համագործակցության մասին՝ փոխգործակցության ավելի լայն ձևաչափ նախատեսող համաձայնագիրը⁸: Այն ըստ էության դարձավ տվյալ բնագավառում համագործակցության հետագա զարգացման հիմնարար փաստաթուղթը:

⁷ Տե՛ս Оганиян 2012, 85:

⁸ Տե՛ս Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. պատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ 2017, 112-113:

Մշակութային կապերի զարգացումը

1990-ականների կեսերից հայ-ռուսական համապարփակ շփումները նորից աստիճանաբար սկսեցին ակտիվանալ: Դրանում կարևոր դեր խաղաց 1994 թ. մայիսի 28-ին Երևանում կնքված՝ ՀՀ և ՌԴ մշակույթի նախարարությունների միջև «Մշակութային համագործակցության մասին» համաձայնագիրը⁹: Առաջնորդվելով այդ համաձայնագրով՝ երկու երկրների պատկան մարմինները 1995 թ. Մոսկվայում համատեղ կազմակերպեցին Հայաստանի մշակույթի օրեր, ինչը դեռևս խորհրդային ժամանակաշրջանից ավանդական բնույթ էր կրում: Հաջորդ տարի Հայաստանում անցկացվեցին Ռուսաստանի մշակույթի օրեր, որը, ըստ էության, վերածվեց հայ-ռուսական բարեկամության տոնի¹⁰:

Քննվող ժամանակաշրջանում երկու ժողովուրդների դարավոր բարեկամության շարունակականությունը դրսևորվում էր նաև մշակութային նոր նյութական արժեքների ստեղծմամբ: Այսպես, Մոսկվայի հիմնադրման 850-ամյակի առթիվ ՌԴ մայրաքաղաքի պուրակներից մեկում 1997 թ. օգոստոսին տեղադրվեց մոսկվաբնակ հայ քանդակագործներ Ֆ. և Վ. Սողոյանների հեղինակած «Միացյալ խաչ» հուշարձանը, որը Հայաստանի նվերն էր Մոսկվային¹¹:

Վերհիշյալ միջոցառումները վկայում էին միմյանց մշակութային արժեքներին անմիջական հաղորդակից լինելու երկու ժողովուրդների մեծ ցանկության մասին: Դրանով

⁹ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, 357:

¹⁰ Տե՛ս Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, //archive.mid.ru (12.02.2022):

¹¹ Հատկանշական է, որ 2013 թ. դեկտեմբերին Երևանի կենտրոնում ևս տեղադրվեց «Միացյալ խաչ» հուշարձանի կրկնօրինակը:

էր պայմանավորված, որ ՀՀ և ՌԴ համապատասխան գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների համատեղ հովանավորությամբ՝ 2001 թ. նոյեմբերի 12-16-ը Ռուսաստանում կրկին անցկացվեցին Հայաստանի մշակույթի օրեր¹²:

2000-ականներին հայ-ռուսական մշակութային կապերն էլ ավելի ակտիվացան: Դրան մեծապես նպաստեց ՀՀ և ՌԴ մշակույթի նախարարությունների միջև 2002 թ. նոյեմբերի 22-ին Երևանում ստորագրված եռամյա (2003-2005 թթ.) մշակութային համագործակցության մասին ծրագիրը, որի հիման վրա մշակվեց այդ բնագավառում փոխգործակցության հեռանկարային 10 տարվա ծրագիր¹³: Նույն թվականին Երևանում բացվեց Ռուսարտկենտրոնի ներկայացուցչությունը, որը հետագայում վերանվանվեց ԱՊՀ, «Արտասահմանում ապրող հայրենակիցների և միջազգային հումանիտար համագործակցության գործերով Դաշնային գործակալություն»՝ Ռուսհամագործակցություն¹⁴: Երևանում 2007 թ. սկսեցին գործել «Մոսկվայի տուն» մոսկովյան մշակութային-գործարար ու Սանկտ Պետերբուրգի տեղեկատվական-գործարար կենտրոնները, իսկ 2008 թ.՝ Գիտության և մշակույթի ռուսա-

¹² Տե՛ս նաև ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 108, թ. 141-143:

¹³ Տե՛ս նաև ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 10, գործ 114, թ. 112:

¹⁴ ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 2009 թ. սեպտեմբերյան նիստի որոշմամբ հենց Ռուսհամագործակցությանը հանձնարարվեց երկու երկրների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ մշակել 2011 թ. հոկտեմբերի 24-ին ստորագրված «Հումանիտար ոլորտում համագործակցության մասին» վերոհիշյալ առանցքային համաձայնագրի նախագիծը:

կան կենտրոնը¹⁵:

ՀՀ-ում և ՌԴ-ում երկու ժողովուրդների մշակույթի օրերի անցկացումները, համերգների, ցուցահանդեսների, զանազան փառատոների, ստեղծագործող շրջանների ներկայացուցիչների հանդիպումներն ու մշակույթի ակնառու գործիչների հոբելյաններին նվիրված համատեղ միջոցառումների կազմակերպումը աստիճանաբար կանոնավոր բնույթ ստացան: Այսպես՝ 2003 թ. Հայաստանի և Ռուսաստանի տարբեր քաղաքներում կազմակերպվեցին համերգներ և միջոցառումներ՝ նվիրված Ա. Խաչատրյանի 100-ամյակին: Ս. Փարաջանովի 80-ամյակի կապակցությամբ Ռուսաստանի մի շարք քաղաքներում կազմակերպվեցին նրան նվիրված ցուցահանդեսներ և մեծ վարպետի նկարահանած ֆիլմերի ցուցադրություններ: Նույն 2003 թ. փետրվարին Երևանում անցկացվեցին Ռուսական կինոյի օրեր, իսկ 2004 թ. մարտին՝ Մոսկվայում Հայկական ֆիլմերի շաբաթ և այլն¹⁶: Մշակութային ոլորտում հայ-ռուսական կապերի ընդլայնմանը զգալիորեն խթանեցին վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2004 թ. ապրիլի 26-30-ը Հայաստանում կազմակերպված Ռուսական մշակույթի օրերը¹⁷:

Երկու բարեկամ ժողովուրդների մշակույթների միահյուսման և երկխոսության ամենավառ դրսևորումներից էր Ազգային տարիների՝ 2005 թ. Հայաստանում Ռուսաստանի

¹⁵ Տե՛ս Российско-армянское гуманитарное сотрудничество 2011: Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները 2010, 42:

¹⁶ Տե՛ս История дипломатических отношений России и Армении, 30.10.2006 (обновлено 07.06. 2008). <https://ria.ru/20061030/55242099.html> (10.02.2022):

¹⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 10, գործ 114, թ. 112:

Դաշնության տարվա և 2006 թ. Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության տարվա անցկացումը, ինչն աննախադեպ և նշանակալի իրադարձություն էր ՀՀ և ՌԴ միջև ծավալված բազմաբնույթ համագործակցության տարեգրության մեջ: Այդ ընդգրկուն մշակութային փառատոնների ծրագրերում ներառված էին նաև ծանրակշիռ կրթական և տեղեկատվական միջոցառումներ¹⁸: Երկու երկրների մշակութային կապերի զարգացման առումով հատկապես կարևոր ուղենիշ դարձան Ազգային տարիների շրջանակներում 2005 թ. Երևանում Մեծ թատրոնի բալետային խմբի, Մոսկվայի Կ. Ստանիսլավսկու ակադեմիական և Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի անվան երաժշտական թատրոնների հյուրախաղերը, ինչպես նաև 2006 թ. Մոսկվայի Ա. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանում ու Սանկտ Պետերբուրգի պետական էրմիտաժում Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Էջմիածնի գանձեր» գեղարվեստական մասունքների ցուցադրությունը և «Հայաստանի 12 մայրաքաղաքները» խորագրով՝ նույն Էրմիտաժում բացված Հայաստանի պատմությանն ու մշակույթին նվիրված մշտական գործող ցուցադրությունը¹⁹: Հատկանշական էր, որ Ազգային տարիների շրջանակներում նախ Երևանում, ապա՝ Մոսկվայում ներկայացվեց նաև Հայաստանի ազգային արխիվի և ՌԴ գրականության ու արվեստի, հին ակտերի, կենտրոնական, պատմական, կինոֆոտո պետական արխիվների կողմից առաջին անգամ համատեղ կազմակերպված «Երկու մշակույթների երկխոսություն. ռուս-հայկական մշակութային կապերը 19-20-րդ դարերում» խորագրով ցուցա-

¹⁸ Տե՛ս Ռоссийско-армянское гуманитарное сотрудничество 2011:

¹⁹ Տե՛ս Григорян 2018, 86:

հանդես: Վերջինում ներկայացված էին երկու ժողովուրդների պատմության մեջ անջնջելի հետք թողած ականավոր գրողների, նկարիչների, դերասանների, ռեժիսորների, գիտնականների և հասարակական գործիչների մասին փաստագրական, կենսագրական, հուշագրական եզակի նյութեր: Ռուսաստանում Հայաստանի տարվա շրջանակներում Մոսկվայի կենտրոնում տեղի ունեցավ հայ մեծանուն կոմպոզիտոր Ա. Խաչատրյանի արձանի բացման հանդիսավոր արարողությունը: 2006 թ. Հայ մշակույթի օրեր անցկացվեցին նաև ՌԴ մարզերում՝ Սամարայում, Ռոստովում, Եկատերինբուրգում, Աստրախանում: Ընդհանուր առմամբ Հայաստանում և Ռուսաստանում անցկացված վերոնշյալ խոշորագույն մշակութային տոնահանդեսի շրջանակներում կազմակերպվեցին ավելի քան 200 տարաբնույթ միջոցառումներ:

ՀՀ-ում և ՌԴ-ում երկու երկրների Ազգային տարիների անցկացումը նոր թափ հաղորդեց հայ-ռուսական փոխգործակցության հետագա ծավալմանը հումանիտար ոլորտն ընդգրկող բոլոր բնագավառներում: Դրան իր նպաստը բերեց նաև 2007 թ. մայիսի 21-ին Հայաստանի մշակույթի և երիտասարդության հարցերի ու Ռուսաստանի մշակույթի և զանգվածային հաղորդակցության նախարարությունների միջև կնքված «Մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը ²⁰: Արդյունքում ռուսական մշակույթն ու ավեստը կանոնավոր սկսեց ներկայացվել Հայաստանում կազմակերպվող միջազգային փառատոններում՝ «Ոսկե ծիրան» երևանյան կինոփառատոնում, «Ինտերֆեստ-

²⁰ Տե՛ս Միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, երկկողմ միջազգային պայմանագրեր, 2007-2008, 176-181:

Երևան» թատերական փառատոնում և այլն: Հայ կինոգործիչներն ամեն տարի մասնակցում էին Անապայի «Կինոշոկ» և Մոսկիի «Կինոտավր» միջազգային փառատոներին: Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնն ընդգրկվեց ԱՊՀ և մերձբալթյան երկրների ռուսական թատրոնների աջակցության դաշնային ծրագրում: Այդ թատրոնը Սանկտ Պետերբուրգում կազմակերպվող «Հանդիպումներ Ռուսաստանում» ռուսական թատրոնների ամենամյա փառատոնի մշտական մասնակիցներից էր: Երկու երկրներում պարբերաբար կազմակերպվում էին թատերախմբերի, երաժշտական համույթների, կինոյի, թատրոնի և արվեստի առանձին գործիչների հյուրախաղեր: Հայաստանի նկարիչների միությունը Մոսկվայի «Նկարչի կենտրոնական տուն» ցուցահանդեսային միավորման սրահներում կազմակերպվող ցուցահանդեսների գրեթե մշտական մասնակիցներից էր²¹: Հայ հրատարակիչներն ու գրատարածողները կանոնավոր մասնակցում էին Ռուսաստանում անցկացվող գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառներին: Ակտիվորեն համագործակցում էին նաև ՌԴ պետական և ՀՀ ազգային գրադարանները, երկու երկրների արխիվային գերատեսչությունները, թանգարաններն ու այլ մշակութային հաստատությունները: Հայ-ռուսական դարավոր գրական կապերը վերստին սկսեցին աշխուժանալ: Աստիճանաբար վերականգնվեց երկու երկրների գրական շրջանների ներկայացուցիչների միջև պարբերաբար անցկացվող հանդիպումների բարի ավանդույթը: Ռուս գրողներն ու թարգմանիչները դարձան Երևանում ավանդաբար կազմակերպվող «Թարգման-

²¹ См' у Григорян 2018, 86-87:

չաց տոնի» մշտական մասնակիցներ: Այդ հանդիպումների առաջին շոշափելի արգասիքը դարձավ «Ճանապարհ դեպի Արարատ» գրքի հրատարակումը, որում ամփոփված էին ռուս գրողների ստեղծագործությունները Հայաստանի մասին: Երևանում 2008 թ. ապրիլին բացվեց Ռուսական գրքի կենտրոն: Նույն թվականին ՀՀ-ում կազմակերպվեց Ռուսական մշակույթի սեզոն, իսկ 2009 թ. ՌԴ-ում՝ Հայկական մշակույթի սեզոն:

Վերոնշյալ միջոցառումների իրականացումը երկու երկրների ժողովուրդներին հնարավորություն էր ընձեռնում ոչ միայն անմիջականորեն շփվել հայկական և ռուսական հոգևոր-մշակութային արժեքներին, այլև որոշակի պատկերացում կազմել միմյանց պատմությունների միահյուսվածության մասին: Դա նպաստում էր ՀՀ ու ՌԴ միջև միջպետական հարաբերությունների զարգացմանը:

Համագործակցությունը կրթության բնագավառում

Քննվող ժամանակափուլում հայ-ռուսական փոխգործակցությունը հաջողությամբ ծավալվում էր նաև կրթության բնագավառում, այդ թվում բարձրագույն կրթության ոլորտում: Վերջինիս առումով հատկապես կարևոր նշանակություն ունեցավ երկու երկրների կառավարությունների միջև 1993 թ. հունվարի 11-ին կնքված՝ «Բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը²², որը միջբուհական համագործակցության զարգացման իրավական հենք դարձավ: Դրա վառ արտահայտություններից էր 1997 թ. օգոստոսի 29-ի վերոնշյալ համաձայ-

²² Տե՛ս նաև ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, 91-93:

նագրի հիման վրա 1999 թ. փետրվարին Երևանում իր գործունեությունը սկսած Հայ-ռուսական համալսարանը: Հիմնականում ՌԴ դաշնային բյուջեի կողմից սուբսիդավորվող²³ այս ռուսալեզու բարձրագույն ուսումնական հաստատության 6 ֆակուլտետում, որոնց կազմում գործում էր 17 ամբիոն՝ 2000-ականների կեսին սովորում էր ավելի քան 2 հազար ուսանող²⁴: Ընդ որում, ընդունվողների 25%-ը կազմում էին ԱՊՀ մասնակից պետությունների՝ առավելապես Ռուսաստանի քաղաքացիները²⁵: ՀՀ և ՌԴ պետական բուհի կարգավիճակ ունեցող ՀՌՀ-ի առաջնահերթ խնդիրներն էին՝ երկու պետությունների ժողովուրդների մշակույթի, լեզվի, պատմական և ազգային ավանդույթների պահպանմանը, զարգացմանը և փոխհարստացմանը նպաստելը, բարձր որակավորման մասնագետների պատրաստումն ու Հայաստանում ռուսական կրթության, գիտության և մշակույթի կենտրոն դառնալը: 2002 թվականից համալսարանում գործում էին նաև տարբեր մասնագիտական գիտահետազոտական խմբեր, ինչպես նաև 17 մասնագիտությունների գծով ասպիրանտուրա: Հայ-ռուսական համալսարանը համագործակցում էր ՌԴ մի շարք առաջատար ուսումնական հաստատությունների հետ: Դրանց թվում էին Մոսկվայի պետական համալսարանը, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանը, Մոսկվայի միջազգային հարաբերությունների պե-

²³ Ռուսաստանյան կողմը 2009 թ. սուբսիդիայի ձևով ՀՌՀ-ին դաշնային բյուջեից հատկացրել էր ավելի քան 65 մլն ռուբլի, 2010 թ.՝ 68 մլն ռուբլի, 2011 թ.՝ շուրջ 74 մլն ռուբլի (տե՛ս Российско-армянское гуманитарное сотрудничество 2011):

²⁴ Ст`я История дипломатических отношений России и Армении: Российско-армянское гуманитарное сотрудничество 2011 //archive.mid.ru (14.03. 2022):

²⁵ Ст`я և Պատմական ակնարկ, Հայ-ռուսական համալսարանի պաշտոնական կայք՝ <https://rau.am/am/content/history> (19.03.2022):

տական ինստիտուտը, ՌԴ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիան, Մոսկվայի Ն. Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարանը և այլն:

2000-ականների առաջին տասնամյակի երկրորդ կեսին Հայաստանում ընդհանուր առմամբ գործում էր Ռուսաստանի պետական և ոչ պետական բուհերի 11 մասնաձյուղ, որոնցում սովորում էր շուրջ 3 հազ. ուսանող²⁶: Միջբուհական փոխգործակցության ընդլայնմանը զգալիորեն նպաստեց ՀՀ և ՌԴ գիտության ու կրթության նախարարությունների միջև 2004 թ. հուլիսի 13-ին կնքված «Կրթության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը²⁷: Վերջինիս իրականացման ակնառու դրսևորումներից էր ՌԴ դաշնային բյուջեի հաշվին ՀՀ քաղաքացիների ուսումնառությունը Ռուսաստանի բուհական և հետբուհական կրթական համակարգի հաստատություններում: 2005/2006 թթ. ուսումնական տարվա համար Հայաստանին հատկացվեց 175 նման քվոտա, իսկ 2007/2008 թթ. ուս. տարվա համար՝ 260: Ռուսաստանի բուհերում 2008 թ. ընդհանուր առմամբ սովորում էր ավելի քան 5 հազ. Հայաստանի քաղաքացի, որոնցից շուրջ 4 հազ.-ը՝ կրթության ծախսերի լրիվ փոխհատուցմամբ: Նույն թվականին մշակույթի և արվեստի գծով մասնագիտացված ՌԴ բուհերում վերսկսվեց ՀՀ քաղաքացիների ուսումնառությունը²⁸:

²⁶Տե՛ս История дипломатических отношений России и Армении: Российско-армянское гуманитарное сотрудничество 2011:

²⁷Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր 2005 2006, 221-225:

²⁸Տե՛ս Министерство иностранных дел Российской федерации: Россия в системе международных отношений; Россия-страны мира; Россия-государства-участники

Հայկական կողմը 2007 թ. հանդես եկավ Երևանում Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի բացման առաջարկությամբ, որն իրականացվեց 2015 թ. մարտին²⁹: 2000-ակաների առաջին տասնամյակի վերջին ՀՀ 16 բուհի առաջին և երկրորդ կուրսերում ռուսաց լեզվի դասավանդումը պարտադիր բնույթ էր կրում, 7 բուհում առկա էին ֆակուլտետներ, որոնցում ռուսաց լեզուն և գրականությունը դասավանդվում էին որպես մասնագիտական առարկաներ, իսկ 21-ում՝ գործում էին ռուսաց լեզվի ամբիոններ: Ռուսաց լեզվի ուսումնասիրության ծրագրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով 2008 թ. փետրվարին Երևանի պետական համալսարանում բացվեց «Ռուսական կենտրոն», որն առաջինն էր հետխորհրդային տարածքում³⁰: Միաժամանակ Հայաստանի մայր բուհ-ը համագործակցում էր Ռուսաստանի ավելի քան 70 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնց թվում էին Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանը, Կուրսնի պետական համալսարանը, Ն.Բաումանի անվան Մոսկվայի պետական տեխնիկական համալսարանը, Հարավային դաշնային համալսարանը, Սիբիրյան դաշնային համալսարանը և այլն³¹:

СНГ; Россия-Армения; Российско-армянское гуманитарное сотрудничество //www.mid.ru/bdomp/ns-rsng.nsf/strana (19.02.2022):

²⁹ Տե՛ս Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի պաշտոնական կայքը <https://msu.am> (20.02.2022):

³⁰Տե՛ս Ռоссийско-армянское гуманитарное сотрудничество 2011:

Լեզվամշակութային հարցեր

ՀՀ և ՌԴ միջև բարձրագույն կրթության ոլորտում փոխգործակցության կարևորագույն բաղադրիչներից էր լեզվամշակութային բնագավառում համագործակցությունը, որը չէր սահմանափակվում միայն միջբուհական շրջանակներով: 1989 թ. տվյալներով՝ Հայկական ԽՍՀ-ի բնակչության կեսից ավելին տիրապետում էր ռուսաց լեզվին, ինչը պայմանավորված էր նախ՝ հայ-ռուսական պատմական կապերով և երկրորդ՝ Խորհրդային Միությունում ռուսերենի միջհանրապետական և ազգամիջյան շփումների լեզու հանդիսանալու հանգամանքով:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի նոր իշխանությունները ձեռնամուխ եղան հայոց լեզվի դերի ու նշանակության բարձրացմանը: Հայաստանի Գերագույն խորհուրդը 1993 թ. մարտի 30-ին ընդունեց Լեզվի մասին» ՀՀ օրենքը³², որից ելնելով հանրապետությունում փակվեցին ռուսական դպրոցներն ու բուհերի ռուսալեզու խմբերը, կրճատվեցին ռուսաց լեզվի ուսուցման դասաժամերը: Սահմանափակում մտցվեց նաև հայազգի երեխաների ռուսական դասարաններ հաճախելու հարցում: Հայաստանում պետական բյուջեի հաշվին ռուսական դպրոցների առկայությունը թույլատրվեց միայն ռուսների համահավաք բնակության վայրերում: Հանրապետությունում գործավարությունը սկսվեց իրականացվել միայն հայերենով: Այս ամենը զգալիորեն նպաստեց հայոց լեզվի դերի բարձրացմանն ու հայ ժողովրդի ազգային նկարագրի պահպանմանը, միաժամանակ,

³¹Տե՛ս ysu.am/international/hy/partners (23.02.2022):

³²Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90418> (22.02.2022):

հանգեցնելով ռուսաց լեզվի կիրառման կտրուկ նվազմանը: Փոխարենը Հանրապետությունում աստիճանաբար լայն տարածում էին ստանում անգլերեն լեզուն և արևմտյան հոգևոր ու նյութական արժեքները, ինչը, զուգահեռաբար, հանգեցնում էր նաև Ռուսաստանի դեմ բացասական հասարակական տրամադրվածության առաջացմանը³³: Վերջինս պայմանավորված էր նաև ՌԴ-ում ազգայնական տրամադրությունների աճով, ինչպես նաև հայ հասարակության առանձին շերտերի դյուրամիտ հույսերով, որ Ռուսաստանի հետ դաշինքից հրաժարվելով, ՀՀ-ն շատ արագ կկարողանա ինտեգրվել եվրոպական կառույցներին:

Չնայած, վերոնշյալին՝ Հայաստանում միջպետական, ազգամիջյան և մասամբ անհատական շփումները հիմնականում շարունակվում էին ռուսերենի միջոցով, ինչը երկու ժողովուրդների քաղաքակրթական միասնության արդյունք էր: Ուստի պատահական չէր, որ 1990-ականների երկրորդ կեսից ՀՀ և ՌԴ միջև քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտակրթական կապերի ինտենսիվ զարգացումը հանգեցրեց հանրապետությունում ռուսաց լեզվի պահանջվածության աստիճանական վերաճին: Դրանից ելնելով՝ ՀՀ կառավարությունը 1999 թ. ընդունեց «Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում և սոցիալ-մշակութային կյանքում ռուսաց լեզվի մասին» հայեցակարգ, որի համաձայն՝ 16 հանրակրթական հայկական դպրոցների ուսումնական ծրագրերի մեջ ռուսաց լեզուն ընդգրկվեց որպես խորացված ուսում-

³³ Հայաստանում որոշ ուժերի կողմից Ռուսաստանի բացասական կերպարի ձևավորումը, բնականաբար, համընդհանուր բնույթ չէր կրում, սակայն դրանից չէր հետևում, որ իրադրությունն ապագայում առավել բացասական շրջադարձների չէր կարող ենթարկվել:

նասիրության «հենքային օտար լեզու»: 2003 թ. նման դպրոցների թիվը հանրապետությունում հասավ 30-ի, իսկ ռուսաց լեզվի ուսուցիչներինը՝ 300-ի³⁴: ՀՀ դպրոցներում 2007թ. գործում էր ռուսական 48 և ռուսաց լեզվի խորացված ուսումնասիրությամբ 69 դասարան³⁵: Դրա հետ մեկտեղ, հանրապետության բոլոր դպրոցները հիմնված էին մայրենի լեզվի վրա և ռուսական դպրոցներ չկային, բացառությամբ երկու երկրների կառավարությունների միջև 1996 թ. հունվարի 26-ին կնքված «ՀՀ տարածքում ՌԴ պաշտպանության նախարարության մանկական նախադպրոցական հաստատությունների, ինչպես նաև հանրակրթական դպրոցների ստեղծման մասին» համաձայնագրի³⁶ հիման վրա Երևանում, Գյումրիում և Արտաշատում գործող ռուսական 3 դպրոցի: Ընդ որում՝ առաջինում ընդունում էին միայն ռուս զինծառայողների և դիվանագետների երեխաներին, երկրորդում՝ նաև ՌԴ քաղաքացու երեխայի, իսկ երրորդը տեղի սահմանապահ զորամասի դպրոցն էր: Երևանում 2001 թ. աշնանը բացվեց «Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն»³⁷, որը հիմնականում համագործակցում էր Հայաստանի ռուսաց լեզվի խորացված ուսումնասիրությամբ դպրոցների հետ՝ նրանց ապահովելով ռուսերեն լեզվով ուսումնամեթոդական, տեղեկատվական ու գեղարվեստական գրականությամբ, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Կենտրոն-

³⁴Տե՛ս Доклад Министерства иностранных дел Российской Федерации «Русский язык в мире» 2003:

³⁵Տե՛ս Оганисян 2012, 86:

³⁶ Տե՛ս Международные соглашения о сотрудничестве в сфере образования. Составитель: Департамент международного сотрудничества в образовании и науке Минобрнауки РФ 2009, 104-116:

³⁷ Տե՛ս История дипломатических отношений России и Армении:

նը հատկապես մեծ ներդրում ունեցավ ԱՊՀ և մերձբալթյան երկրների հանրակրթական դպրոցների աշակերտների ու շրջանավարտների մասնակցությամբ՝ 2002 թ. ապրիլին Հայաստանում անցկացված «Ռուսաստանն ու ռուսաց լեզուն իմ կյանքում» միջազգային մրցույթի կազմակերպման գործում³⁸: Հանրապետությունում գործում էին հանրակրթական դպրոցների ու առաջատար բուհերի ռուսերեն լեզվի ուսուցիչների, դասախոսների, ինչպես նաև ռուսաստանյան բուհերի հայ շրջանավարտների Հայկական ասոցիացիաներ: ՀՀ-ում գործող ռուսագիտական կազմակերպությունների համախմբմանը զգալիորեն նպաստում էր «Ռուսաց լեզուն Հայաստանում» եռամսյա հանդեսը³⁹:

Աշխարհում 2007 թ. նշվող «Ռուսաց լեզվի» տարվա շրջանակներում, ռուսաստանյան կողմի աջակցությամբ, Հայաստանում հասարակական կարգով կազմակերպվեցին ռուսական գրքերի շնորհանդեսներ ու ցուցահանդեսներ⁴⁰: ՀՀ-ում և Արցախում մեծ հաջողությամբ անցկացվեցին «Ռուսերեն խոսքի օրեր», որոնց ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ՝ Ռուսաստանի գրական և ստեղծագործական շրջանների անվանի ներկայացուցիչների հետ: Փաստորեն, խնդրո առարկա ժամանակաշրջանում ՀՀ-ում ռուսաց լեզուն, որպես ազգային շփման լեզու պահպանվում էր, դասավանդվում էր դպրոցներում ու բուհերում՝ վայելելով պետական հովանավորություն: Ռուսաստանում ստվարաթիվ հայ համայնքի առկայությունն իր հերթին հրամայական էր դարձ-

³⁸ Տե՛ս և Доклад Министерства иностранных дел Российской Федерации «Русский язык в мире», www.mid.ru (05.03.2022):

³⁹ Տե՛ս և Григорян 2018, 92:

⁴⁰ Տե՛ս և ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 13, գործ 103, թ. 26:

նում ՌԴ-ում պետական հովանավորություն վայելող հայկական թեքումով հանրակրթական հաստատությունների բացման անհրաժեշտությունը: 2000-ականների սկզբներին Մոսկվայում գործում էին ընդամենը երկու հայկական թեքումով հանրակրթական հաստատություն՝ ռուս-հայկական միջնակարգ դպրոցը և «Վերածնունդ» գիմնազիան, իսկ Ռուսաստանի ամենահայաշատ հարավային տարածաշրջանում գոյություն ուներ միայն մեկ հայկական թեքումով միջնակարգ դպրոց՝ Ադլերում: Բնականաբար, դա չէր կարող բավարարել Ռուսաստանի մեծաթիվ հայության լեզվամշակութային պահանջմունքները: Տիրող իրավիճակը հանգեցնում էր երկու երկրների պատկան մարմինների փոխգործակցությամբ համապատասխան քայլերի ձեռնարկման: Վերջինիս դրսևորումներից էր 2001 թ. Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հենքի վրա Հայոց լեզվի և մշակույթի կենտրոնի բացումը⁴¹, որի ջանքերով 2009 թ. հրատարակվեց «Հայոց լեզուն ԱՊՀ երկրների համար» ուսումնական ձեռնարկը⁴²: Նշենք նաև, որ 2012 թվականից Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտում հայոց լեզուն հանդիսանում էր պարտադիր դասավանդվող առարկա՝ որպես առաջին արևելյան լեզու, ինչը ռուսական կողմը պայմանավորում էր ոչ միայն ռուսաստանաբնակ հայերի, այլև ողջ ռուսաստանյան հանրության շրջանում հայկական մշակույթի բջիջ ձևավորելու անհրաժեշտությամբ⁴³:

⁴¹Տե՛ս История дипломатических отношений России и Армении:

⁴²Տե՛ս Комарова 2009:

⁴³Տե՛ս Саядов 2014, 42:

Հումանիտար ոլորտում հայ-ռուսական համագործակցության հետագա ընդլայնման արդյունքում արդեն 2000-ականների երկրորդ տասնամյակի սկզբներին ՌԴ-ում հայոց լեզուն դասավանդվում էր հայերի համահավաք բնակության տարածաշրջաններ Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասերի, Ռոստովի ու Բրյանսկի մարզերի 199 դպրոցներում և 16 այլ ուսումնական հաստատություններում⁴⁴: Հայագիտական ամբիոններ էին հիմնվել Մոսկվայի, Մանկո Պետերբուրգի ու Նիժնի Նովգորոդի համալսարաններում: Մակայն այս ամենը դեռևս բավարար չէր Ռուսաստանում հայոց լեզվի լիարժեք վերարտադրման համար, քանի որ դպրոցներում և ուսումնական հաստատություններում հայոց լեզվի դասավանդման մակարդակը հիմնականում դեռևս հեռու էր բավարար լինելուց: Բացակայում էին հայոց լեզվի և գրականության առարկաների ուսումնական միասնական ծրագրերը, գոյություն չունեին նշյալ առարկաների միասնական դասագրքեր, դպրոցական գրադարաններում, գրախանութներում և մշակութային կենտրոններում չկային գեղարվեստական, պատմամշակութային, քաղաքական ու այլ բնույթի հայատառ գրքեր և այլն: Այս ամենը բարդացնում էր ուսուցումը և երկու երկրների իրավասու մարմիններից պահանջում համապատասխան քայլերի իրականացում: Փաստորեն, չնայած որոշ առաջընթացին, ՌԴ-ում հայոց լեզվի պահպանման և տարածման հարցը դեռևս խնդրահարույց էր և պետական հոգածության ու աջակցության կարիք ուներ:

⁴⁴ Տե՛ս [https://armenia.mid.ru/ru/countries/bilateral-relations/gumanitarnoesotrudinchestvo/\(18.03.2022\)](https://armenia.mid.ru/ru/countries/bilateral-relations/gumanitarnoesotrudinchestvo/(18.03.2022)):

Եզրակացություններ

Այսպիսով, քննվող ժամանակաշրջանում կրթամշակութային ոլորտում ՀՀ և ՌԴ միջև փոխգործակցությունն աստիճանաբար ընդլայնվելով և կատարելագործվելով նոր որակ ստացավ՝ դառնալով երկու երկրների ռազմավարական դաշնակցային հարաբերությունների զարգացման էական գործոններից մեկը: Կրթամշակութային կապերի զարգացումը բխում էր նաև կողմերի ազգային շահերից, քանի որ այն նպաստում էր երկուստեք փոխըմբռնման և փոխվստահության խորացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները: Վերլուծական զեկույց, 2010, Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ, Մոսկվա-Երևան, 134 էջ:

ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., «ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», հրատարակության 1-ին տարի, N 1(1), 12 հունիսի 2002, 731 էջ:

ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ., «ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», հրատարակության 1-ին տարի N 2 (2), 12 հունիսի, 2002, 601 էջ:

ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր 2005, «ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», հրատարակության 5-րդ տարի, N 8 (16), 28 դեկտեմբերի 2006, 545 էջ:

ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 108, թ. 141-143, ցուցակ 8, գործ 207, թ. 99, ցուցակ 10, գործ 114, թ. 112, ցուցակ 13, գործ 103, թ. 26:

Միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, երկկողմ միջազգային պայմանագրեր, 2007, «ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», հրատարակության 6-րդ տարի, N9(17) 11 փետրվարի 2008, 646 էջ:

Պատմական ակնարկ, Հայ-ռուսական համալսարանի պաշտոնական

կայք՝ <https://rau.am/am/content/history>:

Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. Կատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ, Մոսկվա, 2017 էջ, 247 էջ:

Григорян Г. 2018, Гуманитарное измерение армяно-российских отношений, «Россия и новые государства Евразии», N 1 (38), с. 82-105.

Доклад Министерства иностранных дел Российской Федерации «Русский язык в мире», Москва, 2003, www.mid.ru:

История дипломатических отношений России и Армении, 30.10.2006 (обновлено 07.06. 2008). <https://ria.ru/20061030/55242099.html>:

Комарова Р. А. и др. 2009, Армянский язык для стран СНГ: учебник, Москва, изд. Рема, 300 с.

Международные соглашения о сотрудничестве в сфере образования. Составитель: Департамент международного сотрудничества в образовании и науке Минобрнауки РФ, 2009, Составитель: Департамент международного сотрудничества в образовании и науке Минобрнауки России, 351 с.

Министерство иностранных дел Российской федерации: Россия в системе международных отношений; Россия-страны мира; Россия-государства-участники СНГ; Россия-Армения; Российско-армянское гуманитарное сотрудничество // www.mid.ru/bdcomp/ns-rsng.nsf/strana:

Оганисян В. 2012, О некоторых аспектах армяно-российского культурного сотрудничества, «21-й ВЕК», N 3 (23), с. 83-90.

Российско-армянское гуманитарное сотрудничество. Справка ДИП МИД РФ, 12-10-2011, 2011, архив МИД РФ, <http://archive.mid.ru>.

Саядов С. 2014, Арменоведение в России: историографический очерк, с. 33-43. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», 17-19 հոկտեմբերի, 2013թ., Ջեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ գիտություն հրատարակչություն, էջ 583 + 10 էջ նկ.:

Рубен Л. Азизбекян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент,* Развитие культурно-образовательных связей между РА и РФ в 1991-2008 гг.

Резюме

После распада СССР в развитии многогранных отношений между Республикой Армения и Российской Федерацией важнейшим

компонентом являлся гуманитарный блок сотрудничества. Это не случайно, поскольку именно богатое культурно-историческое наследие, вековые традиции переплетения духовно-культурных ценностей армянского и русского народов стали прочной основой развития гуманитарных связей между РА и РФ в 1991-2008 гг.

В этот период формировалась солидная договорно-правовая база, насчитывающая более 20 документов, на которую опиралось взаимодействие двух стран в гуманитарной сфере. При этом, данная договорно-правовая база обновлялась в соответствии с требованиями времени и духом двусторонних отношений. В исследуемый период между Арменией и Россией в межгосударственном формате расширялось многостороннее гуманитарное сотрудничество, которое охватывало сферы так же культуры и образования. Оно исходило из национальных интересов сторо, поскольку развитие культурно-образовательных связей способствовало углублению взаимопонимания и взаимного доверия, что являлось фундаментом укрепления стратегического союзничества.

Ключевые слова: РА, РФ, гуманитарное сотрудничество, культурное, образовательный, лингвистические и культурные связи, правовая основа договора.

Ruben L. Azizbekyan, *Associate Professor of the Institute of History of te NAS RA, Cd. of Sci. in History*, **The development of cultural and educational ties between the Republic of Armenia and the Russian Federation in 1991-2008.**

Summary

After the collapse of the USSR, the humanitarian block of cooperation was the most crucial component in developing multifaceted relations between the Republic of Armenia and the Russian Federation. It is not a coincidence, since the rich cultural and historical heritage and the centuries-old traditions of intertwining the spiritual and cultural values of the Armenian and Russian people became a solid basis for the development of humanitarian ties between the Republic of Armenia and the Russian Federation in 1991-2008.

During this period, a solid contractual-legal framework was formed, numbering more than 20 documents, on which the interaction of the two countries in the humanitarian sphere was based. At that, this legal framework was updated following the requirements of the time and the


spirit of bilateral relations.

During the period under study, multilateral humanitarian cooperation expanded between Armenia and Russia in an interstate format, which also covered the spheres of culture and education. It proceeded from the national interests of the parties, since the development of cultural and educational ties contributed to the deepening of mutual understanding and mutual trust, which was the foundation for strengthening the strategic alliance.

Key words: RA, RF, humanitarian cooperation, cultural, educational, linguistic and cultural ties, contractual-legal basis.

ՀՐԱՊԱՐԱՇՈՒՄ

ДОКУМЕНТЫ ИЗ БИОГРАФИИ ИОСИФА ОРБЕЛИ (К 135-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ИОСИФА ОРБЕЛИ)



Академик Академии наук СССР и Академии наук Армянской ССР Иосиф Орбели и академик Академии наук Армянской ССР Вартан Гулкянян стояли у истоков формирования академической науки в Армении. С середины 1930-х годов они руководили научными подразделениями Армянского филиала АН СССР, а после основания в ноябре 1943г. Академии наук Армянской ССР Совнаркомом были утверждены в первом составе (23 человека) действительных членов АН. И. Орбели избран президентом, а В. Гулкянян вторым вице-президентом АН (первым вице-президентом был избран Виктор Амбарцумян).

Заслуженный деятель науки, генетик и селекционер Вартан Гулкянян (1902-1976) окончил сельскохозяйственный факультет Ереванского государственного университета (1927). Учился в аспирантуре Всесоюзного института растениеводства в

Ленинграде (1931-1933). В начале 1933г. вернулся в Армению, где стал работать на Станции защиты растений в качестве старшего научного сотрудника. С 1935г. работал также в Биологическом институте Армянского филиала АН СССР старшим научным сотрудником, исполняющим обязанностей ученого секретаря, а с 1938 по 1942г. – директором того же института. С 1942 по ноябрь 1943г. был заместителем председателя президиума Армянского филиала АН СССР. До ноября 1950г. являлся вице-президентом АН Армянской ССР. В 1950-1956гг. занимал должность академика – секретаря АН АрмССР, а в 1959-1971гг.- академика-секретаря Отделения биологических наук АН АрмССР. Одновременно в 1956-1976гг. заведовал лабораторией генетики и селекции растений НИИ земледелия Министерства сельского хозяйства АрмССР.

Основное направление научных исследований В. Гулканяна-различные аспекты иммунитета растений. Автор ряда сортов пшеницы, создал богатую коллекцию видов пшениц, разработал новую методику гибридизации, основанную на исследовании процесса генетического осложнения гибридного поколения. Принимал активное участие в комплексных экспедициях по выявлению и сбору ценных форм культурных растений, проводившихся в Армении по инициативе Н. И. Вавилова. Изучал состав культурной флоры древней Армении, местные популяции пшениц, провел работы по их улучшению и районированию. Исследовал процессы регенерации и хирургии у хлопчатника, табака, томатов. Возглавлял в Армении работы по экспериментальному мутагенезу у растений.

Ниже впервые публикуются документы из жизни и деятельности академика Иосифа Орбели, хранящиеся в его личном деле архива Национальной АН Армении.

СТЕПАН Г. ГАРИБДЖАНИЯН
Институт истории НАН РА, к.и.н.

№1

Выписка из протокола совместного собрания научных работников Института истории и Исторического музея Армянского филиала Академии наук СССР от 19 ноября 1943 года.

Слушали: О выдвижении кандидатуры в действительные члены Академии наук Армянской ССР академика И. А. Орбели.

(К. Г. Кафадарян)

Постановили: Собрание единогласно выдвигает кандидатуру крупнейшего советского ученого, выдающегося специалиста в области истории и истории культуры Передней Азии, академика Иосифа Абгаровича Орбели в действительные члены Академии наук Армянской ССР по Отделению общественных наук.

Подлинный подписал председатель собрания К. Кафадарян.
Верно: секретарь Института истории Григорян.

**Архив НАН Армении, личное дело И. Орбели, Л. 47.
Заверенная копия.
Машинопись.**

№2

Выписка из постановления Общего собрания Академии наук Армянской ССР

от 15-18 января 1947г.

Слушали: Письмо академика Орбели И. А.

Постановили: Общее собрание Академии наук Армянской ССР, обсудив письмо академика И. А. Орбели об освобождении его от обязанностей Президента Академии наук Армянской ССР, постановило:

1. Уважить заявление академика И. А. Орбели и освободить его от обязанностей Президента Академии наук Арм. ССР.
2. Объявить благодарность академику И. А. Орбели за его многолетнюю и плодотворную работу вначале в должности Председателя Президиума Армянского филиала Академии наук СССР, а после в должности Президента Академии наук Армянской ССР.
3. Учитывая крупные заслуги академика И. А. Орбели перед наукой, главным образом в деле организации Академии наук Армянской ССР, повесить его портрет в здании Академии.
4. С удовлетворением отмечая желание и готовность академика И. А. Орбели участвовать в работах Академии наук Армянской ССР, поручить Президиуму Академии и Институту истории создать условия, чтобы академик И. А. Орбели мог продолжать свои арменоведческие исследования в Институте истории.

Президент Академии наук

Армянской ССР

Действительный член АН - В. А. Амбарцумян

Ученый секретарь Президиума

Академии наук Армянской ССР - Г. Б. Петросян

Верно:

Нач. Секретариата АН

Арм.ССР (Л. Д. Самвелян)

**Архив НАН Армении. Личное дело И. Орбели. Л. 51.
Заверенная копия. Машинопись.**

Характеристика академика И. А. Орбели

Президент Академии Наук Армянской ССР, директор Института истории той же Академии, директор Государственного Эрмитажа, действительный член Академии Наук СССР, действительный член Академии наук Арм. ССР и действительный член Академии Архитектуры Иосиф Абгарович Орбели является выдающимся и передовым ученым Советского Союза с мировым именем. Его научная и общественная деятельность весьма многообразна.

И. А. Орбели – крупнейший знаток истории культуры Передней Азии, продолжатель работы в этой области своего учителя академика Н. Я. Марра. И. А. Орбели является специалистом по истории культуры Армении, по археологии (раскопки в Ване, Ани), а так же по курдскому языку. Большая работа проделана И. А. Орбели по собиранию и подготовке к изданию армянских средневековых надписей.

Все труды И. А. Орбели отличаются широтой поставленных проблем с блестящим их разрешением, причем часто труднейшие и глубоко научные работы изложены им в общедоступной популярной форме. Таковы его небольшая книжка об Ани и статьи в сборнике "Памятники эпохи Руставели", являющиеся руководящими работами для всех тех, кто занимается историей культуры средневекового Востока.

И. А. Орбели является блестящим организатором научной работы. Им был создан Отдел Востока Эрмитажа и своей деятельностью как директор Эрмитажа добился того, что музей мирового значения стал основным научно-исследовательским учреждением нашего Союза, где сосредоточена работа по истории мировой культуры и, в частности, Востока.

В Армении И. А. Орбели руководил работой Института истории и Материальной Культуры Армянского филиала Академии Наук СССР, благодаря чему Институт смог достигнуть в своей работе больших успехов. Исторический музей Армянской ССР, в том числе, в каком он существует ныне, также многим обязан академику И. А. Орбели, постоянному руководителю всех работ музея. Благодаря труду и способностям И. А. Орбели на базе бывшего Армянского Филиала АН СССР была организована Академия наук Армянской ССР.

И. А. Орбели - выдающийся общественный деятель. Он был депутатом Ленинградского Совета нескольких созывов и в настоящее время состоит депутатом Ленинградского и Ереванского городских Советов. В суровые дни Великой Отечественной войны И. А. Орбели, как истинный советский патриот, развернул неустойчивую деятельность. В тяжелые дни блокады Ленинграда он отказался покинуть город и оставался на своем посту до полного завершения эвакуационных работ и консервации Эрмитажа. Его энергичная деятельность во время блокады Ленинграда спасла не только большое количество культурных ценностей, но и жизнь многих культурных работников. Советское правительство высоко оценило патриотическую деятельность И. А. Орбели и наградило его орденом Ленина, двумя орденами "Трудового Красного Знамени и медалями "За оборону Ленинграда" и "За доблестный труд в Великой Отечественной войне."

И. А. Орбели как в Ленинграде, так и в Армении вел большую научно-популяризационную работу – чтение лекций в воинских частях, кораблях и госпиталях. Он вел также большую работу по специальным заданиям командования Зафронтом, за что был награжден Почетной грамотой.

Научная и общественная деятельность И. А. Орбели

получила высокую оценку. В 1935 году он был избран действительным членом Академии наук СССР, в 1941 г. действительным членом Академии Архитектуры СССР, а в 1943 г. действительным членом и президентом Академии наук Арм.ССР. В 1938 г. Президиум Верховного Совета Арм. ССР присвоил ему звание заслуженного деятеля науки Арм. ССР.

И. А. Орбели является почетным членом английских и американских научных обществ и Иранской Академии наук.

Вице - президент
Академии наук Арм. ССР
Академик (Гулкян В. О.)

**Архив НАН Армении. Личное дело И. Орбели. Л. 52-53.
Копия. Машинопись.**

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

АРМЯНСКАЯ ГЕНЕОЛОГИЯ: НАУЧНЫЙ АЛЬМАНАХ. ТОМ ПЕРВЫЙ.- МОСКВА-ЕРЕВАН: СТАРАЯ БАСМАННАЯ, 2022. - 304 С.

Մոսկվայի «Старая Басманная» հրատարակչությունը ռուսերենով լույս է ընծայել «Հայկական ծագումնաբանություն» պարբերական հրատարակչության առաջին հատորը: Պատասխանատու խմբագիրն է Ռաֆայել Աբրահամյանը, խմբագրական խորհրդի անդամներն են Ռաֆայել Աբրահամյանը, Հակոբ Խաթլամաջյանը, Իգոր Կուզնեցովը, Ալեքսանդր Հակոբյանը (Ռուսաստան), Սոնյա Միրզոյանը (Հայաստան) և Հովան Սիմոնյանը (Շվեյցարիա):

«Խմբագրության կողմից» խորագրով նախաբանում ազգաբան Իգոր Կուզնեցովը գրել է. *«Չնայած ծագումնաբանության հանդեպ ակնհայտ հետաքրքրությանը՝ մեզանում... պատերազմների, հեղափոխությունների, հրդեհների և պարզապես անփույթ գործելակերպի պատճառով չեն մնացել անհրաժեշտ փաստաթղթեր, պակասում են նաև համապատասխան տպագիր հրատարակությունները: Ներկայացվող ամսագիրն այդ բացն ինչ-որ կերպ լրացնելու փորձ է ընդամենը մեկ բնագավառում՝ հայկական ծագումնաբանության մեջ»* (էջ 5):

Հատորը բաղկացած է չորս բաժնից՝ «Հետազոտություններ և հոդվածներ», «Աղբյուրների հրատարակում», «Տեղեկատվական նյութեր» և «Մատենագիտություն. ակնարկներ. գրախոսականներ»: Ուշադրության կենտրոնում ռուսահայերն են (նորնախիջևանցիներ, չերքեզահայեր, համշենահայեր), սակայն առկա են նյութեր նաև Աբխազիայի, Վրաստանի, Բեսարաբիայի, Լեհաստանի և ԱՄՆ-ի հայերի ծագումնաբանության վերաբերյալ:

Հատորում ընդգրկված է Հայաստանում, Ռուսաստանում, Լեհաստանում, Մոլդովայում և ԱՄՆ-ում բնակվող 15 հեղինակի 23 նյութ: Դրանց բովանդակությունը ներկայացնում ենք ստորև:

Սամվել Գրիգորյանի «Հայոց թագուհի Չաբելի խնամակալ Սիրատանի ծագման շուրջ» հոդվածում քննվում են Կիլիկյան Հայաստանի սենեշալ և պայլ Ադամ դե Գաստոնի (Սիրատան) ծագման և տիրույթների մասին տեղեկությունները: Բերվում են ապացույցներ և փաստարկներ առ այն, որ Լևոն Բ թագավորի ամենաազդեցիկ ստորակա և նրա դստեր՝ Չաբել թագուհու խնամակալ Սիրատանը հայ քաղկեդոնական էր՝ Ատոմ անունով և որ նա մերձազգակցական կապի մեջ է եղել Ռուբինյան արքայատոհմի հետ:

Անջեյ Զիեմբայի «Տիշկևիչ տոհմի հայկական ծագման մասին» հոդվածում միջնադարյան աղբյուրների քննության հիման վրա վերականգնվում է Լիտվայի, Լեհաստանի և Ռուսաստանի Տիշկևիչ ազնվական տոհմի ծագումնաբանական ծառի վաղնջագույն հատվածը: Հեղինակը ենթադրում է, որ Տիշկևիչները, հակառակ պնդումների, սերել են Լեհական թագավորության ռուսինյան հատվածի բոյար Կալենիկ Հայից (Միշկովիչ):

Սերջիու Բակալովի «Հայ-մոլդավական ծագումնաբանական կապերն Ալեքսանդրի, Բոտեզատու և Բեց ընտանիքների օրինակներով» հոդվածում քննվում են Բոտեզատու ու Ալեքսանդրի՝ ուղղափառ հավատք ընդունած ազնվական հայկական ընտանիքների և մոլդավական Բեց բոյարական տոհմի ազգակցական փոխառնչությունները: Որպես նրանց հայկական ծագման հավելյալ փաստարկ ներկայացվում են նշված ընտանիք-

ների գործնական ու բարեկամական կապերը մոլորվահայ ականավոր գործիչ Մանուկ բեյ Միրզայանի և նրա ժառանգների հետ:

Մարգոն Իսլամ-Բեկը «Ծագումնաբանական ավանդություններ թագաուրյան ալդարների ծագման մասին» աշխատությունում ներկայացրել է ժողովրդական ավանդություններ թագիատների (թագաուրյան ալդարների)՝ Հյուսիսային Օսեթիայի Թագաուրյան հանրույթի վերնախավի ծագման մասին: Ըստ բանագիտական տվյալների՝ այդ տոհմը սերել է Օսեթիա տեղափոխված հայազգի արքայազն Թագաուրից (Թագավոր, Թագի):

Վլադիմիր Կոլեսովը «Ծագումնաբանական սուղոկուկամ նոր նյութեր չերքեզահայ Բոգարսուկովների մասին» հոդվածում փորձ է արել վերականգնելու չերքեզահայ առևտրաարդյունաբերողներ Բոգարսուկովների տոհմաձառը: Հեղինակի կիրառած մեթոդը հնարավորություն է տալիս հաղթահարելու չերքեզահայերի ծագումնաբանության ուսումնասիրության դժվարությունները՝ պայմանավորված երկու և ավելի անունների (հայկական, ադրդեական, ռուսական) զուգահեռ գործածման հետ:

Ուկրաինական հայագիտության հիմնադիր, երջանկահիշատակ պատմաբան Յարոսլավ Դաշկևիչի (1926–2010) «Ուկրաինայի հայերի ծագումնաբանության հետազոտության խնդիրները» նյութը համառոտ հաղորդում է ուկրաինաբնակ հայերի պատմության ուսումնասիրության և ծագումնաբանական հիմքի վերաբերյալ:

Հակոբ Խաթլամաջյանը ներկայացրել է «Պատահական արխիվային գտածո. մի վաղ աղբյուր Նոր Նախիջևանի հայերի

ծագումնաբանության մասին»։ նորահայտ մի փաստաթուղթ, որտեղ ներկայացված է 1781 թ. կազմված Ղրիմից տեղափոխված հայերի ցանկը՝ ընտանիք առ ընտանիք։ Այն փաստորեն դրիմահայերի և նորնախիջևանահայերի ծագումնաբանության առավել համապարփակ վաղագույն սկզբնաղբյուրներից է։

Ջորջ Աղճայանի «Բուրունքշլայի Աղճայանները» նյութում Օսմանյան կայսրության Յոզգաթ նահանգի Բուրունքշլա գյուղի Աղճայան տոհմի օրինակով ցույց է տրվում, թե օսմանյան մարդահամարները, ԴՆԹ թեստերը և բանավոր պատմությունն ինչպես կարող են օգտագործվել ընդարձակ տոհմածառեր կազմելու գործում։ Մանրամասն նկարագրված են Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Թուրքիայի հինգ ընտանիքների միջև նախնականում անհայտ առնչությունները։

Անդրանիկ Նահապետյանը ներկայացրել է «1835 եւ 1842 թթ. Էրզրումի էյալեթի Վերին Բասենի քաղաքի օսմանյան մարդահամարները որպես ծագումնաբանության աղբյուր. Պատիժվան գյուղի նյութը»։ Առաջին անգամ հրատարակված է 1835 և 1842 թվականների օսմանյան մարդահամարների անվանական ամբողջական վերծանությունը՝ ժամանակակից թուրքերենի լատինատառ հիմքով։

Մարկ Արսլանի «Հայերի արտագաղթը դեպի Հյուսիսային Ամերիկա 1930-ականներին. սկզբնաղբյուրների բանաբաղում» հոդվածում նկարագրված են «Հայ տարագրության նախագիծ» առցանց տվյալների շտեմարանի ստեղծան հանգամանքները և խորհուրդներ այն օգտագործելու վերաբերյալ։ Տվյալների շտեմարանը պարունակում 1800-ական թթ. երկրորդ կեսին և 1900-ական թթ. սկզբին Հյուսիսային Ամերիկա արտա-

գաղթած հայ ընտանիքների մասին 170.000 նշումներ:

Ռաֆայել Աբրահամյանի «Վրաց թագավոր Հերակլ Բ-ի հրովարտակը Միշվելով ազնվականներին» հրապարակումը ներկայացնում է Հերակլ Բ-ի կողմից Միշվելով տոհմին տրված հրովարտակը: Նյութն ընդգրկում է այդ տոհմի՝ նախկինում անհայտ զինանշանը, ինչպես նաև ազգաբանական սեղմ տվյալներ Վրաստանի և Ղզլարի Միշվելովների տոհմի մասին:

Աբել Կարաքեհյանի «Աբխազիայի հայկական գերեզմանոցները: Մաս Ա: Չոբանենց (Չոբանլուկ) գյուղի գերեզմանատունը» հոդվածը պարունակում է Աբխազիայի Գուդաութայի շրջանի Չոբանենց գյուղի գերեզմանոցի նկարագրությունը: Այդ գյուղը բնակեցված է Օսմանյան կայսրությունից եկած հիմնականում համշենցի և ջենիկցի փախստական հայերի ժառանգներով: Հետագա հրատարակություններում Աբխազիայի հայկական գյուղերի գերեզմանոցների նկարագրությունները շարունակվելու են:

Ռաֆայել Աբրահամյանի և Սամվել Մելիքսեթյանի «Նյութեր Ագուլիսի ծագումնաբանության համար: Մաս Ա: 1831 թ. Ներքին Ագուլիսի (Դաշտի) կամերալ նկարագրությունը» նյութը Ներքին Ագուլիսի բնակչության՝ 1831 թ. կատարված կամերալ նկարագրության հրատարակությունն է: Այն հետաքրքրական է Գողթն գավառի այս կարևոր առևտրական և մշակութային կենտրոնի ծագումնաբանության ուսումնասիրության համատեքստում: Նույն հեղինակները «Ցղնայի 1831 թ. կամերալ նկարագրությունը» նյութով գիտական շրջանառության մեջ են դրել Գողթն գավառի Ցղնա բնակավայրի վերաբերյալ այդ կարևոր ծագումնաբանական սկզբնաղբյուրը: Ցղնացիներն ու իրենց ժառանգներն էական ներդրում են ունեցել գիտության, մշակույթի,

արվեստի ու հասարակական-քաղաքական կյանքում, հայտնի է, որ այս գյուղից են սերել Կոմիտասը, Էդգար Շահինը, Ռուբեն Մամուլյանը, Անրի Թրուայան: Ռաֆայել Աբրահամյանը և Սամվել Մելիքսեթյանը ներկայացրել են նաև «1832 թ. Ղալադարասիի (Բերձոր) կամերալ նկարագրությունը»: Այն արցախյան այդ կարևոր բնակավայրի ծագումնաբանության վաղագույն սկզբնաղբյուրն է: Հրատարակվող նյութերը հնարավորություն են տալիս հետևելու Բերձորի բնակչության տոհմագրությանն ընդհուպ մինչև XVIII դ. կեսերը:

Ռաֆայել Աբրահամյանն իր «Արմավիրի բնակիչների ցուցակը, որոնք հայտնել էին իրենց արտոնյալ դասին պատկանելիության մասին» նյութում հրատարակել է Կուբանի նահանգի Արմավիր բնակավայրի հայերի անվանական մի ցուցակ: Այն կազմվել է ռուսական աշխատակազմի՝ լեռնական բնակիչների դասային իրավունքների քննության առիթով: Փաստաթղթերն արտացոլում են չերքեզահայերի՝ իրենց ռուսական ազնվականների կարգավիճակ շնորհելու պայքարի շրջափուլերից մեկը: Ռաֆայել Աբրահամյանը ներկայացրել է նաև «Սանկտ-Պետերբուրգի հայերի ընտանեկան ցուցակը. 1838 թ.» նյութը: Այն կարևոր ծագումնաբանական սկզբնաղբյուր է քաղաքի հայ համայնքի մասին: Փաստաթուղթը տեղեկություններ պարունակում է քաղաքի հասարակական և մշակութային կյանքում մեծ դեր կատարած շատ ընտանիքների մասին:

Սոնյա Միրզոյանի «Տեղեկություններ արտոնյալ դասին պատկանող հայերի մասին 1886 թ. Շուշիի կամերալ նկարագրությունից» հրապարակումը ներառում է տեղեկատվական տեղեկություններ՝ 360-ից ավելի շուշեցի հայ ընտանիքների մասին: Արտոնյալ խավերում ներառնված են եղել ազնվականներ,

պետական ծառայողներ, հոգևորականներ, ինչպես նաև որոշ այլ խմբերի անձինք:

Օդրի Մեգերյանի «Էթնիկ ժառանգության պահպանումը. հայերը որպես հետազոտության օրինակ» հոդվածը 1980 թ. Մոլթ Լեյք Սիթիում (Յուրթա, ԱՄՆ) կայացած գիտաժողովում ընթերցված զեկույցի հրատարակությունն է: Այն տեղեկություններ պարունակում է ԱՄՆ-ում ծագումնաբանական հետազոտությունների նախնական փուլի, Հայկական ծագումնաբանական միության և արխիվային սկզբնաղբյուրների թվայնացման մասշտաբային աշխատանքի մասին:

Չորջ Ադճայանի «Հիմքեր հայկական ծագումնաբանությանը նվիրված գիտաժողովի համար» հաղորդման մեջ տեղեկացվում է ԱՄՆ-ում անցկացված չորս ծագումնաբանական գիտաժողովների մասին: Դրանցում ընթերցված զեկույցների թեմատիկ ընգրկումը ներառել է հայ ծագումնաբանության արդի հարցերի լայն շրջանակ:

Ռաֆայել Աբրահամյանի «Բեկակի դոմ» ավանախը. բովանդակության տեղեկատու (պրակներ 1-28)» նյութում սեղմ նկարագրված են 1994-2021 թթ. նշյալ ավանախի 28 թողարկումների ավելի քան 250 հոդվածներ: Դրանք նվիրված են պատմության և ազնվականության ծագումնաբանության հարցերին:

Հատորի վերջում տրված են նյութերի անգլերեն և հայերեն ամփոփումները:

«Հայկական ծագումնաբանություն» պարբերական հրատարակության առաջին հատորը գիտական լուրջ հայտ է, նորանոր արխիվային փաստաթղթերի և քիչ ծանոթ և անծանոթ հայազիտական նյութի կարևոր մի սկզբնաղբյուր: Լիահույս

ենք, որ այն շարունակելու է իր ուղին՝ նյութերի և հեղինակների աշխարհագրության է՛լ ավելի մեծ ընդգրկմամբ ու հատկապես հայաստանցիների առավել գործուն մասնակցությամբ:

ԱՐԾՎԻ Հ. ԲԱԽՉԻՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, ք.գ.թ.
artsvi@yahoo.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ Ս. ԹՈՒՄԱԹՅԱՆ

Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը, բնություն և բներևույթներ..... 3

ԱՇՈՏ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայոց պետականության հին և միջնադարյան պատմափուլերը.....33

ՄԱՋԻԴ Վ. ԿԱՐԻՄԻ

Նախճավան տեղանունը պարսկական և արաբական պատմա-գրական աղբյուրներում.....48

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի շիրակացիագիտական պրպտումները (ծննդյան 95-ամյակի առթիվ).....70

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

«Ջամբոլը»՝ Էջմիածնի կաթողիկոսության և Կոստանդնուպոլսի պատրիարքության աղերսների պատմության սկզբնաղբյուր և պատմագիտական երկ (XVIII դ.)..... 88

ՀԱՍՄԻՎ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու նամակագրությունը հնդկահայ գործիչների հետ (XVIII դ. վերջ).....109

ՎԱՀԱՆ Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Անկախ պետությունների հնարավոր առաջացման
գաղափարի ակտիվացումը Բրեստ-Լիտովսկի
պայմանագրի համատեքստում126

ԷՂԻՏԱ Վ. ԴԱԴԱՅԱՆ

Հայ-պարսկական միջպետական հարաբերություն-
ների պատմությունից (1918-1920 թթ.).....153

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ՀՀ և ՌԴ միջև կրթամշակութային կապերի զարգա-
ցումը 1991-2008 թթ..... 165

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՄՏԵՓԱՆ Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Փաստաթղթեր Հովսեփ Օրբելիի կենսագրությունից
(ծննդյան 135-ամյակի առթիվ) 188

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԾՎԻ Հ. ԲԱԽՉԻՆՅԱՆ

Հայկական ծագումնաբանություն Ա, «Ստարայա
բասմաննայա», Մոսկվա-Երևան, 2022, 304 էջ.....195

СОДЕРЖАНИЕ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

КАРЕН С. ТОХАТЯН

Содержание петроглифов Армении: природа и природные явления..... 3

АШОТ А. МЕЛКОНЯН

Древний и средневековый исторические периоды армянской государственности.....33

МАДЖИД В. КАРИМИ

Топоним Нахчаван в персидских и арабских историко-литературных источниках..... 48

АРТАШЕС И. ШАХНАЗАРЯН

Исследования академика Грача Бартикяна по ширакациведению (к 95-летию со дня рождения).....70

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

АЛЬБЕРТ А. ХАРАТЯН

“Джамбр” – первоисточник истории взаимоотношений Эчмиадзинского католикосата и патриархата Константинопольских армян (XVIII в.)88

АСМИК О. АМИРДЖАНЯН

Переписка Гукаса Карнеци с армянами в Индии (конец XVIII в.).....109

ВААН Г. МЕЛИКЯН

Активизация идеи о вероятном создании независимых государств в контексте Брест-Литовского договора126

ЕДИТА В. ДАДАЯН

Из истории армяно-персидских межгосударственных отношений (1918-1920 гг.).....153

РУБЕН Л. АЗИЗБЕКЯН

Развитие культурно-образовательных связей между РА и РФ в 1991-2008 гг..... 165

ПУБЛИКАЦИЯ

СТЕПАН Г. ГАРИБДЖАНЫН

Документы из биографии Иосифа Орбели (к 135-летию со дня рождения Иосифа Орбели)188

РЕЦЕНЗИЯ

АРЦВИ Г. БАХЧИНЯН

Армянская генеология: научный альманах. Том первый. Москва-Ереван: Старая Басманная, 2022. - 304 с.....195

CONTENT

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

KAREN S. TOKHATYAN

The content of petroglyphs of Armenia: nature and natural phenomena.....3

ASHOT A. MELKONYAN

The ancient and medieval stages of Armenian statehood.....33

MAJID V. KARIMI

The Toponym Nakhjavan in Persian and Arabic Historical-Literary Sources48

ARTASHES I. SHAHNAZARYAN

Academician Hrach Bartikyan's searchings on Shirakatsi studies (on the occasion of his 96th birth anniversary).....70

MODERN AND CONTEMPORARY HISTORY

ALBERT A. KHARATYAN

“Jambr” – the primary source of the history of relations between the Catholicosate of Etchmiadzin and the Patriarchate of Constantinople Armenians (XVIII century)88

HASMK H. AMIRJANYAN

The correspondence of Ghukas Karnetsi and Indian Armenians (the end of the 18th century).....109

VAHAN H. MELIQYAN

Activation of the idea of the possible creation of independent states in the context of the Brest-Litovsk Treaty126

EDITA V. DADAYAN

From the History of Armenian-Persian Inter-State Relations (1918-1920)..... 153

RUBEN L. AZIZBEKYAN

The development of cultural and educational ties between the Republic of Armenia and the Russian Federation in 1991-2008.....165

PUBLICATION

STEPAN G. GHARIBJANYAN

Documents from the biography of Joseph Orbeli (to the 135 th birth anniversary of Joseph Orbeli).....188

REVIEW

ARTSVI H. BAKHCHINYAN

Armenian Genealogy I, «Staraya Basmannaya», Moscow-Yerevan, 2022, 304 p.....195

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(SCIENTIFIC JOURNAL)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

1 (24). 2022

Ամփոփումների խմբագրումը՝ Շ. Խոյանյանի
Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100, ստորագրված է տպագրության 27. 06.2022թ.

Тираж-100, подписано к печати 27.06.2022 г.

Printed copies – 100, Signed for printing 27.06.2022

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/>

Официальный сайт журнала: <http://academhistory.am/>

Official site of the journal: <http://academhistory.am/>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ hayotspatmutyanhartser@gmail.com

Электронная почта журнала: hayotspatmutyanhartser@gmail.com

E-mail of the journal: hayotspatmutyanhartser@gmail.com

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4, հեռ.
0(10)529263

Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4, тел. 0(10)529263

Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan Ave., 24/4, tel.

0(10)529263